




ԶՄԻԱԾԻՆ





ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՒՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

ԷԻՆԿՐԻՄՈՍԻՐ - ՄԻՐԻՐ

1990





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական հեռագիրը Միխայիլ Գոր- բաչովին՝ ԽՍՀՄ արեգիդենտ ընտրվելու առթիվ	3
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական հեռագիրը Անատոլի Լուկ- յանովին՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ ընտրվելու առթիվ	4
Հաղորդագրություն	5
Հանգիստ Ամենապատիվ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտեյանի՝ Պատրիարքին Երուսաղեմի հայոց	7
Հանգիստ Ամենապատիվ Տ. Ծնորհք արքեպիսկոպոս Գաղուսյանի՝ Պատրիարքին Թուրքիայի հայոց	12
Սրբոց Վարդանանց սոցալատարությունը և Վեհափառ Հայրապետի անվանակո- չության տարեդարձը Մայր Աթոռում	21
Պատմության շրջադարձի առնավատչյան	29
Գործունեության մոր ոլորտ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու առաջ	36
Քահանայական ձեռնադրություն Երևանի Ս. Սարգիս եկեղեցում	44
Տ. Հովնան քահանա Մաթևոսյան	46
Տ. Թադևոս արեղյա Ջիրեկյան	47
Քահանայական ձեռնադրություն Երևանի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցում	48
Տ. Զարեմ քահանա Մանուրյան	49
Տ. Տիրան քահանա Առուշանյան	50
ԽՍՀՄ ԱԹՈՒՈՒՄ—Եկեղեցական բեմ, լուրեր	51
ՀԱՅԿՈՐ ԾԱՅՐԱԳՈՒԹՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԸՆԾՑԱՆ—Մարտին Լութերի գլխավոր գրությունները Եկեղեցու բարեկարգության վերաբերյալ	58
ԴՈՒՏ. Տ. ՆԵՐՍԵՍ ՔԸՆ. ՆԵՐՍԵՍՅԱՆ—Պետրոս առաքյալի ճառերի շարքը Գործք Առաքելոցում	85
ԱՐՏԱՇԵՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ—Էջմիածնի ավետարանը	74
«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата	79
«Etchmiadzine» official monthly of Holy Etchmiadzin	80
«Etchmiadzine» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine	81

Խմբագիր՝ ԵՐՎԱՆԴԱՆԻ ՄԵԼԻՔՈՆՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՄԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS


Հանձնված է արտադրության 10.05.1990 թ.: Ստորագրված է տպագրության 2.07.1990 թ.:
Տպագրական 5/8 մամուլ+2 ներդիր, թուղթ 80×84/8, պատվեր 571:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1990 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՒՑ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՄԻԽԱՅԻԼ ԳՈՐԲԱՉՈՎԻՆ՝
ԽՍՀՄ ՊՐԵՋԻԴԵՆՏ ԸՆՏՐՎԵԼՈՒ ԱՌԹԻՎ

ՄԻԽԱՅԻԼ ԳՈՐԲԱՉՈՎԻՆ
ԽՍՀՄ ՊՐԵՋԻԴԵՆՏԻՆ

Մոսկվա, Կրեմլ

Հանուն Հայ Առաքելական Եկեղեցու և Հայաստանի և արտասահմանի հայ հավատացյալ ժողովրդի ուրախությամբ ողջունում ենք Ձեր ընտրությունը որպես պրեզիդենտ Խորհրդային Միության:

Մաղթում ենք Ձեզ անսպառ եռանդ ու մշտանորոգ ներշնչանքներ ի կատար ածելու համար Ձեր վերանորոգիչ ծրագրերը և լուսավոր հույսերը՝ ամրապնդում և բարգավաճում Խորհրդային բազմազգ Միության ընտանիքում համերաշխված ու եղբայրացած, ազգությունների ինքնորոշման արդար հիմքի վրա:

Հաճեցեք ընդունել Սուրբ գրական Արարատի փեշերից և Սուրբ Էջմիածնից Մեր ջերմ հարգանքը և բարի մաղթանքը՝ Ձեր հայրենակներ գործերի հաջողությամբ պսակման համար:

Օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. Էջմիածին,
19 Մարտի 1990 թ.



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՆԱՏՈՒԼԻ ԼՈՒԿՅԱՆՈՎԻՆ
ԽԱՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
ԸՆՏՐՎԵԼՈՒ ԱՌԹՎ

ԱՆԱՏՈՒԼԻ ԼՈՒԿՅԱՆՈՎԻՆ
ԽԱՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Մոսկվա, Կրեմլ

Ուրախությամբ ողջունում ենք Ձեր ընտրությունը իբրև նախագահի
ԽԱՀՄ Գերագույն խորհրդի և մաղթում Ձեզ մշտապես կորով և լավատե-
սության ոգի, որպեսզի Ձեր բարձր դիրքից Ձեր մեծ նպատառը ի գործ դնեք
ի ամրապնդում և ծաղկում խորհրդային բազմազգ Միության խաղաղու-
թյան և համերաշխ գործակցության ճանապարհով:

Թույլ տվեք Ձեզ շնորհավորել համուն Հայ Առաքելական Եկեղեցու և
հայ հավատացյալ ժողովրդի, մաղթելով Ձեզ տոկուն քաջատղջություն և
լիակատար հաջողություն Ձեր հայրենանվեր ծրագրերի իրագործման:
Օրհնությամբ՝


ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,

19 Մարտի 1980 թ.





ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռիս Դիվանը ուրախությամբ հաղորդում է ի գիտություն մեր Սուրբ Եկեղեցու և հավատացյալ ժողովրդի, որ 1988 և 1989 տարիների ընթացքում վերաբացված են հետևյալ հայկական վանքերն ու եկեղեցիները Հայաստանում և Արցախում և հանձնված եկեղեցական իշխանության լուսալեւու որպես ոխատանդիներ ու աղոթքի տներ:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. Տաթևի վանք—Գորիսի շրջան
2. Մակարավանք—Իջևանի շրջան
3. Հաղբաղի վանք—Թումանյանի շրջան
4. Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի—Գորիսի շրջան
5. Ս. Հռիփսիմե եկեղեցի—Ղափանի շրջան
6. Ս. Աստվածածին եկեղեցի—Մեղրիի շրջան
7. Ս. Մարտիրոս եկեղեցի—Վալքի շրջան
8. Ս. Աստվածածին եկեղեցի—Բամբակաշատ, Հոկտեմբերյանի շրջան
9. Ս. Աստվածածին եկեղեցի—Մարտունու շրջան
10. Ս. Աստվածածին եկեղեցի—Թալինի շրջան
11. Ս. Սարգիս եկեղեցի—Նոյեմբերյանի շրջան
12. Ս. Մինաս եկեղեցի՝ Լեռնանցքում—Սպիտակի շրջան
13. Ս. Նշան եկեղեցի—Եղվարդում
14. Ս. Թադևոս եկեղեցի՝ Դդմաշենում—Սևանի շրջան
15. Ս. Աստվածածին եկեղեցի՝ Վերին Արտաշատում—Արտաշատի շրջան
16. Ս. Առաքելոց վանք—Սևանում
17. Ս. Հակոբ եկեղեցի—Քանաքեռում
18. Հաղարծին վանք—Դիլիջանում
19. Արարատ գյուղի Ս. Մարտիրոս եկեղեցի—Արարատի շրջան


ԱՐՑԱՆՈՒՄ

20. Ամարասի վանք՝ Ս. Գրիգորիս—Արարատի շրջան
21. Ս. Հովհաննես Մկրտիչ՝ Գանձասարի վանք—Մարդակերտի շրջան

22. Ս. Աստվածածին՝ Խնածախ—Ստեփանակերտում
23. Ս. Աստվածածին՝ Հորաթաղ—Մարդակերտում
24. Սպիտակ Ս. Խաչ եկեղեցի՝ Վանք գյուղ—Հաղրութի շրջան
25. Ս. Հարություն եկեղեցի—Հաղրութում

Ս. Էջմիածին,
28 Փետրվարի 1990 թ.

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՐԻ





ՀԱՆԳԻՍՏ

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ՝
ՊԱՏՐԻԱՐԿԻՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՅ

1990 թվականի փետրվարի 2-ին իր մահկանացուն կնքեց Երուսաղեմի Ամենապատիվ Պատրիարք Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը: Հանկարծառաւ մահը ընդհատեց եռանդուն հոգևորականի, բեղմնավոր գրողի և կենսունակ եկեղեցական գործչի կյանքը:

Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը ծնվել է 1910 թվականին, պատմական Հայաստանի Վասպուրական աշխարհի Ռշտունյաց գավառի Կայնամիրան գյուղում, գյուղապետի ընտանիքում: Ավագանի անունն է Եղիազար: 1915 դժնդակ թվականը ծնողներին և համագյուղացիներին նետում է Պարսկաստան: Քիչ անց Եղիազարի ընտանիքը վերադառնում է Վան, բայց դժոխային պայմանները ստիպում են ընդմիջո հեռանալ հայրենի եզերքից և ապաստան գտնել Միջագետքում՝ Բագուպա քաղաքում: Այստեղ էլ մանուկ եղիազարը մտնում է Նահր-էլ Օմարի որբանոցը մինչև 1922 թ.:

Նույն թվականին ՀԲԸՄ նախաձեռնությամբ բազմահազար որբեր Միջագետքից փոխադրվում են Երուսաղեմ՝ Արարատյան որբանոց: Ուսումնասեր Եղիազարը 1924 թվականին ընդունվում է Սրբոց Հակոբյանց վանքի Ժառանգավորաց դպրոցը:

1928 թ. սարկավագ է ձեռնադրվում Եղիշե Դուրյան Պատրիարքի ձեռամբ, 1932 թ. կուսակրոն քահանա՝ ձեռամբ Թորգոմ Գուշակյան Պատրիարքի:

1933—36 թվականներին կատարում է Պատրիարքի գավազանակրի և անձնական քարտուղարի պաշտոն:

1937—45 թվականներին՝ ստանձնում է Երուսաղեմի Ժառանգավորացի և Ընծայարանի տեսչի պատասխանատու պաշտոնը:

1944 թվականին նրան է վստահվում Երուսաղեմի վանքի ամենապատվավոր պաշտոններից մեկը՝ նշանակվում է Սրբոց Հակոբյանց վանքի լուսարարապետ:



Երջանկաբիշատակ Տ. Նղիշև Պատրիարք Տերտերյան

1949 թ. Կյուրեղ Պատրիարքի մահից հետո միաբանական ժողովը նրան ընտրում է պատրիարքական տեղապահ մինչև 1956 թ.:

1951 թ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, ձեռամբ երջանկահիշատակ Գեվորգ Զ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, օծվում է եպիսկոպոս, ապա և ստանում է արքեպիսկոպոսի աստիճան:

1932—54 թթ. քեղուն գործունեություն է ծավալում որպես վանքի «Սին» ամսագրի խմբագրապետ:

1960 թ. հունիսին Երուսաղեմի միաբանական ժողովը Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանին ընտրում է Պատրիարք Երուսաղեմի հայոց Առաքելական Աթոռի:

Ամենապատիվ Տ. Եղիշե Պատրիարք Տերտերյանի 30-ամյա գահակալության շրջանը եղավ արդյունավետ գործունեության, տագնապի ու պեկոծության իրերահաջորդ մի ժամանակաշրջան:

Երկար և բեղմնավոր է Եղիշե Պատրիարք Տերտերյանի գրական ուղին: ԵՂԻՎԱՐԻ ծածկանունով ստորագրված են չափածո և արձակ բազմաթիվ ժողովածուներ. «Մագդաղինեն մեղրամոմե», «Խորտակման գիշերներ», «Սկեղդամա» խոհական ժողովածուները, «Սուրբ Մեսրոպ» հայաշունչ պոեմը, ծննդավայրի և հայրենիքի կարոտով տոշորուն «Հայրենական» և այլ բանաստեղծական շարքեր: Բազմաթվանդակ է արձակը. բանասիրական-գիտական «Հայաստանյայց Եկեղեցին երեկ և այսօր», «Նարեկը հայ գրականության մեջ» և այլ բազմաթիվ հոդվածներ, կրոնաշունչ «Լերան վրայեն երանիներ» և մարդու փրկության համար աշխարհ եկած «ՊԱՆԴՈՒԽՍ ԱՍՏՈՒԾՈՒ» Քրիստոսի հոգեկան տագնապները մարմնավորող «Օտարականը» արձակ պոեմը: Եղիշե Պատրիարքի գեղարվեստական նվաճումներից պետք է համարել Ամենայն Հայոց Վազգեն Ա Կաթողիկոսի մտահղացմամբ ստեղծված «Լուսամատյան» աստվածաշնչական պատումները: Եղիշե Պատրիարքի գրականությունը, արձակ թե չափածո, ունի խիստ անհատական դրոշմ՝ հոգևոր դրոշմ. մտածողությունը պատկերավոր է, երբեմն պատկերների շղթան լեռնապարի պես բազմազան է, լեզուն հարուստ է ու ինքնատիպ, երևակայությունը՝ վառ ու գունագեղ:

Ամենապատիվ Պատրիարքի թաղմանը մասնակցելու համար փետրվարի 7-ին Երուսաղեմ մեկնեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալանը՝ որպես ներկայացուցիչ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի:

Փետրվարի 10-ին հոգեկույս Արքազան Հոր մարմինը գետեղվեց Արքոց Հակոբյանց վանքի Ա. Գլխադիր եկեղեցում:

Փետրվարի 11-ին տեղի ունեցավ արքազան պատարագ և վերջին օծման արարողություն: Պատարագիչն էր Տ. Ներսես արքեպս. Պոզապալանը: Վերջին օծումը կատարեց Արքոց Հակոբյանց վանքի լուսարարապետ Տ. Գարեգին արքեպս. Գազանճյանը: Հընթացս պատարագի պատարագիչ արքազանը ընթերցեց Նորին Արքություն Վազգեն Ա Կաթողիկոսի դամբանական խոսքը, որը տեղում թարգմանվեց անգլերենի:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ
ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ԽՈՍԷԸ

Սգակիր հոգևոր եղբայրներ Մեր, ագակիր ժողովուրդ.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն, վշտալի սրտով կերենք Մեր աղոթքը առ Աստված, հոգւոյն համար Յ. Եղիշէ արքեպիսկոպոսի, Սրբազան Պատրիարքին հայոց՝ Երուսաղէմի Առաքելական Սուրբ Աթոռի, որ իր աչքերը փակեց ու հոգին ավանդեց լանժամանակ կերպով:

Սուգի մեջ է Հայաստանայց ամբողջ Եկեղեցին, սուգի մեջ ենք բոլորս:

Հոգւոյն հանգուցելոյն, Քրիստոս Աստված, արա հանգիստ և խաղաղութուն:

Ի Տեղ հանգուցյալ Եղիշէ Սրբազան Պատրիարքի կյանքը, յոր պատանի հասակէն սկսյալ և վերջին երեսուն տարիներուն իբրև գահակալը այս Սուրբ Աթոռին, եղած է տեսալիս լանժացողոյ նվիրում, Երուսաղէմի Սրբոց Հակոբյանց խաչ պատմական հաստատութեան, որուն ծառայած է հոգևոր տեսիլքով, պողպատյա կողովով ու Աղթամարյան հաշու ոգիով: Իր հզոր իմացականությամբ, իր բարոյ ու բազմակողմ անձնավորությամբ, իր մտքի ու սրտի փոթորկումներով, երբեմն հակառակն որսկորումներով, սակայն լան մնացած է միշտ մեր օրերու Հայ Եկեղեցւոյ լանժատիրական դէմքը, Սիոնի բարձունքէն լանբաժան:

Եղիշէ Պատրիարք, Եղիվարդ գրչի անունով, իր բանաստեղծական վաղերական տաղանդով մանավանդ, փայտակեց հայ գրական կյանքի անդաստանէն ներս «Մագդաղիկնէն մեղրամոմե» գործէն սկսյալ մինչև «Օտարական»-ը, գլուխործոցը իր վաստակին, որով պիտի պահէ իր ուրույն տեղը հայ գրականության երկնակամարի տակ:

Այս աղոթքի լույս պահում, երբ մեր Պատրիարք եղբոր հոգին կբաժնւի այս անցավոր աշխարհէն և մեզմէ բոլորէս, իր կուրծքին տակ ծրարած հեքիաթը իր ալեկոծ ապրումներուն, իր պարանքներուն, իր կիրքերուն, մենք՝ վկաները իր օրերուն, իր հետ միասին կփակենք մատյանը իր երկրային կյանքին ու կյունք: Ու կաղոթենք, որ հարին Աստված ողորմութեամբ ու քաղցրությամբ ընդունի անոր տագնապալ հոգին, հավերժական խաղաղության աշխարհի բարձունքներուն մեջ:

Պարտք կզգանք յառ Մեր մխիթարական խոսքը ուղղելու Սրբոց Հակոբյանց միաբանության զինվորյալ անդամներուն, որոնք վստահ ենք, թէ այս սուգի և աղոթքի ժամին համակված յեն սուրբ զգացումներով, մնալու ուխտապահ և նվիրյալ սպասավորները այս առաքելական Աթոռին, որ Քրիստոսակոխ Սուրբ Տեղաց մեջ, քազմադարյան վկան է հայ ժողովուրդի բրիստոնեական հավատքին, աշուններէն մին Հայաստանայց մեր Մայր Եկեղեցիին, և պարծանքը մեր հավատավոր ազգին:

Թող հարձրյալն Աստված միշտ լուսավոր պահէ հիշատակը հանգուցյալ Եղիշէ Սրբազան Պատրիարքի և մեա միշտ օգնական ու մարտակից Սրբոց Հակոբյանց միաբանության, որպեսզի մոտ ապագային վերանա սգո քողը Սուրբ Աթոռի վրայէն և լսիզը առնէ հոգևոր շինության ու ծաղկումի նոր շրջան մը աստվածասեր ու խզգանվեր իրագործումներու:

Եվ արդ, սիրեցալ եղբարք Մեր, վաղվան օրէն սկսյալ, սիրով միաբանած, ձեռք-ձեռքի ու սիրտ-սրտի տված, փոխադարձ թարգանքով բարձր պահեցեք Սուրբ Գլխադիրի հավատքի ջահը, որպեսզի ան առավել ճառա-

գայթե մեր Մայր Եկեղեցվո՛ւ ու համայն մեր հավատացյալ հոտին վրա: Մեր օրհնությունը և հաջողության մաղթանքը ձեզի՛ կամենուղ:

«Յեղբայրսիրության առ միմեանս գթածք. ի պատիւ զմիմեամբք ելանել. ի փոյթ՝ մի՛ վեհերոտք. հոգով եռացեք, Տեառն ծառայեցեք, Յուսով խնդացեք. նեղութեան համբերեցեք. աղօթից ստեպ կացեք» (Հռոմ. ԺԲ 10—12): Ամեն:


Ապա սրբազան հայրը խոսեց հավուր պատշաճի քարոզ, ուր վեր հանվեց Ամենապատիվ Պատրիարքի եկեղեցական, հասարակական ու գրական բեղուն գործունեությունը:

Հանդիսավոր արարողությանը ներկա էին քույր Եկեղեցիների բարձրաստիճան ներկայացուցիչներ, զանազան երկրների հյուպատոսներ, Իսրայելի կրոնական գործերի նախարարը, Երուսաղեմի քաղաքագլուխը, պետական այլ ներկայացուցիչներ, պաշտոնական հյուրեր և հավատացյալ հոծ բազմություն:

Հավարտ սուրբ պատարագի Տ. Եղիշե Պատրիարքի մարմինը բազմամարդ թափորով տարվեց Երուսաղեմի հայոց Ա. Փրկիչ վանքի միաբանական գերեզմանատուն և հանդիսավոր թաղմանական արարողությամբ հանձնվեց հողին:

«Յադիտենական յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:





ՀԱՆԳԻՍՏ

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԾՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԳԱԼՈՒՍՏՅԱՆԻ՝ ՊԱՏՐԻԱՐԷԻՆ ԹՈՒՐԿԻԱՅԻ ՀԱՅՈՑ

1990 թվականի մարտի 6-ին ցնցում ապրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և հատկապես Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը: Ս. Էջմիածնի Վեհաքանի սանդղոցների վրա հավանական գլխապտույտից հետո թավազորը ընկել էր Թուրքիայի հայոց Պատրիարք ծերունազարդ Ամենապատիվ Տ. Ծնորիք արքեպիսկոպոս Գալուստյանը:

Դաժան դիպվածը ճակատագրական եղավ և մարտի 7-ին Ամենապատիվ Սրբազան Հայրը ավանդեց հոգին: Նույն օրը Ս. Էջմիածնի Մայր տաճարի և Ստամբուլի բոլոր հայկական եկեղեցիների զանգերը տխուր դռնաջելով գուժեցին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու վերջին 30 տարիների ամենապայծառ գործիչներից մեկի տխուր և անակնկալ վախճանը: Նորին Ամենապատվություն Պատրիարք Հայրը, ընդառաջելով Վեհափառ Հայրապետի հրավերին, եկել էր մասնակցելու Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի տոնակատարության ճախապատրաստման խորհրդակցություններին: Հանգուցյալ Սրբազանը միշտ Վեհափառ Հայրապետի կողքին էր՝ օժանդակելու Նորին Աթոռյանը՝ լուծելու Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու առաջ ծառայած խնդիրները: Ամենապատիվ Սրբազանը Մայր Աթոռի ցանկալի հյուրն էր, որովհետև հետևողական գործուրանք էր տաժում ճակատ Մայր Աթոռի երիտասարդ միաբանների ձկատմամբ, իր հայրական խորհուրդներով օգնելով նրանց ավելի արդյունավետ իրագործել իրենց ծառայությունը եկեղեցում և ժողովրդի մեջ:

Պոլսո Պատրիարքության 82-րդ Պատրիարքը ծնվել է Եղեկատի շրջ-



Երջանկաբիշատակ, Ս. Յնորիք Պատրիարք Գալուստյան

ջանի Իլյոն գյուղում ունեւոր գյուղացու ընտանիքում: Ավագանի անունն է Լիդան:

1915 թվականի Մեծ եղեռնի օրերին զոհվում է հորից:

1922-ին ինճաւա Արշակը դրվում է Թալասի ամերիկյան որբանոց: Այստեղ էլ սկսում է իր ուսումը: Նույն տարում տեղափոխվում է Լիբանանի որբանոցներից մեկը, որը շուտով ցրվում է: Փոքրիկ Արշակը տեղափոխվում է որբանոցից որբանոց, մինչև որ 1927-ին որպէս ջանաւեր աշակերտ տարվում է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի Ժառանգավորաց դպրեւանքը:

1932-ին ընթերցասեր և գեղանկարիչ Արշակը ձեռնադրվում է սարկավագ, իսկ 1935-ին՝ կուսակրոն քահանա: Դառնում է ուսուցիչ և Ժառանգավորացի տեսուչ: 1937-ին նշանակվում է Սրբոց Հակոբյանցի տպարանի տնօրեն և փոխվանքագիր «Սիոն» պաշտոնագրերի: Պաշտպանում է վարդապետական թեզը և ստանում վարդապետական աստիճան: Ընտրվում է Երուսաղեմի պատրիարքական Աթոռի Տնօրեն Ժողովի անդամ և Հայֆա քաղաքի հոգևոր հովիվ:

1941—44 թթ. վարում է Ամթիլիասի դպրեւանքի տեսչի պաշտոնը:

1945-ին կարգվում է Լոնդոնի հոգևոր հովիվ:

1948-ին պաշտոնավարում է ԱՄՆ-ում, դառնում **Ծայրագույն վարդապետ** և 1952-ին ընտրվում Կալիֆոռնիայի առաջնորդ՝ ծավալելով եկեղեցաշինական մեծ աշխատանք:

1955-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մասնակցում է Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության, և նույն տարին եպիսկոպոս է ձեռնադրվում:

1957-ին նշանակվում է Երուսաղեմի վանքի լուսարարապետ, իսկ 1961-ին ընտրվում է Թուրքիայի հայոց Պատրիարք:

Երեսնամյա պատրիարքական գործունեության ընթացքում Ամենապատիվ Ս. Ընորհք Պատրիարքը ապրեց որպէս տիպար հոգևորական, ծառայատեր հոգևոր հովիվ, հայրենասեր առաջնորդ և մարդասեր: Խմաստնաբար հաղթահարեց հարուցված ներքին և արտաքին դժվարությունները, միշտ եղավ իր ժողովրդի կողքին:

Ամենապատիվ Սրբազանը ջանք ու եռանդ չխնայեց կազմակերպելու հայ երեխաների հայեցի ուսումնառությունը, նրա ջանքերով վերանորոգվեցին բազմաթիվ վարժարաններ, պատրաստվեցին դասագրքեր: Վերականգնվեց Ս. Խաչ դպրեւանքը, որն սկսեց Կ. Պոլսի և շրջանների եկեղեցիները ապահովել սպասարկող հոգևորականներով: Տնտեսական հմուտ քաղաքականության շնորհիվ Պատրիարքարանը հնարավորություն ստացավ Արևմտյան Հայաստանի գավառներից եկող հայ գաղթականների նյութական օգնություն կազմակերպելու:

Նրա միտքը միշտ մնաց պայծառ և գրիչը՝ քեղմնավոր, հեղինակելու բազմաթիվ եկեղեցական, աստվածաբանական, բանասիրական, գրական և այլ հոդվածներ ու գրքեր: Ծավալեց մաս լայն թարգմանական աշխատանք:

Սրբազան Պատրիարքի սիրտը բաբախեց իր Մայր Հայրենիքի սրտին համահունչ: Նա մտավ իր ժողովրդի մեջ և եղավ իր ժողովրդի հետ տագնապի և հաղթանակի, վշտի և ուրախության պահերին:

Ամենապատիվ Ս. Ընորհք արքեպիսկոպոսը մեծապես բարձրացրեց

Կ. Պոլտ Պատրիարքարանի հեղինակությունը, շուտով դարձավ քրիստոնեական աշխարհի ճանաչված և հարգված դեմքերից մեկը:

Տ. Ծնորհք Պատրիարք Գալուստյանը միշտ մնաց հավատարիմ զավակը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և եղավ գործակից աջ բազուկը Ամենայն Հայոց Վազգեն Ա. Կաթողիկոսի՝ հետևողականորեն իր ուժերը ի սպաս դնելով ի շինություն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և ի բարգավաճումն հայ ժողովրդի:

1990 թվականի մարտի 11-ին, կիրակի օրը, Ս. Էջմիածնի Մայր տաճարում, ներկայությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ ս. պատարագ և հոգեհանգստյան հանդիսավոր արարողություն թուրքիայի հայոց Ամենապատիվ Պատրիարք Տ. Ծնորհք արքեպիսկոպոս Գալուստյանի հոգու հանգստյան համար: Հանդիսավոր արարողությանը ներկա էին՝

- Տ. Հուսիկ արքեպս. Սանթրուրյան—Լուսարարապետ Մայր տաճարի.
- Տ. Ներսես արքեպս. Պոզապալյան—Դիվանապետ Կաթողիկոսարանի.
- Տ. Նարեկ եպս. Ծաքարյան—Առաջնորդ Ծիրակի թեմի.
- Տ. Գևորգ եպս. Սերաբյարյան—Առաջնորդ Վրաստանի հայոց թեմի.
- Տ. Գարեգին եպս. Ներսիսյան—Առաջնորդական փոխանորդ Արարատյան հայրապետական թեմի.
- Տ. Անանիա եպս. Արաբաջյան—Տեսուչ հոգևոր ճեմարանի:

Հայաստանի հանրապետության կառավարության կողմից՝

Կրոնից նախարար տիար Ստեփան Վարդանյան.

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ տիար Կարլեն Դավաթյան.

Գրողների միության կողմից՝ տիար Լևոն Միրիջանյան.

Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ պրոֆ. Պիոն Հակոբյան, պրոֆ. Հակոբ Փափազյան, դասախոս Պարզև Ծախբալյան:

Ներկա էին նաև Սրբազան Պատրիարքի վախճանումի առիթով Կ. Պոլսից եկած՝

Տ. Արամ վրդ. Արաշյանը.

Տ. Մյուռոն քհն. Այվազյանը:

Ներկա էին Մայր Աթոռի միաբան վարդապետները, քահանաները, սարկավագները, հոգևոր ճեմարանի տաները, Մայր Աթոռի պաշտոնեությունը և հավատացյալ ժողովուրդը:

Օրվա պատարագիչն էր Տ. Նաթան վրդ. Հովհաննիսյանը:

Ամենապատիվ Պատրիարք Հոր կյանքի և կրոնական բեղմնավոր գործունեության մասին գնահատանքի խոսք ասաց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԾՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐԻ
ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՌԹԻՎ

«Յանուն Հօր և Որդու և Հոգու և Սրբոյ, ամեն»:

Քաճաճալք և ժողովորդ հավաքվել ենք այս պահին այս ս. տաճարի կամարների լներքո, խորթելու համար նորոգ հանգուցյալ Տ. Ծնորհք արքեպիսկոպոսի հոգվոյն համար, որ այցելության գալով Մար Աթոռ Ս. Էջմիածին անցյալ կիրակի երեկոյան, ուրախ, լավ տրամադրության մեջ էր, մասնակցելու համար եկեղեցական հարցերի վերաբերյալ մի լայն խորհրդակցություն, որ տեղի պիտի ունենար մեզ մոտ՝ Մար Աթոռում: Նա երկու-շաբթի օր մեզ հետ էր լնույն տրամադրությամբ: Փափագ հայտնեց, որ երեքշաբթի գնա խոնտյալ շրջանները, իր մխիթարանքի խոսքը տանելու մեր վիրավոր ժողովրդին լենինական, Սպիտակ և Կիրովական: Երեքշաբթի առավոտյան կանուխ, ժամը ութին, երբ պետք է իջնէր Վեհարանի երկրորդ հարկից ներքև, դժբախտ, անսպասելի, գրեթե անբացատրելի պատահարով ոտքը սահեց խստիմանների վրա և գլուխն ուժեղ հարված ստացավ մարմարյա աստիճանների վրա: Փոխադրվեց հիվանդանոց, մեր մասնագետ բժշկները Երևանում ամեն ինչ ի գործ դրին, գործողություն կատարելով գանգի վրա: Թեև վիրահատությունը հաջողվեց բժշկական տեսակետից, բայց մի քանի ժամ հետո, անգիտակից վիճակի մեջ խաղաղությամբ իր հոգին ավանդեց:

Ահա, հագվի մի օրվա մեջ, մի առողջ մարդ, մի բարձրաստիճան հոգևորական, գաճաճալք Թուրքիոյ հայոց Պատրիարքական պատմական Աթոռի, բաժանվեց մեզանից և իր ոսկյա կյանքի թելը հանկարծ կտրվեց: Տեր Աստված, ինչքան խնիմանալի են քո ճանապարհները: Ինչքան անիմանալի՝ կյանքի և մահվան ճանապարհները: Այսպիսով մեր Մար Աթոռ Ս. Էջմիածինը, համայն մեր եկեղեցին Հայաստանյայց և համայն մեր հավատացյալ ժողովորդը ի Հաղաստան և ի Սփյուռս աշխարհի ծանր սուգի մեջ է: Եվ իրոք որ ծանր է մեզ համար խաչ վիշտը, մանավանդ որ ձեզի ծանոթ տազնապալի կացությունների մեջ գտնվելով, արդեն իսկ մենք վիրավոր արտերով ենք և այս մեկը գոնե մեզ պետք է խնայվեր: Սակայն պիտի խոնարհվենք երևի ճակատագրի առաջ:

Ծնորհք արքեպիսկոպոս Պալուստյան, տարիքով բավական առաջացած էր, ավելի քան յոթանասուն տարեկան, բայց մարմնով և հոգով քաջառողջ էր, մտքով մանավանդ պայծառ, եռանդով լի և նվիրված իր Աթոռին՝ Թուրքիոյ հայոց եկեղեցիներին, ժողովրդին: Եվ մա ընդհանրապես ապրում էր մեր եկեղեցւոյ տազնապներով, մեր ժողովրդի վիշտերով, մեր եկեղեցւոյ հարցերով: Նա բացառիկ անձնավորություն էր իբրև գիտակ, հմուտ աստվածաբան, լավ ծանոթ մեր եկեղեցւոյ կարգ ու կանոնին, շատ մախանձախնդիր դրանց գործադրման ամենուրեք: Նա մտավորական անձնավորություն էր, բազում հատորներ էր հեղինակել այս վերջին քսան և ավելի տարիների ընթացքում, Քատկապետ կրոնագիտական և աստվածաբանական բովանդակությամբ, որոնք պիտի մնան մնայուն արժեքներ մեր հոգևոր ծառայողների համար, մեր եկեղեցւոյ մանավանդ երիտասարդ սպասավորների համար:

Ծնորհք Պատրիարք ողբերգական և տառապալի կյանք ապրած է առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, տակավին հագվի ծընված, և ձեզ ծանոթ Եղեռնի հետևանքով որբացած, իր որբության տարի-

ները որքանոցների մեջ անցկացրած: Հետո պատանի հասակում, ամուսնով Արշակ, մուտք է գործել Երուսաղեմի հայոց վանքից ներս իբրև աշակերտ և ուսանող, աճեց աճած, մեծացած: Այնտեղ Ս. Հոգու շնորհներով լըցված, Սրբոց Հակոբյանց միաբանության ծոցում՝ Երուսաղեմում, ձեռնադրված է հոգևորական, հետո պատասխանատու պաշտոններ վարած է հոգևոր և կրթական, ապա հովվական կարևոր առաքելությամբ ուղարկվել է մի ժամանակ Անգլիա, այնտեղ էլ իր ուսումը կատարելագործելով աստվածաբանական գծով, ծառայել է նաև երկար տարիներ Ամերիկայի Միացյալ Նահանգներում հայկական եկեղեցական համայնքներում, հետո վերադարձել է Երուսաղեմ և, վերջապես, Աստուծո ռդորմությամբ և ժողովորդի ընտրությամբ Ստամբուլում ընտրվել է Պատրիարք հայոց Թուրքիո, սրանից մոտ երեսուն տարիներ առաջ:

Միլեի հավատացյալներ, ինչպես գիտեք, մեր Եկեղեցին իր պատմական գոյությունը հաստատել է և շարունակել, ունենալով չորս մկրապետական կենտրոններ, մկրապետական Աթոռներ: Առաջինը մեր Քրիստոսահիմն Մայր Աթոռ Ս. Էջմիածինն է, Ամենայն Հայոց Կաթողիկոսության Աթոռը. ըստ մկրապետական կարգի երկրորդ աստիճանի վրա գալիս է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Աթոռը, այժմ հաստատված ի Լիբանան, երրորդ պատմական Աթոռն է Երուսաղեմի հայոց Պատրիարքության Աթոռը, հաստատված 7-րդ դարում, և չորրորդ մկրապետական պատմական Աթոռը ի Կոստանդնուպոլիս, հաստատված ավելի քան 500 տարի առաջ: Ահավասիկ հինգ հարյուր տարիներ շարունակ այդ պատմական մեծ կենտրոնում, ինչպիսին է Կ. Պոլիս քաղաքը, հայոց Պատրիարքությունը դարձր շարունակ եղել է մեր Եկեղեցու պանծալի Աթոռներից մեկը և՛ կրոնական իմաստով, և՛ կրթական-մշակութային իմաստով, և՛ ազգային-հասարակական, մուշիսկ քաղաքական իմաստով: Դրանք, ուր քիչ թե շատ ծանոթ են Կ. Պոլս հայոց պատմության, լավ ծանոթ են այս բոլոր իրողություններն: Ընորհք Սրբազան Պատրիարք հայրը այդ պատմական Աթոռի վրա իր առաքելությունը շարունակեց երկար տարիներ՝ փառավորելով մեր Եկեղեցին և մեր կրոնական հավատքը և փառքով պսակվեց իր ողջ գործունեությունը բոլոր իմաստներով:

Նա նաև անապառ աշխատանքի եռանդ ուներ մինչև վերջին օրը: Կ. Պոլսում նա հանգիստ կյանք չէր ապրում: Տեսապես ծիր աշխատանքի մեջ էր ոչ միայն իր հաճախակի այցելություններով, քարոզչությամբ Ստամբուլի 28 հայ եկեղեցիներին ու թողովրդին, այլ նաև Թուրքիո զավառներում, ուր մնացել են տակավին փոքրաթիվ հայ համայնքներ, այցելում էր հաճախ մինչև հեռուները Թուրքիո տարածքի վրա, մինչև Ադրամար և մինչև Անի:

Ահավասիկ, իրապես մի պաշտառ հոգևոր անձնավորություն, իր անունին ու կոչումին հարազատ մշտապես, որից ճառագայթել է իր շնորհները մեր ողջ Եկեղեցու և ողջ հավատացյալ ժողովրդի վրա:

Մենք այսօր տխուր պարտականությունը ունենք մեր աղոթքներով ուղեկցելու նրա հոգու ճանապարհը դեպի երկինք: Մենք հավատում ենք հավիտենական կյանքին իբրև քրիստոնյաներ, և այդ քրիստոնեական մեծ հույսով է, որ մեր աղոթքները վերառաքում ենք առ Աստված: Թող Տերը ռդորմությամբ և քաղցրությամբ ընդունի իր ծառայի՝ Ընորհք արքեպիսկոպոս Գալուստյանի արդար հոգին և փառավորի երկնքի հավիտենական խաղաղության և լույսերի մեջ: Եվ թող նրա հիշատակը անթառամ մնա



այստեղ՝ երկրի վրա, մեզ մոտ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում և այնտեղ՝ Ստամբուլում, Պատրիարքական Աթոռի և հավատացյալ թուրքահայ ժողովրդի ծոցում:

Տեր Աստված ամենակալ, հիշատակն արդարույն օրհնությամբ եղիցի այժմ և հավիտյան, ամեն:

Մարտի 12-ին, երկուշաբթի առավոտյան, Ս. Ծնորհք Պատրիարքի դագաղը Երևանից տեղափոխվեց Մոսկվա՝ ուղեկցությամբ Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Ս. Ներսես արքեպս. Պողապալյանի և Կ. Պոլսից ժամանած երկու եկեղեցականների: Սրբազան Հոր մարմինը ամփոփող դագաղը դրվեց Մոսկվայի գերեզմանատան Ա. Հարություն հայոց եկեղեցում:

Մարտի 13-ին այստեղ տեղի ունեցավ հանդիսավոր հոգեհանգիստ՝ ի ներկայության Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Ս. Տիրան եպս. Կյուրեղյանի, Ռուս Պրավոսլավ Եկեղեցու ներկայացուցիչ Կիրիլ վարդապետի, ԽՍՀՄ կրոնից խորհրդի ներկայացուցիչ տիար Կուզնեցովի, ի դեմս Հայաստանի ներկայացուցչության՝ տիար Բունիաթյանի, ինչպես նաև Մոսկվայում Թուրքիայի ավագ դեսպան տիար Վոլքան Վուռայի և հավատացյալների հոծ բազմության:

Հանդիսավոր արարողությանը նախագահեց և Ամենապատիվ Պատրիարքի կյանքին ու գործունեությանը նվիրված խոսք ասաց Մայր Աթոռի դիվանապետ Ս. Ներսես արքեպս. Պողապալյանը:

Մարտի 14-ին ինքնաթիռով հանգուցյալ Պատրիարքի դագաղը տեղափոխվեց Ստամբուլ՝ ուղեկցությամբ Ներսես սրբազանի, Արամ վարդապետի և Մյուռոն քահանայի:

Հարյուրավոր հավատացյալներ, համայնքային մարմինների անդամներ և պաշտոնական անձինք եկել էին օդանավակայան՝ դիմավորելու Սրբազան Պատրիարքի անջնչացած մարմինը: Անասելի հուզումի ալիք անցավ ներկյալների հոգիներով, շատերը չկարողացան զսպել արցունքները ի տես մեծ կորստի:

Ապա Նորին Ամենապատվության մարմինը զետեղվեց Կ. Պոլսի հայոց Մայր եկեղեցում, որպեսզի հավատացյալ ժողովուրդը հրաժեշտ առնի իր սիրելի Սրբազանից:

Մարտի 18-ին բազմաթիվ պետական և պաշտոնական հյուրեր և խոռաներում հավատացյալներ լցրել էին Մայր եկեղեցին՝ մասնակցելու հոգելույս Պատրիարք Հոր վերջին օծման և հուղարկավորության արարողություններին:

Ներկա էին Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ներկայացուցիչ՝ Թեհրանի հայոց առաջնորդ Ս. Սրտակ արքեպս. Մամուկյանը, Ռումիհայի և Բուղարիայի հայոց առաջնորդ Ս. Տիրա ր արքեպս. Մարտիրոսյանը, Կա-նադայի հայոց առաջնորդ Ս. Քազգեկ արքեպս. Քեչիշյանը, Երուսաղեմի միաբանության ներկայացուցիչ, Փարիզի հայոց առաջնորդ Ս. Գյուտ արքեպս. Նազգաշյանը, Ավստրալիայի հայոց առաջնորդ Աղան եպս. Պալիկյանը, Իրանի հայոց առաջնորդ Ս. Ավագ եպս. Ասատուրյանը, Վաշիճադոնի կաթողիկոսական պատվիրակ Ս. Բարզեն եպս. Վարժապետյանը, Լիոնի հայոց հոգևոր հովիվ Ս. Տարոն Ծ. վրդ. Ծերեճյանը և այլք:

Ներկա էին նաև քույր Եկեղեցիների պետեր և ծառայողներ:

Օրվա պատարագիչն էր Մայր Աթոռի դիվանապետ, Վեհափառ Հայ-

րապետի ներկայացուցիչ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոգապալյանը: Պատարագի ընթացքում, վերջին օծման պահին, պատարագիչ սրբազանը ընթերցեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի դամբանական խոսքը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա.Ի
ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ԽՈՍՔԸ

Աղոթք, խունկ և լույս ի Տեր հանգուցյալ Տ. Ծնորհք արքեպիսկոպոսի հոգվույն:

Ավաղ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը և համայն Հայաստանյայց Եկեղեցին վերստին սուգի մեջ են գտնվում:

Անապատելի չար մի պատահարով, հանկարծ կտրվեց ոսկյա կյանքի թելը մեր սիրեցյալ եղբոր՝ Ամենապատիվ Տ. Ծնորհք Սրբազան Պատրիարքի:

Ի՞նչ ցավ մեր առաքելական Մայր Եկեղեցվույն:

Ի՞նչ հարված Հայոց Պատրիարքական այս պատմական Աթոռին:

Ի՞նչ կսկիծ մեր սրտերին:

Տեր Աստված, այս մեկը գոնե՝ մեր ազգի համար այս դժվար ժամանակներին, թող խնայվեր մեր Եկեղեցիին, մեր հավատավոր ժողովուրդին, անձնապես Մեզ:

Ամենակալ Տեր, երբեմն մենք մեղավորներս չենք հասկանում Քեզ:

«Ջճանապարհս Քո Տեր ցոյց ինձ և գշտիղս Քո ուտ ինձ: Առաջնորդես ինձ ի ճշմարտութեան քում և ուտ զիս, զի դու ես Աստուած Փրկիչ իմ» (Մատթ. ԻԳ 4—5):

Ի Տեր հանգուցյալ Տեր Ծնորհք արքեպիսկոպոս Գալուստյան, հազիվ աչքերը բացած աշխարհի լույսին, նրա մանկության տարիները անցան աղետալի փոթորիկների միջից և առաջին համաշխարհային պատերազմից հետո որբացած պատանի Արշակ, մուտք գործեց Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց հայոց վանքից ներս, ուր հասակ նետեց ու անց և զորացավ մարմնով ու հոգով, երկնառաք Սուրբ Հոգու շնորհներով, դառնալով գիմվորյալ հոգևոր սպասավորը Երուսաղեմի հայոց Սուրբ Աթոռին, սուրբ ձեռնադրության խորհուրդով, ստանալով, իր հոգևոր բարոյական անձնավորությունը թնորոշող՝ Ծնորհք անունը:

Եվ իրոք, նրա ողջ կյանքը, շնորհների ճառագայթում հանդիսացավ մեր սուրբ Եկեղեցու և մեր ժողովրդի կրոնական կյանքի վրա, սկսած Սըրբոց Հակոբյանց վանքից, մինչև Սնգլիա, Աւերիկայի Միացյալ Նահանգների և վերջին ժոռ երեսուն տարիներում ի Թուրքիա, հայոց Պատրիարքական պատմական Աթոռի վրա:

Մամականդ այստեղ Թուրքիո հայ հավատացյալների ծոցում շոպոռեն ճառագայթեցին նրա հոգու շնորհները, իբրև իմաստուն, քաջակորով պատրիարք, իբրև ժողովրդավեր դատարարական հովիվ, իբրև բազում կրոնական, եկեղեցական ծավալուն գործերի հեղինակ, իբրև մշտաբթուն պաշտպան մեր Եկեղեցու կարգ ու կանոնաց, իբրև հավատարիմ միաբան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Հակառակ բազում մտահոգությանը, երեսուն տարիներ շարունակ այս պատմական Աթոռի վրա աներեր, այժմ լուսաբնակ Պատրիարք Հայրը, մշտապես հոգևոր կենդանության շունչ բաշխեց Միաբնույի հայոց Աղոթքի

Տուներին և հավատացյալներին, մինչև հեռուները Թուրքիո տարածքի վրա գտնվող փոքրաթիվ համայնքներին և ուխտատեղիներին, մինչև Ադրամար, մինչև Անի:

Ծնորհք Սրբազան մեր եղբայրը, ի վերուստ ընտրյալ ու ներշնչյալ մի հոգևոր սպասավոր էր, բարի օրինակ մեզ բոլորիս, մանավանդ մեր Եկեղեցու երիտասարդ ծառայողներին: Երանի՛ նրա հոգուն, երանի՛ նրա վաստակին, երանի՛ նրա երազանքներին: Ափսոս որ այս օրվանից, Թուրքիո մեր աստվածասեր ժողովուրդը և մենք բոլորս պիտի զրկվենք նրա լույսերից: Եվ պիտի կարոտենք անմեղ ժպիտը նրա դեմքի, որ արտացոլում էր նրա արդար սրտի:

Խորհուրդներով լի այս պահին, աղոթում ենք առ ամենողորմն Աստված, որ քաղցրությամբ ընդունի հանգուցյալ Տ. Ծնորհք արքեպիսկոպոսի հոգին հավիտենական խաղաղության լույս աշխարհում: Զի «Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց, առաջին պտուղ մնշեցելոց» (Ա. Կորնթ. ԺԵ 20):

Քրիստոնեական այս մեծ հուշով մխիթարված, աղոթում ենք՝ նաև, որ Տերը անասան պահի Պատրիարքական Աթոռը հայոց Թուրքիո և մոտ ապագային վերացնի սգո քողը նրա վրայից, ընտրությամբ և աթոռակալությամբը հորընտիր գահակալի:

Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից և Հայաստանի հավատացյալ ժողովուրդից վերջին տղջին հանգուցյալ Սրբազան Պատրիարքին և Սուրբ Հոգվո մխիթարություն Հայաստանյայց Եկեղեցվո սգավոր զավակներին ի Թուրքիա:

«Աստուած յուսով լի արասցէ գճեզ ամենայն խնդութեամբ և խաղաղութեամբ, առաւելոյ ձեզ յուսով գօրութեամբ Հոգւոյն Սրբոյ» (Սաղմ. ԺԵ 18):

«Հայեա Տէր քի ծառայա Քո և եղիցի լոյս Տեառն Աստուծոյ ի վերայ մեր» (Սաղմ. ԼԹ 66): Ամեն:

Հավարտ ս. պատարագի հոգելույս Պատրիարքի դազաղը շքեղաշուք թափորով տարվեց Ծիշլիի գերեզմանատուն և հանձնվեց հողին:

Կյանքից հեռացավ անբասիր հոգևորականը, ջանադիր Պատրիարքը, քաջ հովիվն ու ազնիվ հալը:

«Յափտենական յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:





ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ
ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ
ՄԱՅՐ ԱԹՈՒՌԻՍ

Մոտ 1500 տարի է, ինչ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և համայն հայ ժողովուրդը հիշատակում է Վարդանանց հերոսամարտը որպես հայ ոգու հաղթանակի տոն: Թե՛ Մայր հայրենիքում, թե՛ Սփյուռքի տարածքի վրա, Վարդանանց հերոսամարտը նշվում է մեծ հանդիսությամբ՝ պաշարելու և հաղթելու նոր հավատ, նոր լիցք հաղորդելով մեր ժողովրդին:

Այս տարի ևս, փետրվարի 22-ին, մեծ շուքով ու հանդիսությամբ նշվեց Վարդանանց հերոսամարտի տոնը Մայր Աթոռում: Վարդանանց հերոսամարտի հիշատակման օրը, այս տարի ևս, նշվեց նաև Ամենայն Հայոց Կաթողիկոս Ս. Տ. Վազգեն Սուքիեյի անվանակոչության տարեդարձը:

Առաջիկային ժամը 11-ին Մայր տաճարում սկսվեց ա. պատարագը՝ ներկայությամբ Վեհափառ Հայրապետի: Պատարագին էր հոգևոր նեմարանի տեսուչ գերաշնորհ Ս. Անանիա եպս. Արաբաջյանը: Հավարտ պատարագի կատարվեց Հայրապետական Մաղթանք, իսկ Իշման սեղանից ոգեշունչ քարոզ խոսեց պատարագիչ սրբազան հայրը:

Ս. ԱՆԱՆԻԱ ՍՐԱՆԱՆԻ ՔԱՐՈՉԸ
ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԻՑ

«Յանուն Հօր և Որդու և Հոգույն Սրբոյ, ամեն»:

«Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն»:

«Զգիտակցված մահը մահ է, գիտակցը՝ վաճ մահը՝ անմահություն»:

Սիրելի հավատացյալ եղբայրներ և քույրեր, այսօր Ս. Էջմիածնի այս տաճարում հավաքվել ենք տոնելու անմահ հիշատակը Վարդանանց պատերազմի այն անմեղ զոհերի, որոնք հանուն հայրենիքի և հանուն Հիսուսի տվեցին իրենց կյանքը 451 թվականին: Ինչպես շարականն է ասում, «ի մեծի պատերազմին», այսինքն մեծ պատերազմի ժամանակ: Ինչո՞ւ է շարականագիրը ասում «ի մեծի պատերազմին», արդյոք հայ ազգի պատմության մեջ չե՞ն եղել ավելի մեծ պատերազմներ: Հիշենք թեկուզ Արտաշես Ա-ի մղած պատերազմը 180 թ. մ.թ.ա. Մագնեզիայում՝ ընդդեմ հռոմեացիների, երբ Հայաստանը առաջին անգամ ձեռք բերեց իր անկախությունը և դարձավ պետություն: Հիշենք Տիգրան Մեծի մղած մեծ պատերազմները, Արտավազդի և մյուս հայոց թագավորների: Ինչո՞ւ համար է Ավարայրի ճակատամարտը կոչում մեծ: Այն, սիրելի ժողովուրդ, նախ և առաջ մարմնավոր պատերազմ չէր, ինչպես գրում է նույն շարականագիրը, այլ հոգևոր պատերազմ: Այսինքն, մեր ժողովուրդը մղում էր այս պատերազմը, ոչ թե իր մարմնի ազատության, անկախության համար, այլ նաև իր հոգու ազատության: Հոգի ասելով նկատի ունենք հավատքը և կրոնը: Այս իմաստով

451 թ. պատերազմը հայոց պատմության պայծառ էջերից մեկն է: Այն հայ ազգի ոգեպանության արթնացման, արա քրիստոնեական գիտապետության բարձրացման և օտարին ստրուկ չլինելու համար մղված արդար մի պատերազմ էր: Ես չեմ ուզում ստերանաներեն կանգ առնել այդ պատերազմի նկարագրության վրա, դուք բոլոր գիտեք այդ քաջորեն: Բայց կուգե՞նայի մի րոպե կանգ առնել նրա բարոյական արժեքի վրա: Միայն մի խոսք, և ձեզ համար պարզ կլինի, թե ինչ մեծ նշանակություն ունեցավ այդ պատերազմը: Ես ուզում եմ այն տեսանկյունով դիտել, ինչ տեսանկյունով նայում էր այդ պատերազմի վախճանին պարսից զորավարը՝ Մուշկան Նյուսապատուրը: Երիշեն ասում է, որ նա երբ կոխվւմ ավարտվեց, մի րոպե մտածումնքի մեջ ընկավ և հայեց դիակնաբով իր դաշտին ու խորհեց, թե ի՞նչ շահեց նա արդյոք և ի՞նչ կորցրեց: Միշտ է, ֆիզիկական հաղթանակը թվում էր, թե նրա կողմն էր, բայց բարոյապես պարսից զորավարը ընկավ՝ Եւ և ինչ-որ հեռավոր տագնապներ էր գգում իր բանակի և իր պետության համար: Այդ մտածումները նրան չիարեց: Նվարասիի դաշնագիրը, հայերի երեսուն տարվա մղած կռիվ արդյունք, կնքվեց և հայերը տարան իրենց բարոյական ամուր հաղթանակը, ապաքցուցելով, որ Նյուսապատուրը իր կասկածների մեջ ճիշտ էր: 451 թ. պատերազմից հետո հայ ազգը ձեռք բերեց փոքրով մեծին դիմավորելու մի անգգալի, անհասկանալի, բայց աստվածային զգացմունք: Ձեռք բերեց մի հավատ, որ կարելի է նաև պայքարել ու մեռնել, սակայն ժողովրդին առաջնորդել դեպի հաղթանակ: Ասում են, Հայաստանում շատ լեռներ կան, շատ ծայրեր կան: Եթե մտովին պատկերացնենք հայ ազգի պատմությունը, պիտի տեսնենք, որ այդ լեռները այն հայոց քաջերն են, որոնք շարունակեցին Վարդան Մամիկոնյանի գործը, պիտի տեսնենք, որ դա Վահան Մամիկոնյանն է, պիտի տեսնենք, որ դա Սմբատ Ա. հայոց թագավորն է, որ վերականգնեց առաքելների կողմից, կործանված հայոց թագավորությունը, պիտի տեսնենք, որ դա քաջ Աշոտ Երկաթն է և Գևորգ Մարգարեալն է, որոնք կարողացան հրաջրով հաղթանակներ կորզել հզոր բանակից և ապացուցել, որ այնուամենայնիվ մի ծաղկով էլ է գարուն գալիս, պիտի տեսնենք, որ այդ լեռներից է նաև մեր պանծալի Դավիթ Բեկը, և վերջիվերջո, ինչու չէ, նաև այդ լեռներից է մեր քաջ Անդրանիկը,

որը եղավ հայ ազգի մեծագույն պաշտպաններից մեկը:

Այսօր, հայ ազգի այս պանծալի զորավարների, թագավորների կողքին կան նաև պանծալի հեղեղակներ, քաջարի զինվորները՝ Քրիստոսի, որ կողք-կողքի, զենքը ձեռքին, պայքարեցին հայ ազգի ազատության և անկախության համար, ազատության և անկախանքի, երբ սկսած ա.դ. 800-ին՝ 451 թվականից, երբ Ղևոնդ Երեցը զոհեց իր կյանքը, հեղեց իր կարմիր և, ինչպես ասվում է վարդապետարյունը՝ համուն Հայ Եկեղեցու անկախության, համուն Հայ Եկեղեցու կանգնման թյան, համուն Հայ Եկեղեցու անկախության ընդդեմ ուրիշ կողմների: Արդախին եղան նաև հայոց շատ կաթողիկոսներ և հայ հոգևորականներ: Նրանք բռնեցին այդ նույն շատավիղը՝ զոհեցին իրենց անձը, ամեն շատավիղը՝ Հայ Եկեղեցու անկախության և հայ ժողովրդի ազատության: Այսօր մենք այդ պանծալի անուններից կարող ենք հիշատակել Մեծն Ներսես Աշտարակեցուն, որ 1828 թ. զենքը ձեռքին պայքարում էր ընդդեմ պարսիկ բռնակալների՝ Արևելյան Հայաստանի ազատության և անկախության համար: Այսօր մենք կարող ենք այդ պանծալի մարդկանց կողքին հիշել Գևորգ Ե Սուրենյանց կաթողիկոսին և Գարեգին Հովսեփյան արքեպիսկոպոսին, որոնք Սարդարապատի ճակատամարտում հայ ժողովրդին առաջնորդելով տարան դեպի մեծ հաղթանակ և ցույց տվեցին, որ թվական գերակշռությունը դեռևս ոչինչ չի նշանակում հոգու ուժի դեմ:

Այսօր, սիրելի ժողովուրդ, մեզ համար կ' ուրախ օր է, կ' տխուր: Հայ ժողովուրդը ապրում է դժվարին ժամանակներ: Մեր Հայ Եկեղեցին կիսում է այդ դժվարին ժամանակները:

Վեհափառ Հայր, այսօր Ձեր անվանակոչության օրն է: Ձեր այս 35 տարիների կառավարման ընթացքում, որպես Հայոց Հայրապետ, մեր Եկեղեցին, կարելի է ասել, խղճով մի՞նակից բարձրացավ մի այնպիսի ասթուրի, որ համաշխարհային ճշանակություն և ճանաչում ստացավ: Այս 35 տարիների ընթացքում Ձեր տաղանդի և մեծ հեղինակության շնորհիվ Դուք կառողագար բոլոր ազգերին ծանոթացնել Հայ Եկեղեցուն, ներկայացնել այն որպես մի հնագույն, մի ազգասեր Եկեղեցի: Դուք կարողանում եք նաև մեծ լավատեսություն ցուցնել մարդկանց:

Ես հիշում եմ Ձեր այցելությունը Լեհիստան և Սպիտակ, երբ տառնայն հասարակոր հայազներ և աչքեր ուղղված էին դեպի Ձեզ, և նրանց այդ հայացքների և աչքերի մեջ հարցական նշան կար: Ի-

րենց համար էր այդ հարցականը. տոկա՛, թե ընկնվե՛: Եվ Դուք կարողացաք այնպիսի մի մթնոլորտ ստեղծել, որ այդ աչքերը և հայացքները ենթարկվեցին Ձեր լավատեսությանը, իրական լավատեսությանը և հավատացին, որ հայ ազգը պետք է տոկա և պետք է պաշարի և երբեք չպետք է ընկնվի:

Այսօր Ձեր անվանակոչության տոնը համընկել է Ս. Վարդանի տոնին: Եթե ես մի համեմատությամբ պիտի ասեի, որ Վարդան Մամիկոնյանը հայ գեների ասպետն է և հայ պատվի ասպետը, ապա Ձեզ, Վեհափառ Տեր, պիտի համեմատեի նրա հետ, ասելով, որ Դուք հայ հոգու բարձրացնողն եք և հայ երազանքների այն մարտի անդրը, որ կրում է այդ երազանքները: Ես պիտի այս սուրբ օրը մաղթեի Ձեզ երկար տարիների կյանք հանուն Մայր Աթոռի միաբանության և հանուն հոգևոր ճեմարանի, արևշատ օրեր, կապույտ երկինք և խաղաղ ու խաղաղ տարիներ: Դիտի ղեկավար լինի Ձեր գործը, Վեհափառ Տեր, բայց ցանկանում եմ, որպեսզի Դուք Ձեր լավատեսությամբ ոգևորեք ոչ միայն մեր ժողովրդին, այլ նաև մեզ, որպեսզի մենք, գալով Ձեր ետևից, կարողանանք բարձրացնել մեր հայ ազգի ոգին: Ցանկանում եմ Ձեզ, Վեհափառ Տեր, կրկին ու կրկին երկար ու երկար տարիներ և թող այդ տարիները ծառայեն մեր հայ ազգի համար ու տանեն նրան դեպի փրկություն: Ամեն:

Նույն օրը, ժամը 13-ին, Վեհափառի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ Ավարայրի հերոսների հիշատակի ոգեկոչմանը նվիրված հանդիսություն:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Արարատյան, Այունյաց և Ծիրակի թեմերի առաջնորդ սրբազան հայերը, հոգևորականներ, Մայրավանքի պաշտոնեությունն ու աշխատակիցները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, հայրենի մտավորականության ներկայացուցիչներ, հավատացյալներ և այլ հյուրեր:

Հանդիսությանը ներկա էին ՀՅՍՀ Միջնորդների խորհրդին առնթոյն Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ սրբ. Ս. Վարդանյանն ու տեղակալ Ռ. Զարգարյանը:

Հանդիսությունն սկսվեց Վեհափառ Հայրապետի արտասանած «Հայր մեր»-ով: Ամուսնու հնչեց ՀՅՍՀ պետական հիմնը:

Հանդիսության բացման խոսքով հանդես

եկավ հոգևոր ճեմարանի դաստիարակ Ս. Նաթան վրդ. Հովհաննիսյանը.

Ծանր է եղել մեր ազգի՝ հայոց ճակատագիրը: Երկիրը մեր անդնդառատ ոտնատակ է արվել բիրտ ու վայրագ նվաճողների կողմից: Վերջ չեն ունեցել ավարի ու կողոպուտի, ժողովրդի գերեվարման ու բնաջնջման համար ծավալված արյունահեղ պատերազմները: Սակայն հայը ամենաօրհասական պահին երբեք չի խնայել իր կյանքը հայրենիքի ու խղճի ազատության համար, մույնիսկ այն դեպքում, երբ համոզված է եղել, որ ելքը սեփական անձի գոհաբերումն է:

Հայ ժողովրդի կյանքում այդպիսի ճակատագրական պահ էր նաև Վարդանյանքը, որը վճռորոշ դեր ունեցավ ազգիս հետագա գոյության համար: Այն եղավ Ավետարանական առակի ցորենի այն հատիկը, որն «չերկիր անկեալ մեռաւ» և մինչև օրս էլ իր բազում արյունքներն է տալիս:

Հայոց մեծ պատերազմի՝ Ավարայրի հերոսական շուռնչ ու ոգին հայ ժողովրդի համար եղել է և է ազատության ու հայրենասիրության չղճուկն ու հավետ կենդանի խորհրդանշան, ոգևորության անըստ աղբյուր և բարձրագույն օրինակ:

Եվ պատահական չէ, որ ճիշտ երկու տարի առաջ, փետրվարյան այն օրերին, Սր. Վարդանյանք քաջերի հիշատակի ոգեկոչումից մի քանի օր անց էր, որ կարծես թե հայ հոգում հարություն առավ հայրենաճակ վեր ճահատակաց ոգին և ողջ հայ ժողովրդը, թե՛ ի Ղարաբաղ, թե՛ ի Հայաստան և թե՛ ի Սփյուռն աշխարհի, դարձավ մեկ հոգի ու մարմին, ձեռք-ձեռքի տված՝ մեկ բռունցք, մեկ բանակ, անարդարության դեմ ճակատ տալու համար՝ վստահ ազգային ինքնության և վստահ հավատ: Եվ այս ղեկարհն պահին էլ մեզ միշտ առաջնորդում է տակավին Ավարայրի դաշտում վստահ անմար ջահի լույսը:

Այսօր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին առավել մեծ ոգևորությամբ է տոնում իր ազգային մեծագույն տոներից մեկը՝ Սրբոց Վարդանյանց սրբազան տոնը: Բազմերախտ հայ ժողովրդը ազգային հպարտության անխառն զգացումով հարգանքի և պաշտամունքի տուրք է մատուցում Ավարայրի դաշտում ընկած երանելի ճահատակների խնկելի հիշատակին, որոնք «վարդագույն արեամբն իրեանց պսակեցին զեկեղեցի»:

Այսօր հայոց զավակները որդիական ակնածանքը գալիս են նաև առ հայրն ի-

րենց հոգևոր՝ Ձերդ Վեհափառության շնորհակտելու անվանակոչության ատօրի, աղոթքով ու սիրո ջերմ գգացմունքներով մարթելու Ձերդ Սրբությանը քաջատուջություն և արևշատություն, ու նաև, գալիս են նորոգելու ուխտն իրենց հայրերի՝ մնացու հարազատ և անդավաճան Հայոց հայրենիքին ու Սուրբ Էջմիածնին, «զի յայն Նաատոյ զմեզ ոչ ոք կարէ խախտել, ոչ իրելշտակք և ոչ մարդիկ, ոչ սուր և ոչ հոտ...»:

Այնուհետև օրվա խորհրդի շուրջ բովանդակալից բանախոսությամբ հանդես եկավ հոգևոր ճեմարանի դասախոս պրն. Խոսրեն Պալյանը.

ՊՐՆ. ԽՈՐԵՆ ՊԱԼՅԱՆԻ
ԲԱՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

«Ահա ոչ ըստ կամաց արտօսարարի ողբովք ճառագրենք գրագրում հարուածն՝ յորում պատահեցաք և մեք իսկ ականատես լինելովք»:

Այսպես է սկսում իր չքանաղ պատմությունը Ավարայրի բլրովը՝ ոսկեղենիկ Եղիշեն: Նա իր «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկը սկսում է այնտեղից, որտեղ վերջանում է Խորենացու պատմությունը: Այն ընդգրկում է շուրջ 35 տարիների մի ժամանակահատված, այն է՝ 428—465 թվականները:

Եղիշեի պատմությունը բաղկացած է 7 եղանակներից, վերջում ավելացրել է նաև մի ութերորդ եղանակ: Հիշյալ եղանակների հաջորդականությամբ, պատմիչը շարադրում է պատերազմի բուն շարժառիթները և ապա անցնում պատերազմի նկարագրությանը:

Վերջացել էր Արշակունյաց թագավորությունը, դրանից շուրջ 10 տարի հետո այս աշխարհից հեռացել էին նաև մեր դարության զույգ ամուլները՝ Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը: Որբացած Հայաստանը ընկել էր Պարսկաստանի լծի տակ: Սասանյան Արտաշիրն ու նրա հաջորդները բռնի միջոցներով պարտադրում էին բոլոր հայաստակազերիք ընդունել գրադաշտը՝ նպատակ ունենալով կրոնի միջոցով ստեղծել միաձուլ մի պետություն:

Հայաստանի նկատմամբ Սասանյան Պարսկաստանի որդեգրած բռնությունը մի նոր աստիճանի հասավ Հազկերտ 2-րդի տարիներին: Կրկնապատկվեցին հարկերը, հարկի տակ դրվեց Եկեղեցին ու հոգևոր դասը, վերացվեց Հայոց հազարապետությունը՝ նրան փոխարինեց մի պարսիկ, իսկ դասավորությունը անցավ մոգապետին: Այս ամենի նպատակը ճիշտ է ըմբռնել Եղիշեն:

«Եւ գայս ամենայն առներ, զի թերևս ըզմիաբանութիւնն քակտեցէ, և զուխտ Եկեղեցւոյ ցրուեցէ, և զշինականն վատնեցէ, և առ յոյժ աղքատութեանն՝ ակամայցէ, և ամենայն յօրէնս մոգոց»:

Եվ ի վերա այսր ամենայնի, շուտով ստացվում է նաև Միհրանների հրովարտակը՝ հայերի հավատալիության մասին: Հայերը պարտավոր էին գրավոր կերպով պատասխանել այդ հրովարտակին կետ առ կետ:

Ուստի. «միահամուտ ժողովեալք ի թագաւորանիստ քաղաքն Արտաշատու հաւանութեամբ աշխարհին...» շարադրում են վերոհիշյալ թղթի պատասխանը: Ահա պատասխանի վերջին տողերը:

«Յայսմ հաւատոյ զմեզ ոչ ոք կարէ խախտել, ոչ սուր, և ոչ հոտ, ոչ ջուր, ոչ ամենայն զինչ և են դառն հալածանք, ի քեն տանջանք և ի մեզ յանձնառութիւնք, սուր քո և պարանոց մեր: Չենք ինչ լաւ մեք քան զառաջինսն, որ յայսր վկայութեան վերայ եղին զինչս և զստացուածն և զմարմինս իրեանց»:

Նամակի պատասխանն ընթերցվում է ի յոր հավաքված ժողովրդի և մեծ հավանության արժանանում: Բոլորը երդվում են հաւատաւորում մնալ այդ վկայության վրա կանքով ու մահվամբ: Երբ այս պատասխանը հասնում է Պարսկական արքունիքին, հայ նախարարներից շատերը Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ խաբերությամբ կանչվում են Տիգրան, բանտարկվում և սատակն սպանակիքների ու ճեղքների պայմաններում ստիպված առեւտրեւ ուրանում քրիստոնեությունը, որպեսզի կարողանան ողջամբ Հայաստան վերադառնալ:

Հազկերտի հրամանով նրանք բազմաթիվ մոգերի ու մոգապետների և պարսկական ստվար բանակի հետ վերադառնում են հայրենիք, այստեղ տարածելու մոգական կրոնը:

Հայ նախարարների ուրացության մե յուրը հասել էր Հայաստան, և ոտքի էր կանգնել ողջ ժողովուրդը: Սակայն շուտով նրանք տեղեկանում են, որ նախարարները առեւտրեւ են ուրացել իրենց կրոնը:

Բազրկանքում, Անգեղակոթ գյուղի մոտ հավաքված բազմությունը անապատելի հարձակվում է պարսիկների վրա, բազմաթիվ մոգերի ու զինվորների կոտորում, ինչ մնացածներից հալածական քջում դեպի պարսկական սահմանը: Այնուհետև Հայոց գործը, ոգևորված այս հաղթանակից, հարձակվում է Հայաստանում գտնվող պարսիկ զորքերի վրա, որոնք ամրացել էին քերդերում և ամրոցներում, կոտորում

և դուրս վճարում Հայաստանի սահմաններից և ետ գրավում Արտաշատը, Գառնին, Անին, Արտազերսը, Ռդական և այլ ամրոցներ:

Մակայն այս դժվար պահին պատգամավոր է գալիս Հայաստան, ինքը Սղվանից հազարապետը՝ գլուխը, որ պարսկական զորքերը մտել են Սղվանից աշխարհը և սկսել են տարածել գրառաշտական կրոնը:

Վարդան Մամիկոնյանը Հովսեփ կաթողիկոսի հանձնարարությամբ Հայոց զորքը բաժանում է երեք մասի, առաջին մասը հանձնում է Ներշապուհին և ուղարկում Ասորպատականի այսօրվա քանդված սահմանը հսկելու, երկրորդ մասը հանձնում է Վասակ Սյունեցուն՝ միջնաշխարհը պաշտպանելու համար: Երրորդ գունդը Վարդանը ինքը վերցնելով, շտապում է Աղվանք: Այստեղ նա մեծ հաղթանակ է տանում. կոտորում և դուրս է վտարում պարսիկներին:

Հոգեբանական ծանր ու բարդ պահերն ու անսպասելի դեպքերը հաջորդում են իրար:

Ծուռով գլուխկան է հանում Վարդանի մոտ, որ Վասակը դավաճանել է Ս. Ռիսին և ավերածություններ է գործում երկրի կենտրոնում ու երկպառակություն գցում նախարարների մեջ: Վարդանը շտապում է Այրարատ: Վասակն այդ լսելով հեռանում է իր աշխարհը՝ Սյունիք:

Եղիշեն մեծ վարպետությամբ զարգացնում է իրադարձությունների ընթացքը՝ համոզվելով, որ պատերազմն անխուսափելի էր:

Եվ ահա հայրենասեր և իմաստուն սպարապետը, կռահելով մոտալուտ վտանգը, 451 թվականի գարնանը համախմբելով ուխտապահ նախարարական զորքերը, 66-հազարանոց հայկական բանակի գլուխը անցած դիմադրավում է պարսկական հարձակումը: Ինչպես վկայում է Եղիշեն, նախատմարտը տեղի է ունենում Արտազ գավառի Տղմուտ գետի ափին՝ Սվարաջ գյուղի Ծավարշան կոչված դաշտում:

Այսօր էլ դեռ կանգուն է Եղեգնաձորի շրջանի Ալյազ գյուղում գտնվող Զորաց վանքը, որտեղ, քստ ավանդության, ճամատամարտի մեկնելուց առաջ հալ մարտիկները հաղորդվում և երդվում էին:

451 թվականի մարտի 26. Սվարաջի դաշտ: Երկու գորաբանակներ դեմ-դիմաց, մեկը՝ նվաճելու, ստրկացնելու ամբարտաւան մոլուցքով, մյուսը՝ Աստվածացած մարդկանց արդար ընդվզում՝ հանուն արդարության, հանուն ազատության, վասն Հիսուսի և վասն հայրենիաց:

Հնչում է սպարապետի հուզիչ ու գոտեպնդող խոսքը՝ ողդված իր քաջ նիզակակիցներին ու աշխարհագործին:

«Արդ աղաչեմ զձեզ ով քաջ նիզակակիցք իմ...: Մի երկուցեալ զանգիտեսցուք ի բազմութենէն հեթանոսացն, և մի յահագին սրոյ առն մահկանացոյի զթիկունս դարձուցուք:

Ձի եթէ տաւցէ տէր յաղթութիւն ի ձեռս մեր, սատկեսցուք զգորութիւն ճոցա, զի բարձրացի կողմն ճշմարտութեան, և եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց տուրք մահուամբ պատերազմիս, ընկալցուք խընդութեամբ սրտի, քայց միայն յարութիւնս քաջութեան վատութիւն մի խառնեսցուք»:

Սկսվում է Հայոց գոյամարտը.

Հայ մարտիկներն ու գորականները իրենց սպարապետի հետ քաջության ու խիզախության բազում գործեր են կատարում:

Եղիշեն ռազմագետի քացառիկ հմտությամբ է նկարագրում ճակատամարտը: Ռազմի նկարագրությունը Եղիշին պատմության ամենագեղեցիկ հատվածներից է:

«Անդ էր տեսանել շտապ մեծի տազնապին և զաղէտս անբաւ տարակուսանացն երկոցունց կողմանցն...:

«Մամաւանդ յորժամ տեսանէր ոք զբազմակոյտ դիականցն անկէտոց, սիրտն թեկանէր և աղիքն գալարէին՝ լսել զմեջին խոցելոցն, և զմեջին թեկելոցն, զթաւալգոր խաղալ սողալ վիրաւորացն, զփախուստ վատացն, զթաքուստ լքելոցն, զարտաթափումն զանարի արանցն, զճշին կանացեացն, զողբս սիրելեաց, զաշխարհումն մեղձաւորաց, զվայ և զաւաղ բարեկամացն, քանզի ոչ եթէ կողմ էր որ յաղթեաց և կողմ էր որ պարտեացաւ այլ քաջը ընդ քաջս ելեալ երկոքին կողմանքն ի պարտութիւն մատնեցան»:

Եղիշեն հակիրճ, քայց խորը հուզումով է նկարագրում Վարդանի մահվան տեսարանը:

«Իսկ կորովին Վարդան իւրովք քաջ նիզակալցօրն ոչ սակաւ նախհրս ի տեղորբն գործեաց, յորում տեղուց և ի ինքն իսկ արծանի եղև առնով զկատարեալ նահատակութիւնն»:

Սվարաջի դաշտում այդ օրը Վարդանի ժիւղակիցներից մարտիրոսացան 1036 մարդ, իսկ պարսկական կողմից սպանվեցին 3544 մարդ, որոնցից 9-ը խիստ պատվավորներն էին:

Օրը տարածամում էր, դժվարանում էր պատերազմական գործը:

Ընկել էր Հայոց անվեհեր սպարապետը՝ Ոգին Սվարաջի, և չկար մեկը, որ կարողանար գլխավորել մարտը, ուստի մնա-

հանդեպ սանձազերծված ու նախապես խնամքով ծրագրված նոր ցեղապանությունը, կողոպտում ու քարթարության տեղահանությունը: Գաղթականության հսկայական մի նոր ալիք և անմարդկային տնտեսական երկարամյակ տրջափառում 20-րդ դարի վերջին՝ և նորից անպատժեհությամբ ու քար անտարբերությամբ:

Այս անգամ խոսմանը ավելի վայրագ գտնվեց, քան միջնադարյան նրա նախահայրերը հանդիսացող սելջուկ-թաթարական հորդանքերը: Ավերվեցին Ազովիսի, Հին Ջուդայի տաճակ վանքերն ու եկեղեցիները: Կոտորավեցին բազմաթիվ սղորազան խաչքարեր և այլ արժեքներ:

Ազգիս շնորհագարդ և մեծագործ Հայրապետը՝ Ս. Ս. Վազգեն Ա Սրբազնագույն Կաթողիկոսը, վշտակիր հոգով, սակայն երբեք չկորցնելով հույսն ապագայի իր գոհունությունը, իր հայրական խնամքով ու հոգածությամբ, նյութական ու քարոյական մեծ ու անգնահատելի գործունեություն ծավալեց ու ծավալում է՝ հայրենիքում, և՛ Սփյուռքի տարածքի վրա՝ միախառնելու և զգաստացնելու իր տազնապաճ հոտը:

Աշտուղ չենք կարող երախտիքի ու գոհունակության խոսքեր չարտահայտել նաև Մեծի Տանն Կիլիկիո Ս. Տ. Գարեգին Բ շնորհագարդ Կաթողիկոսի ու Աթոռի արթուն միաբանների հասցեին, Սփյուռքի տարածքում նրանց ծավալած ազգանկեր մեծ ջանքերի համար՝ ի նպաստ մեր ժողովրդի բնդհանուր գործին:

Բուն հարեկներանի շարքում է: Վաղուց մեր ժողովուրդը չէր դիմավորել Բուն հարեկներանը նման ծանր ու անորոշ հոգեփնակով: Սակայն այսօր մենք դարձյալ 1540-րդ անգամ մտովին փոխադրվում ենք Ավարայր, որտեղ մեր հոգու աչքերով նորից տեսնում ենք խրոխտ ու անվեհեր Հայոց Սպարապետին՝ իր զինակիցներով, հոգևոր դասով և վաթսույնվեց հազար հալ մարտիկների ափսոսել բանակով՝ պատրաստ կյանքով պաշտպանելու հայոց սրբազան հողը, պաշտպանելու Ս. Թադևոսի, Ս. Բարդուղիմեոսի և Ս. Գրիգոր Լուսավորչի քարոզչությամբ արմատավորված Քրիստոսի Ա. Ավետարանի լույսը, պաշտպանելու Աստվածային տեսչությանը հրաշակերտված Միածնաշ Մայր տաճարը, պաշտպանելու Ս. Սահակի ու Ս. Մաշտոցի հանձնարով ստեղծված մեր գիրն ու դպրությունը:

Վարդանանց գաղտնածածկ և անմահությունը ամեն տարի, ինչպես գարունը, թարմանում ու թարմացնում է մեր հոգի-

ները, լցնում նոր հույսերով, նոր գործությամբ:

Ավարայրը գոհանելան է Հայոց աշխարհի: Իսկ Ղևոնդյանը և Վարդանանք ռոջակեզներն են մեր ժողովրդի երեկ, այսօր և հավիտյան:

Ուստի ձայնակցե՛ք լինելով երանելի հիշատակագրին, մենք ևս գոչենք.

«Մաղթեցե՛ք վկայք Քրիստոսի՝ խաղաղությանը և փրկությանը աշխարհիս և ազգիս Հայոց...» ամեն:

Բանախոսությունից հետո հոգևոր ճեմարանի սաները, Խորեն Պապյանի ղեկավարությամբ, կատարեցին Ծնորհալու «Նորահրաշ», «Սրբական արարություն», «Երկնային հրաիրակօթ», Եկմայանի «Լուս», «Բերուց Ավարայրի», Կոմիտասի «Ով Հայկազուն», «Իմ հայրենյաց հոգի Վարդան», Գ. Սրվանդյանի «Գողթնի քնարը» (մեներգը՝ նախապատրաստական դասարանի ուսանողներ Վիգեն Գոյանի և Լևոն Պողոսյանի) և Ծերամի «Իրն արծիվ» (կատարումը՝ Խորեն Պապյանի) ստեղծագործությունները:

Վերջում օրհնության խոսքով հանդես եկավ Վեհափառ Հայրապետը:

ՎԵՀԱՓԱՌ ԷԼՍԵՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

Ինչքան ճշանակալի է իբրև բացառիկ երևույթ ժողովուրդների պատմության մեջ, որ ահա մոտ հազար տարի է ի վեր մեր Սուրբ Եկեղեցին ոգեկոչում է և փառաբանում հիշատակը Ավարայրի ճակատամարտի:

Ինչպես լիտիք, այս եկեղեցական տոնը սկսեց հիշատակվել, և Վարդանն էլ ու իր քաջերը դասվեցին սրբերի շարքում, Կիլիկյան Հայաստանի թագավորության շքանշանից: Այն շարականը, որ լսեցիք քիչ առաջ՝ «Նորահրաշ պսակադո»-ը, Սուրբ Երեսուց Ծնորհալու ստեղծագործությունն է: Ստուգապես հայտնի չէ, թե դրանից առաջ, այսինքն մինչև 12-րդ դար մոտավորապես, այս տոնախմբում կատարվում էր թե չէ, կամ ինչպես էր կատարվում: Համենայն դեպս փաստ է, որ նվիրագործված է կիլիկյան թագավորության շքանշանից: Այսինքն, մեր պատմության այնպիսի մեկ շքանից, երբ հայ ժողովուրդը իր պետությունը կազմավորեց բուն պատմական Հայաստանի հողամասից դուրս՝ մի տեսակ տարագրության մեջ, եթե կարելի է ասել: Ծառ հատկանշական է և կարելի է խորհիլ այս երկու իրողությունների՝ ներքին

կապի մասին: Եվ այս հիշեցնում է ինձ հրեա ժողովրդի պարագան:

Հրեա ժողովրդի ազգային հոգևոր ինքնությունը, գիտակցությունը կազմավորված է ոչ թե Բարալեյի մեջ, այլ Եգիպտոսի մեջ՝ գերության շրջանին: Եվ առաջին անգամ եգրպտացիների, Եգիպտոսի թագավորի բերնով է, որ հրեա ժողովուրդն անվանված է Իսրայելի ժողովուրդ: «Իսրայելի ժողովուրդ» բանաձևումը ստեղծված է գերության շրջանին:

Հայ ժողովրդի կյանքում դարեր-դարեր շարունակ Վարդանանց հիշատակը միշտ վառ է պահպանվել հատկապես մեր Եկեղեցու միջոցով:

Մենք այսօր, գոհաբանական մաղթանքի պահին, ձեզի ծանոթ աղոթքը արտասանեցինք. «Օրհնեսցի և պահպանեսցի և մախախնամեսալ պահեսցի զՀայրապետությունն և զՀանրապետությունն ազգիս Հայոց»: Այս աղոթքը, այս մաղթանքը մենք ուրիշ առիթներով էլ օգտագործում ենք եկեղեցական արարողությունների ընթացքին: Իսկզկարծեք թե հենց Վարդանանց տոնի առիթով առավել նշանակալից են դառնում այս երկու գաղափարների գլուզակցումը, այսինքն, Հայոց Հայրապետության և Հանրապետության: Որովհետև այս նշանաբանով տեղի ունեցավ Ավարայրի ճակատամարտը՝ վառ հավատի և վառ հայրենայն: Ավարայրի հերոսամարտով վերջնականապես դրոշմվեց անքակտելիությունը, միասնությունը այս երկու գաղափարների՝ հավատքի և հայրենիքի, Հայ Եկեղեցու և հայ պետության: Եվ մեր ամբողջ պատմության ընթացքում, 15 դարեր շարունակ, տիրական, հոգեկան առաջնորդող ուժ հանդիսացած է այս միասնությունը: Ապացույց՝ Եղիշե պատմիչի հույակապ գործը: 2եմ կարծում սխալված լինել, որ որևէ քրիստոնեա ժողովուրդի ճակատամարտ այսքան հարազատությամբ չի արտահայտած քրիստոնեական ոգին, իր բովանդակ գաղափարախոսությամբ: Եղիշեի գործը քրիստոնեական գաղափարախոսության գլուխգործոց է, համաշխարհային մակարդակի վրա: Քրիստոնեական գաղափարախոսության ազնվագույն բանաձևումները կան այնտեղ:

Վարդանանց հերոսամարտի հիշատակը, նրա ոգեկան լույսը տարածվում է մեր ամբողջ պատմության վրա: Վերջին հազար հինգ հարյուր տարիների ընթացքում հայ ժողովուրդը անկախ պետություն քիչ անգամ է ունեցել, եթե չհաշվենք Կիլիկյան թագավորության շրջանը, որ փառավոր հայկական պետություն է եղած, բառին ամբողջական իմաստով: Սակայն մեր

Եկեղեցին է միայն, որ հայ ժողովրդի ոգեկան ազատությունը և անկախությունը պահպանած է, և դա նաև քաղաքական նշանակություն ունեցած է: Այո՛, Վարդանանց պատերազմի օրերից սկսյալ մինչև նաև պատերազմի և անկախությունը ազապսօր հայ ժողովուրդը իր հոգեկան ազատությունը և անկախությունը պաշտպանած է քրիստոնեությամբ՝ ընդդեմ հեթանոսների, ընդդեմ Պարսկաստանին և, ընդդեմ Բյուզանդիոսի և մյուս Եկեղեցի-ընդդեմ Բյուզանդիոսի և մյուս Եկեղեցի-ների, որոնք պատմության ընթացքին քանի-քանի անգամներ փորձած են մեր Եկեղեցու վրա տիրապետել, տիրելու հակադեմ վրա ազգի վրա: Հայ ժողովուրդը իր մար մեր ազգի վրա: Հայ ժողովուրդը իր ազգային առողջ բնագոյով զգացած է ու հետապնդած, որ գոնե Եկեղեցիով մնա ազատ ու անկախ:

Ահավասիկ, պատմական մեծագույն ծառայություններից մեկը, որ կատարած է մեր Մայր Եկեղեցին: Եվ դա այժմեություն ունի նաև այսօր: Եկեղեցական տեսություն ունի, շատ բարեկամական, եղբայրական հարաբերությունների մեջ ենք բոլոր մեր քույր Եկեղեցիների հետ՝ և՛ պրավոսլավ քույր Եկեղեցիների հետ, և՛ հայոցների հետ, և՛ կաթոլիկների հետ, բողոքականների հետ, սակայն մեր տանը մեջ, մեր ազգի տակ մենք պահպանում ենք մույն ավարայրյան ոգին: Պահպանում ենք մեր ինքնությունությունը, մեր ոգեկան անկախությունը՝ առանց բաժանվելու ընդհանուր քրիստոնեական ընտանիքից: Այսօր էլ այս ոգին այժմեական է հեշտ մեզ համար, այսօր էլ պետք է այն պահպանենք սրբությանը: Մենք հասն ա՛յս տեսակետից կարիք ունենք Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու օգնության՝ պահպանելու համար մեր ազգի ոգեկան անկախությունը:

Ես շատ զոհ մնացի այսօրվա ծրագրից: Ես պետք է շնորհավորեմ մեր հոգևոր ճեմարանի տեսչությունը, դասախոսական կազմը և հատկապես այսօրվա գեղարվեստական բաժինը պատրաստած և ղեկավարող պրոֆ. Խորեն Պալյանը, որ իրեն հատուկ ոգեշնչումով ներկայացրեց շատ հուզիչ ծրագիրը, որով մենք մի անգամ ևս իրապես ապրեցինք Վարդանանց հերոսամարտի խորհուրդը:

Թող Աստված միշտ օգնական մնա և պահպան մեր ազգին, մանավանդ այս մեր տագնապալի օրերին, որպեսզի Վարդանանց ոգով կարողանանք հաղթահարել մեր առջև դրված բոլոր դժվարությունները և հասնել խաղաղության և արդարության իրականացման ափին՝ մեր ժողովրդի ազատ ինքնորոշման իրավունքով:

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԴԱՐՁԻ ԱՌՀԱՎԱՏՉՅԱՆ

31 մարտի, 1990 թվական: Հայոց հինավուրց մայրաքաղաքում կատարվում է հուշաքարի հիմնարկեր. այստեղ, քաղաքամայր Երևանի սրբոտում, աստվածամերձ պաշտոլ վեր պիտի խոյանա Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակը հավերժացնող եկեղեցին: Սա լավագույն առհավատչյալն է պատմական այն շրջադարձի, որ ապրում է մեր ժողովուրդն այսօր: Անխտհեմաքար և կույր մոլուցքով քանդված եկեղեցիների փոխարեն, նորից տաճար է ծյարծակում քրիստոնյա Հայաստանի հողը՝ իր հողին դարավոր հաստաքետտ արմատներով կառույցած հայ մարդու աղոթքը առ Աստված վերադառելու համար: Հայ եկեղեցին կառույց ու շինություն չէ միայն, այդ կառույցը այն հոգևոր անքակտելի հանգույցն է, որ ապագայում է երկինք ու երկիր, Աստծուն՝ հայոց հողի հետ, որպեսզի օրհնվի հողը և օրհնյալ լինի այդ սուրբ հողին իր ստեղծարար կյանքով բարիք պարգևող հայը: Եկեղեցին Հայոց երկրի ընդերքից դեպի Աստված ձգվող հայի հոգին է:

Օղակաձև այգու այս բարձունքին հավաքվել է խոռոներամ բազմություն. ներկա են Երևանի քաղաքային իշխանության ներկայացուցիչներ, Նախարարների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ստեփան Վարդանյանը իր տեղակալներով, Սիլիոտքի հայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ տիար Կառլեն Դալլաքյանը, այլ պաշտոնական անձինք, ճարտարապետներ, արվեստագետներ և երեխաներ:

Օրվա հանդիսավոր արարողության բացման խոսքով հանդես է գալիս քաղաքամայր Երևանի քաղաքապետ տիար Արտաշես Գեղամյանը.

ԱՐՏԱԾԵՍ ԳԵՂԱՄՅԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔԸ

Հարգելի համաքաղաքացիներ.

Հայ ժողովրդի վաղնջական պատմության բոլոր ժամանակահատվածներում էլ կրոնի դերը մեծանշանակ է: Գտնվելով հին աշխարհի առևտրական մեծ ճանապարհների խաչմերուկներում, դառնալով կայսրությունների,

զանազան ասպատակիչների ուզման հարմարությունների թատերա-
բեմ, Հայաստանը դարերի ընդացքում ստիպված է եղել մշտապես պա-
քարել իր գոյության համար: Ամեն մի զավթիչ մտնելով հայոց հողը, փորձել
է ոչ միայն հպատակեցնել ժողովրդին, այլև ուժացնել ենթարկել նրա լե-
զուն, հավատը, ավանդույթները, սովորությունները: Այդ ամենի դեմ պա-
քարում էալ ժողովրդին գորավիզ է եղել նրա հավանքն ու կրոնը:

քարոս հայ ժողովրդին գորավիզ է եղել նրա հավատն ու վերջը՝
Հայերեն առաջին համադասությունը, որը թարգմանվեց Աստվածա-
շնչից, եղավ. «Ծանաչել զիմաստութիւն և զխարս, իմանալ զբան հան-
նարոյ», որը մեր ժողովրդի կյանքի հիմնական նշանաբանը դարձավ:

Հեռավոր 451-ի մայիսին, Տրուամ գետի ափին, Ալալարյի ճակատում մարտում, երբ վճռվում էր մեր ժողովրդի ֆիզիկական և հոգևոր գոյության հարցը, Վարդան Մամիկոնյան գորավարի հետ միասին հայկական զորագնդերը անհաղթաբար մարտի էին տանում Եղիշե Պատմիչն ու Հունդ Երեզելերը անհաղթաբար մարտի էին տանում Եղիշե Պատմիչին հայրենասիրքը, որոնք սուրբ խաչը մի ձեռքին, սուրը՝ մյուս, ժողովրդին հայրենասիրքը, անվեհերությամբ, ազգապաշտպանության կենդանի օրինակ էին բուխում, անվեհերությամբ, ազգապաշտպանության կենդանի օրինակ էին տալիս։ «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն»։ Եղիշե Պատմիչի փիլիսոփայական այս խոսքով հայ գորավարների շատ սերունդներ գորագնդեր են տարել մարտի՝ համոզված չլինելով վերջնական հաղթանակի մեջ։

Թանակի մեջ:
Մեր ժողովրդի պատմության ճակատագրական ու վճռորոշ բոլոր պահերին, այսօրվա մեր համագգային շարժման հետո ու մոտ ակունքներում, դարձյալ կանգնած են եղել ու կանգնած են մեր հավատի տպաստվորները՝ Արցախական աշխարհի Գանձասարի վանքի Հատան Եսայի Զալայան Կաթողիկոսից մինչև Ներսես Աշտարակեցի լուսահոգի Կաթողիկոսը, Սարգսրապատի ճակատամարտի ոգեշնչող ու կազմակերպիչ Գարեգին սրբազանն ու Սմեմայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը...

Հայոց մշակույթը, դպրությունը զարգացել են հավասար տաճարներում եկեղեցիներում ու վանքերում: Վանքերի խոցներում են գրվել մեր բազմադարյան պատմության էջերը, մեր մատյանները, եկեղեցական երգերը, վերաճնդի գոհարները, վանքում է կերտվել Նարեկացու աշխարհափռչակ «Մատանը», որը համաշխարհային քաղաքակրթության եզակի մնուշներից է:

Մեր դպրության օջախները, համալսարանները, որտեղ կրթվել են հայտնիները, ուր զարգացել են ճշգրիտ գիտությունները, փիլիսոփայությունը, հայագիտությունը, արվեստի տարբեր ճյուղերը, պտղավորվել են եկեղեցու հովանավորությամբ:

Վաճառքի խոցելում մի կում ջրով և մի ճշխար հացով գրիչները արտագրել և մեզ են ժառանգել մշակույթի գրավոր արժեքները, մանրանկարչության գլուխգործոցներ են ստեղծել ծաղկողները:

Մեր հավատի և դպրության աղօջախները վտանգի պահին, մեր ժողովրդի գոյատևման համար միվող մարտերի ժամանակ եղել են ոչ միայն հոգևոր ամրության տաճարներ, այլև ամրակուռ բերդեր, քանզի, միշտ էլ հայոց զորավարական թրի կողքին եղել է հաղթանակի և հույսի, հավատի խաչը:

Եվ այսօր էլ մեր կյանքի համակողմանի նորացման, դեմոկրատացման ժամանակաշրջանում, երբ դիմում ենք մեր ժողովրդի պատմական հիշողությանը, մարդասիրական ելակետերից վերափմաստավորում մեր շատ ու շատ արժեքներ, պատշաճն ենք մատուցում մեր հոգեկան կերտվածքին՝

միշտ գորավիզ մեր խղճի և հավատի տաճարներին: Եվ հիրավի, ժողովրդի աստմական հիշողությունը կարելի է այլափոխել, բայց ջնջել՝ երբեք: Հայոց հավատի սուրբ տաճարներն ու նրանց սպասավորները ամենևին ժողովրդին չեն քարոզել միայն ձեռքերը կապտոսակ երկինք կարկառել և նրա անհուններից երջանիկ կյանք մուրալ, ինչպես տարիներ շարունակ հետևողականորեն ջանում էին մեզ համոզել: Եվ, որպեսզի մեր այսօրվա սերունդը որպես մանկուտ չմեծանա, այլ լիովին իմանա իր ժողովրդի պատմությունն ու տեր կանգնի նրան, մենք պարտավոր ենք շտկելու այդ դաժան սխալը: Մեր ճշմարիտ արժեքները, ուրեմն նաև մեր վանքերն ու եկեղեցիները, որ մեր ազգային հանճարի պուճուրն են, ծառայում են ժողովրդին և պետք է պատկանեն նրան: Հենց այդ մասին է վկայում մեր բազմադարյան Երևանում հայոց առաքելական եկեղեցու հիմնադրումը: Դա սուկ ճարտարապետական նոր շինություն չէ, որ պետք է հարստացնի մեր ոչ քիչ աչքի ընկնող հայակերտ կառույցներով հարուստ Երևանը: Մեր մաքուր խղճի, մեր հավատի այս նոր տաճարը իր հիմնադրումով գալիս է մասնակցելու, իր հոգևոր նպաստը բերելու մեր ժողովրդի վերածնության ազգային ծրագրերի իրականացմանը, իր զանգերի հիմն ու նոր, բայց միշտ սրբազան դողանքներով մեզ հավաքելու, համախմբելու, մեր միասնության կոչն ու հորդորը հնչեցնելու, ինչպես եղել է մեր պատմության քառուղիներում, մեր ժողովրդի կյանքի շրջադարձային ժամանակներում: Հիրավի, ամենաօրհասական պահերին, երբ թվացել է, թե ամեն ինչ կորած է արդեն, եկեղեցական զանգերի կոչնակները իրենց սրտադող կանչերով մեզ հորդորել են, հավատացրել, որ այնուամենայնիվ մնում է, դեռ կա ապագա: Եվ այդ ապագան միշտ եկել է, որովհետև մենք կանք:

Կանգնեն տարիներ, հայոց հիմնավորք մայրաքաղաքում վեր խոյացած հավատի նոր տաճարում խնկարույր անաղարտությամբ կցուցան ու կբուրեն մեր ժողովրդի հույսի, հավատի, սիրո, հավերժության մոմերը, նրա միասնության ու անմահության պայծառ առհավատչյան, իսկ նրա հուսո ու հավատի պղնձաձայն զանգերն էլ մշտադառն կպահեն մեր խիղճը, մըշտապես հիշեցնելով մեզ փորձության ծանր ժամերի, մեր ապագայի, մեր ժողովրդի ճակատագրի հանդեպ՝ մեր պարտքի զգացման մասին:

Ապա խոսքը տրվում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին. Նոյին Սրբության գաղափարն է այս եկեղեցու կառուցումը:

ՎԵՀԱՓԱՌՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍԶԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ՝ ՄԱՅՐ ՏԱՄԱՐԻ
ՀՈՒԾԱՔԱՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱՌԹՈՎ
(81 մարտ 1990 թ.)

«Յանուն Հօր և Որդու և Հոգու Սրբոյ, ամեն»:

«Եկայք շինեցոք սուրբ զխորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»:

«Եկեք կառուցենք լուսո սուրբ խորանը, այսինքն եկեղեցին, որովհետև նրանից ծագեց մեզ լույս, Հայաստան աշխարհի վրա»:

Մի բելի ժողովուրդ, այս կոչը ուղղվեց մեր ժողովուրդին առաջին անգամ, մեզանից 1690 տարիներ առաջ, 801 թվականին, երբ Հայաստանի մայրաքաղաք Վաղարշապատում հիմքն էր դրվում առաջին հայկական եկեղեցու՝ օրհնությամբ Ս. Գրիգոր Լուսավորչի, ներկայությամբ հայոց

Ավարայր, որ տեղի ունեցավ ճշանավոր ճակատամարտը 451 թվականին, մայիսյան կամ հունիսյան օրերին: Վարդան Մամիկոնյան այս ճակատամարտում «Մահումը գմախ կոխեաց»:

Քայց հայերը չհուսալքվեցին, շարունակեցին իրենց մարտը վասն հայրենիքի ազատության և վասն իրենց ազգային եկեղեցու, վասն կրոնքի ազատության: Երեսուն տարիներ շարունակ տեղեցին մարտերը: Այսօր պիտի ասեինք մի տեսակ պարտիզանական կռիվներ կամ ֆիդայական կռիվներ: Երեսուն տարի շարունակ տեղեց այդ պայքարը, և ի վերջո հայերը հաղթանակեցին՝ վահան Մամիկոնյանի ջանքերով: Նա ևս հավաքեց հայոց զորքերը, և նոր ճակատամարտ տեղի ունեցավ 484 թվականին, նոր հայերը չպարսկեցին, և պարսիկները ստիպվեցին տեղի տալ, խոնարհվել հայոց հավատքի և հայրենասիրության առջև:

Այսպես կոչված, Նվարսակի պայմանագրությունը ստորագրվեց նույն տարին՝ 484 թվականին: Հայաստանում վերստին քրիստոնեական կրոնը դարձավ ազատ և ազգային կրոն, չարագործ հեթանոսները և կրակապաշտ մոզերը դուրս թշվեցին Հայաստանից, և մեր երկիրը վերստին, իբրև քրիստոնյա երկիր, շարունակեց իր հաղթական երթը, և պատմության ընթացքում այնև հաջ ժողովուրդը երբեք չբաժանվեց իր լույս հավատքից, իր Մայր եկեղեցուց՝ հակառակ քաղաքական անկայաստ պայմաններին, հակառակ որ մոտ հազար տարի, տասնամեկերորդ դարից հետո, հայ պետություն գոյություն չունեցավ բուն պատմական Հայաստանի տարածքի վրա, սակայն հայ ժողովուրդի հոգեկան անկախությունը դարեր շարունակ պահեց, պահպանեց Հայաստանյայց Առաքելական եկեղեցին: Սա նույնպես մի «եղիցի լույս» եղավ մեր ժողովուրդի կյանքում:

Եվ այսօր էլ այդ առաքելությունը շարունակվում է և պետք է շարունակվի: Ժիշտ է, անցյալում եղան դժվար շրջաններ, սակայն Հայ եկեղեցին երբեք չհուսահատվեց, նույնիսկ ամենեւնի տխուր ժամանակաշրջաններում, ոչ այստեղ, ոչ էլ արտասահմանում: Ահավասիկ այսօր մենք ներշնչվեցինք՝ եմք, որ 1690 տարի հետո հավաքված եմք այստեղ՝ կրկին իողունելու այդ նույն լույսը քրիստոնեական, ողջունելու վերագարթոնքը, նոր ծաղկումը Հայաստանյայց Առաքելական եկեղեցու: Այդ հավատքով այսօր օրհնեցինք այս հուշաքարը և այս հողը, որի վրա շուտով պիտի բարձրանա Երևանի՝ մեր մայր քաղաքի առաջին հուշարձան Մայր եկեղեցին՝ հանուն Սուրբ Գրիգորի մերո խոսավորչին:

Իմ հայացքը ուղղվելով դեպի մոտ ապագան, մոտ տասը տարի հետո, իմ հոգու աչքերով տեսնում եմ այն հույակապ տաճարը, որ պիտի բարձրանա այստեղ, և սուրբ խաչը պիտի պանա դեպի երկինք: Հավանաբար ես այստեղ չեմ լինելու, բայց գուցե կհիշեք ինձ այդ օրը: Երանի այն հայերին, որ այդ պահին, այդ օրը, 2001 թվականին, պիտի լինեն այստեղ: Ես հիմնականից հրավիրում եմ ձեզ:

Սիրելի ժողովուրդ, մեր օրերին ազգային վերածնունդի օրերին, խոսվում է հաճախ, և լավ է, որ խոսվում է, մեր արմատների մասին: Այստեղ կոզենայի հաստատել պատմական ճշմարտությունը, որ մեր ժողովուրդի ազգային ոգեկանության արմատները գտնվում են Ս. Էջմիածնում և Երեւանի Մեծորայ Մաշտոցի անվան Մատենադարանում: Ահա մեր հիմնական հավատքը այսօր, վաղը և հավիտյան: Այս գիտակցությամբ մենք ողջունեմք այսօրվա արևոտ օրը, այս աստվածահաճո պահը, երբ օրհնու-

թյունը կատարեցինք մեր հայրենի հողի, որի վրա պիտի կոթողանա Ս. Գրիգոր Լուսավորչի անվան հուշարձան-տաճարը:

Թող Աստված օրհնի մեր Ս. Եկեղեցին, թող Աստված օրհնի համայն հայ հավատացյալ ժողովուրդը, ի Հայաստան և ի ափյուռ աշխարհի, թող Աստված օրհնի մեր Մայր Հայրենիքը և մեր հայրենի պետությունը, հավիտենական Հայաստանի: Մենք մեկ հավատք ունենք, մեկ Եկեղեցի, մեկ ազգային մշակույթ և մեկ Մայր Հայրենիք: Աղոթենք նրանց անասանություն և մեր բոլորի արդար իղձերի հաղթանակի համար:

«Եկեղեց շինեսցուք սուրբ գլխորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի».

Զայն է առնում Մայր տաճարի ճարտարապետական հանձնաժողովի անդամ, հմուտ և վաստակավոր ճարտարապետ տիար Վարազդատ Հարությունյանը:

ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԽՈՍԺԸ

Վեհափառ Տեր,

Հարգելի համաքաղաքացիներ,

Մենք այսօր ներկա ենք արժանահիշատակ մի արարողության՝ հուշարձաններով հարուստ մեր մայրաքաղաքի հինավուրց հողի վրա կառուցվելիք մի նոր ու հույակալ եկեղեցու հիմնադրեքին:

Երևանի Մայր տաճարը պիտի վեր խոյանա մեր մայրաքաղաքի համայնապատկերում որպես քարակոտ խորհրդանշիչ բարոյա-գաղափարական այն արժանատական վերափոխությունների, որի մեկնարկն է այժմ վերցրել մեր հայրենիքը: Եկեղեցին ու հավատքը վերստին գտնելու են իրենց այն դերն ու նշանակությունը, որն ունեցել են դարեր շարունակ հայ ժողովուրդը դժվարին ճակատագրում, ստանալու անկաշկանդ հնարավորություն մասնակցելու համար ժողովրդի հայրենասիրական, բարոյա-գաղափարամասնականության գործին, ծառայելու լայն գոյարարության և մարդասիրության դաժան աղետի ենթարկված Հայաստանի զավակների, Հայաստան ժամանած քաղմահազար գաղթականների նկատմամբ:

Վերջապես հաղթահարվում է Եկեղեցու, նրա գործիչների ու հավատացյալների նկատմամբ տասնամյակներ շարունակ տիրող անհարիր վերաբերմունքը, որին գոհ գնացին տանջակ եկեղեցական շենքեր, այդ թվում Երևանում, բարոյական անկում պատճառվեց հասարակությանը, խաթարվեցին մարդկային ազնիվ շատ նորմեր: Ուրեմն Երևանի նորակառույց Մայր տաճարը թող դառնա վարձահատույց անցյալում ունեցած մեր հոգեվոր և նյութական կորուստների, իր շուրջը համայնքի հավատացյալների, նպատի Հայ Առաքելական Եկեղեցու հոգեկառույց վսեմ նպատակին, համայնքի և ոգեկոչի տարաբախտ ժողովրդին իր ազգային ձգտումների իրագործման ճանապարհին:

Մենք վստահ ենք, որ նորակառույց Մայր տաճարը պիտի դառնա Երևանի ճարտարապետական զարդերից մեկը, հնչի որպես հայկական եկեղեցական ճարտարապետության մերօրյա մեծագործություն:

Մայր տաճարի շինարարությունը կատարվել է Հայրենիքի և իսկյուռ աշխարհի հայության խանդավառ աջակցությամբ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի հովանավորությամբ, որի գահակալության



ՎԵՂՈՍՏՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՑԸ ՕՐՀԵՈՒՄ Է ԵՐԵՎԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎԱՐՈՐԻ ՀԱՅՐԱՊԵՏՈՒ

ՀՈՐԱՔԱՆՐԸ

(Երևան, 31 մարտ, 1990 թ.)




ՀԱՅԱՍՏԱՆԻՄ ՔՐԻՍՏՈՆԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹՆ ՀՈՉԱԿԵԼՈՒ 1700-ԱՄՅԱԿԻՆ
ՆՎԻՐՎԱԾ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՒԾԱՔԱՐԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ
(Երևան, 31 մարտ, 1990 թ.)

երեք ու կես տասնամյակները մշակավորվեցին մեծ ծավալի վերականգնումների, բարեգարդումների և նոր շենքերի կառուցման աշխատանքներով:

Ուրեմն աիւնատություն, առողջություն, կորով ու եռանդ մաղթենք վեհափառ Հայրապետին, որպեսզի նա իրականացված տեսնի այսօր հիմնադրվող Երևանի Սուրբ Լուսավորիչ Մայր տաճարի շինարարության ավարտը՝ ի վայելումն մեր հավատացյալ ժողովրդի ու ամբողջ հայության:

Հետո առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցու կրոնական դասավանդումների մասնակիցներից կազմված մանկական երգչախումբը երգում է «Տերունական աղոթք»-ը, լմթերցվում է Ս. Ավետարան, և Հայոց Հայրապետը օրհնում է հուշաքարը, որ հուշում է. այստեղ պիտի կառուցվի հայ ժողովրդի քրիստոնեացման և Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին նվիրված փիթխարի եկեղեցին:

«Ուրախ լեր Սուրբ Եկեղեցի, քանզի Քրիստոս, Արքայն երկնից այսօր քնակեալ ի քեզ»:





ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՈԼՈՐՏ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՋ

Մեր ժողովրդի ազգային զարթոնքը արտահայտվում է մեր կյանքի բոլոր ասպարեզներում: Դեպի արմատները վերադարձը, ազգային դիմագիծը վերագտնելու խնդիրը առաջնային է դարձել. ժողովուրդը ճիգ է անում վերականգնելու իր պատմական հիշողությունը՝ պատմությամբ ինքնահաստատում ձեռք բերելու և հայացքը դեպի ապագան հստակում համար:

Այս տեսակետից մեծ նշանակություն ունի հոգևոր դաստիարակությունը: Հասարակության բարոյաբանական պատճառներից մեկն էլ այն է, որ դաբերով քրիստոնեական ավանդությամբ ապրած ժողովուրդը արհեստականորեն կտրվեց իր ավանդություններից՝ դառնալով համար համայնական տան անդամ բնակիչ: Իսկ քրիստոնեությունը դարերով դարձել էր մեր ժողովրդի միա ու արյունը, ազգային ինքնությունության հենակետն ու մեզ պարտադրված դառն ճակատագիրը արժանապատվությամբ դիմագրավելու հոգևոր մխիթարանք: Ուստի օրինաչափ էր, որ ազատ շնչելու առաջին իսկ հնարավորությամբ ժողովուրդը պիտի տենչար հագեցնել իր հոգևոր ծառայելու: Դա արտահայտվեց բազմաթիվ գործող եկեղեցիներ բացելով, ազգային-եկեղեցական տոներին վերադառնալով ձգտումով և նաև, ու թերևս ամենակարևորը, Մայր Եկեղեցին ճանաչելու անհրաժեշտությամբ: Պետք էր մանավանդ նոր սերնդին ցույց տալ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու մեծ դերը մեր ժողովրդի կյանքում. երբ ունեցանք պետականություն, Եկեղեցին միշտ եղավ պետականության գորավիզ, երբ չկար պետականություն, Եկեղեցին արժանապատվությամբ համատեղեց ժողովրդի հոգևոր և աշխարհիկ իշխանության պատասխանատվությունը: Պետք էր ճանաչել Եկեղեցին, որպեսզի հոգևոր զարթոնքը գիտակցված լիներ:

Այս նպատակով ահա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ կազմվեց հատուկ հանձնաժողով, որի նպատակն է ընդհանուր գանձազան բարձրագույն ուսումնական հաստատությունների, դպրոցների և կազմակերպությունների դիմումներին և կազմակերպել Հայ Եկե-

ղեցու պատմության և քրիստոնեական դաստիարակության դասընթացներ: Կարճ ժամանակում կազմվեց ընդհանրական ծրագիր, որոշվեցին դասախոսները և նախապատրաստվեցին դասընթացները. նախատեսվում էր նույն ծրագիրը իրագործել տարբեր ուսումնական հաստատություններում շրջանային դասախոսությունների ձևով՝ համակարգված դասացուցակով:

Վեհափառ Հայրապետը նախաձեռնեց վարել առաջին հանդիպումները՝ իր հայրապետական պատգամը քերելու դասախոսությունների մասնակիցներին:

Նորին Սրբությունը իրերահաջորդ երեք հանդիպում-դասախոսություններ ունեցավ Երևանի մաթեմատիկական հաշվիչ մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում, Բյուտովի անվան ռուսաց և օտար լեզուների և պոլիտեխնիկական ինստիտուտներում: Վեհափառ Հայրապետը վեր հանեց կրոնի դերը մարդու բարոյական դաստիարակման մեջ, հանգամանորեն խոսեց հայ ժողովրդի քրիստոնեացման, Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու մասին: Նորին Սրբությունը հատուկ ուշադրություն դարձրեց այն ազգային և մշակութային ցայտուն հետազոծի վրա, որ թողեց քրիստոնեությունը մեր ժողովրդի կյանքում: Վեր հանեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նշանակությունը մեր պատմության մեջ՝ որպես մեր ճակատագրի նվիրյալն ու պաշտպանը: Ապա երիտասարդությանը հրավիրեց ջանք ու եռանդ չխնայել՝ Մայր Եկեղեցին ամբողջապես ճանաչելու համար, որպեսզի դառնան նրա հավատարիմ զավակներն ու Եկեղեցին ամրոր ու կենսունակ պահող հավատացյալներ:

Վեհափառ Հայրապետի հանդիպումներից հետո այդ երեք հաստատություններում սկսվեցին կրոնագիտական և եկեղեցագիտական դասախոսություններ:

ՎԵՀԱՓԱՐՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԲՐՑՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ
(28 փետրվար 1990 թ.)

Այս պահին երջանիկ եմ իմ ողջույնը և օրհնությունը քերելու Բյուտովի անվան լայն կրթական գիտական մեծ հաստատության՝ տնօրենությանը, դասախոսական կազմին, ուսանողությանը և բոլոր ներկաներին:

Ինչպես հիշեց ձեր պրոռեկտորը, առաջին անգամն է, որ Հայաստանում Ամենայն Հայոց Խաթողիկոսը հանդիպում է ունենում քարձրագույն մի կրթական հաստատության, համալսարանական ուսանողության հետ: Արդեն 35 յուսրի է լրանում, ինչ կաթողիկոս եմ այստեղ՝ Հայաստանում, այսպիսի առիթ չէր ներկայացել: Սա թղջունելի է, բնականաբար: Ես խորապես զգացված եմ, որ ձեզ խոսելու առիթը ունեմ այս հարկի տակ: Եվ թույլ տվեք մի պահ մտքով գնայի իմ անցյալը դճալ, մի 60 տարի ետ, երբ ես էլ ձեր տարիքը ունեի մոտավորապես, իբրև Բուխարեստի պետական համալսարանի ուսանող: Ես այնտեղ արձանագրվել էի գրականության և փիլիսոփայության ֆակուլտետում, ընտրելով իբրև առաջին գլխավոր առարկա՝ մանկավարժությունը, երկրորդը՝ հոգեբանությունը և երրորդը՝ ընկերային դիսցիպլինաները: Պետք է ասեմ, որ իմ իրանքի ամենալավ հիշատակները ունեմ այդ ժամանակներից: Սարսուռով մոտք էի գործում համալսարանի դռնից և հետևում, թույլ տվեք ասել, շատ ֆարեխղճությամբ,

թյան ոգի և մանավանդ խանդավառության կրակ և հավատք դեպի մեր ժողովրդի ապագան, ինչքան էլ դժվարությունների հանդիպենք այսօր:

Մի՛ վախենաք դժվարություններից: Վերջերս, խոսակցության ժամանակ, մի բարեկամ ասում էր մտահոգված, թե՛ Վենափառ, ինչպե՛ս պիտի ավարտվի մեր արդար դատը, Ղարաբաղյան դատը: Ես ասացի՝ գիտե՛ք, եթե Ղարաբաղյան դատը անմիջապես, մեր ուզածի պես լուծվեր, դա նման չէր լինի հայոց պատմության: Երկու հազար տարի է գրեթե, մեր ոչ մի քաղաքական հարց մեր ուզած ձևով չէ լուծված: Ամբողջ հայոց պատմությունը մի պայքար է գոյատևման և ինքնապաշտպանության: Եվ գուցե դրա մեջ է գաղտնիքը մեր ժողովրդի հոգևոր մշակությանին արժեքների ծաղկման, որովհետև տառապանքների գնով, դժվարությունների գնով է, որ ստեղծվում են մեծ արժեքներ: Հիմ հոռմեացիք ասում էին «per aspero ad astero» աչիմքն՝ «Դժվարությունների ճանապարհով դեպի աստղեր կարելի է հասնել»: Ահա այս հոգեբանությունը, կարծեմ, մենք պետք է որդեգրենք, և ինչ էլ որ լինի ղարաբաղյան հարցի վերջնական կամ ժամանակավոր լուծումը, պետք է պահենք մեր հավատքը մեր ուժերի վրա, մանավանդ մշակությանին, ոգեկան ուժերի վրա, պետք է պահպանենք մեր հույսը և ապագայի մեր լավատեսությունը:

Հիմա ես ուզում եմ մի պարագա էլ ընդգծել: Իբրև կաթողիկոս, հոգեվորականի իմ հանգամանքով, անշուշտ, ւսռավել խորհրդանշում եմ մեր անցյալը, մեր անցյալի արժեքները: Մեր Եկեղեցին 1700 տարիների պատմություն ունի, աշխարհի ամենավաղերակյան քրիստոնեական Եկեղեցիներից մեկն է, որ ստեղծագործորեն ապրած է քրիստոնեությունը, ոչ թե իբրև դրսից ներմուծված ինչ-որ կրոնական հավատք: Մենք ուղղակի բուն աղբյուրից, Քրիստոսի Ավետարանից, Քրիստոսի առաքյալներից ենք ստացել քրիստոնեական լույսը և յուրովի ստեղծագործորեն, ազգային ձևերով դրսևորել ենք այն և փառավորել աշխարհով մեկ: Ես, իբրև հոգևորական, առավել կապված եմ մեր անցյալ արժեքներին, մեր գրաքար լեզվին, մեր հին մատենագրությանը, մեր հին հեղինակներին՝ սկսած Մեսրոպ Մաշտոցից մինչև 19-րդ դարի հոգևորական մեր հեղինակները: Այնուամենայնիվ, ես պարտք եմ համարում ձեզ այսօր խորհուրդ տալ, որ ծանոթանալով հանդերձ մեր անցյալի մշակույթի արժեքներին, չուրացնելով դրանք, իբրև հիմքը մեր ազգային ժառանգության, պետք չէ բավարարվեք դրանով: Պետք է առաջ գնաք և նոր արժեքներ ստեղծեք, հնի արմատների վրա: Այն ժողովուրդը, որ կանգնած է մնում միայն իր անցյալի արժեքների վրա, մեռնող ժողովուրդ կարող է դառնալ: Տեսեք, վերջին տասնամյակներին մեր ժողովրդի ահավոր, ամենամեծ ողբերգությունից հետո, որ եղավ 1915-ի ցեղասպանությունը, երբ մենք կորցրինք մեր ազգի կեսից սովելին, և մեր ժողովուրդը համարյա հուսահատ վիճակի մեջ էր գտնվում, այնուամենայնիվ նա կարողացավ իր ուժերը հավաքել այս վերջին տասնամյակներին ու նոր արժեքներ ստեղծել հնի հիմքերի վրա: Այդպես է, որ ծնունդ առան Եղիշե Չարենցը, Թամանյանը ճարտարապետ, որ Երևանի հայկական քաղաքը ստեղծեց: Գիտության, երաժշտության, նկարչության մեջ մեծեր ունեցանք: Մեր ժողովուրդը կարողացավ, հակառակ իր մեծ ողբերգություններին, իր ուժերը մեկտեղել և նոր արժեքներ ստեղծել: Ուզում եմ հատկապես հիշել մեկի անունը, որ, իմ կարծիքով, առավելագույն չափով ներկայացրել է հայ ժողովրդի ազգային մշակութային արժեքը. դա Արամ Խաչատրյանն է: Իբրև երաժիշտ, գուցե նա միակն է մեր բոլոր մե-

գավոր Տրդատը նույն հալածանքները սկսեց Հայաստանի մեջ, երբ զոհվեցին Հռիփսիմյանց և Գալանյանց եղբայրը, հենց այնտեղ, ուր այսօր նրանց տաճարները կան: Ահավասիկ այդպիսին եղավ այդ շրջանին հայ քրիստոնյաների ճակատագիրը:

Սակայն 8-րդ դարու վերջերին և 4-րդ դարի սկիզբներին Տրդատ թագավոր, որ ինքը հալածող էր քրիստոնյաներին, անդրադարձավ և ոչ միայն հալածանքը դադարեցրեց և Սուրբ Գրիգոր Լուսավորչին ազատեց Խոր Վիրապի բանտից, այլ ինքը մկրտվեց իբրև քրիստոնյա, իր ամբողջ ընտանիքով և ժողովրդով: Այսպես քրիստոնեությունը դարձավ համայն հայ ժողովրդի ազգային կրոնքը: Հայերը հրաժարվեցին ընդմիշտ հեթանոսական չաստվածների հավատալիքներից: 801 թվին սկսեց կազմավորվել Հայաստանյայց եկեղեցին:


Ժուռով Էջմիածնում խորհրդակցական լայն ժողով պիտի տեղի ունենա, նաև արտասահմանից ժամանած ներկայացուցիչներով, կազմելու համար նախագիծ-ծրագիրը մեր եկեղեցու 1700-ամյակի տոնակատարությանը, որ տեղի պիտի ունենան 2001 թվականին:


Հարց կե՞սգի, թե ինչո՞ւ համար Տրդատ թագավոր միանգամից շրջեց իր քաղաքականությունը և քրիստոնեությունը ընդունեց: Բնականաբար ազդվեց որոշ չափով Սուրբ Գրիգոր Լուսավորչի կրոնական քարոզչությունից, քրիստոնեական վարդապետության վեհ գաղափարներից, բայց հավանական է, որ նա ունեցավ նաև այլ պատճառ, կարծում եմ քաղաքական: Հայաստանը այն ժամանակ իր աշխարհական դիրքով գտնվում էր հզոր կայսրությունների միջև, արևելքից Պարսկաստանը, հեթանոսական Պարսկաստանը, իսկ արևմուտքից՝ հելլեն հռոմեացիք: Հայ ժողովրդի վրանգ կապառնար իր ինքնուրույն դիմագծությունը կորցնելու, իր քաղաքական անկախությունը կորցնելու, գտնվելով պարսկական պետության պարտադիր բարեկամության ներքև: Տրդատ թագավոր որդեգրեց քրիստոնեությունը, որպեսզի գոնև հոգևոր անկախությունը պահպանի հայ ժողովրդի և քրիստոնեությամբ պաշտպանվի հեթանոսական Պարսկաստանից: Եվ այդպես էլ եղավ, քրիստոնեության մուտքով հայ ժողովրդը իր ազգային դիմագծությունը սկսավ կազմավորել, ձևավորել, մի պրոցես, որ տևեց մոտ 100 տարի: Առաջին շրջանին Հայ եկեղեցու մեջ հենց Էջմիածնի առնարկով, բոլոր արարողությունները տեղի էին ունենում ասորերեն կամ Բուճարեն, երգվե՞նտ հայեր՝ և գրավոր լեզու չկար: Այդ մեծ գործը իրականացրեց Մուր Բեբույ Մաշտոց, որ 5-րդ դարու սկզբներին հորինեց հայ լեզվի այբուբենը, թարգմանեց Աստվածաշունչը Սուրբ Սահակի և մյուս թարգմանիչների հետ միասին, հայերեն սքանչելի գրաբար լեզվով, որ մինչև հիմա էլ մենք օգտագործում ենք, և որ գիտականների հաստատմով, 5-րդ դարի հայերեն թարգմանված Սուրբ Գիրքը նկատվում է թարգմանությունների մեջ թագուհի: Այսպես սկիզբ առավ հայ դպրությունը և հայ գրականությունը: Այսպիսով հիմքերը դրվեցին հայ ժողովրդի ազգային ոգեկանության և մշակույթին:

Հայ եկեղեցին մի ուրիշ հաղթանակ ևս իրագործեց ազգային տեսակետից. կազմակերպեց և ոգեշնչեց Լույս 5-րդ դարում, 451 թվականին Ավարայրի ճակատամարտը, Վարդան Մամիկոնյանի ճակատամարտը ընդդեմ պարսիկների: Պարսիկները տեմնելով, որ քրիստոնեությունը ընդունելով, հայերը հետզհետե իրենց ազգային գիտակցությունը ամրացրին և անկախացան հոգեպես, որոշեցին քրիստոնեությունը ջնջել Հայաստա-

նը՝ մարդասիրական, խաղաղասիրական, ազատասիրության և արդարասիրության մի հոյակապ ուսմունք է, համամարդկային կյանքի հորիզոնի վրա ճառագայթող, երկու հազար տարիներից ի վեր:

Երիտասարդներ, մաղթում եմ ձեզ ուժ, կորով, ներշնչանք, տևապես աշխատելու եռանդ, որպեսզի անեք, ծաղկեք, հասունանաք և դառնաք մեր ժողովրդի պարծանքը վաղը և միշտ. ամեն:





ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

«Ես դնեմ զձեռս ի վերայ սոցա, և դուք ամենեքեան աղօթս արարեք»:

1989 թ. սեպտեմբերի 10-ին հոգևոր մը-
խիթարության և ուրախության օրեր եղան
Երևանի Ս. Սարգիս եկեղեցում: Այդ օրը
տեղի ունեցավ Ս. Էջմիածնի հոգևոր ճե-
մարանի շրջանավարտներ Մանվել սար-
կավազ Մաթևոսյանի և Վաչե սարկավազ
Ջիրեկյանի քահանայական ձեռնադրու-
թյունը՝ ձեռամբ Արարատյան հայրապե-
տական թեմի առաջնորդական փոխանորդ
գերաշնորհ Ս. Գարեգին եպս. Ներսիսյա-
նի:

Նախորդ օրը, շաբաթ երեկոյան, կիրակ-
նաւուտի ժամերգության ավարտին, Երե-
վանի Ս. Հովհաննէս եկեղեցում կատար-
վել էր նորընծաների քահանայական կոչ-
ման կարգը՝ ձեռամբ Գարեգին եպիսկո-
պոսի և խարտաւիյականության Ս. Մակար
արք. Հովհաննիսյանի:

Արարողության ընթացքում նորընծանե-
րը հանդիսավորությամբ հաճն առան
«Ամենայն պատրաստութեամբ և առանց
ձանձրանալու կալ պաշտօն Աստուծոյ և ոչ
խափանել զգործն Աստուծոյ վասն մարմ-
նաւոր գործոց...»:

Կիրակի օրը, առավոտյան, Երևանի ա-

ռաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում
սկսվում է ս. պատարագը: Օրվա պատա-
րագից էր Արարատյան Հայրապետական
թեմի առաջնորդական փոխանորդ գերա-
շնորհ Ս. Գարեգին եպս. Ներսիսյանը:

«Հի ողորմած և մարդասէր ես Աստ-
ուած» աղոթքից հետո սարկավազները,
խարտաւիյակի առաջնորդությամբ, եկեղե-
ցու սեղանի ձախակողմյան աստիճանե-
րով բարձրանում են Ավագ խորան և,
դառնալով դեպի ժողովուրդը, ձեռամբարձ
հրաժարվում աշխարհից՝ կոչվելու հա-
մար «...ի սարգաւագութենէ ի քահանա-
ւութիւն արքոյ եկեղեցոյ ի ապաստորու-
թիւն՝ ըստ վկայութեան անձանց իրեանց
և ամենայն ժողովրդեան»:

Աշխարհիկ կյանքից հրաժարումից և
«Աստուածային և երկնային շնորհ» շա-
րականից հետո նորընծաները ծնրադիր
մոտենում և բոլորվում են ձեռնադրող
սրբազան հոր շուրջը, իսկ սրբազան իր
ձեռքը դնելով նրանց գլխներին, արտա-
սանում է. «Ես դնեմ զձեռս ի վերայ սո-
ցա, և դուք ամենեքեան աղօթս արարեք,
զի արժանի լիցին զաւտիճան քահանա-

յութեան անարատ պահել առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ» աղոթքը: Նորընծաներին շնորհվում է փիլոն, սաղավարտ, փորուրար և շուրջառ: «Խորհուրդ խորին» շարականի երգեցողության հետ փակվում է վարագույրը:

Ս. պատարագը շարունակվում է մինչև «Ողջոյն տուք միմեանց» քարոզը: Օծման խորհրդավոր ու հուզիչ պահն է: Ձեռնադրող սրբազան հայրը սրբալույս մեռնող օծում է քահանայական լրիվ գգեստավորման մեջ գտնվող նորընծաների ճակատին ու ձեռքերը և նրանց վերանվանում նոր անուններով. Մանվել արկ. Մաթևոսյանին՝ Տ. Հովհան քահանա, Վաչե արկ. Զիրեկյանին՝ Տ. Թադեոս քահանա:

Քահանայական օծում ստանալուց հետո նորընծաները դառնում են դեպի ժողովարդը և տալիս իրենց առաջին օրհնությունը՝ «Խաղաղություն ամենեցուն»:


Հավարտ ձեռնադրության և օծման ա-

րարողության ձեռնադրող սրբազան հայրը խոսում է ոգեշունչ մի քարոզ՝ շնորհավորելով նորընծա քահանաներին և հույս հայտնելով, որ նրանք իրենց ապագա եկեղեցանվեր գործունեությամբ միշտ բարձր կպահեն հայ հոգևորականի սուրբ և նվիրական կոչումը:

Հաջորդ օրը, երեկոյան ժամերգությունից հետո, կատարվում է «Օրհնություն աբեղայի» և «Օրհնություն վեղարի» կարգը՝ ըստ Ձեռնադրության Մաշտոցի, և նորընծա Տ. Թադեոս քահանան ստանում է կուսակրոն քահանայության խորհրդանիշ վեղար:

*
* *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ևս շնորհավորում է նորընծաներին, մաղթելով անմնացորդ նվիրում՝ ի ապաստարանություն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուց և հայ ժողովրդին:





Տ. ՀՈՎՆԱՆ ՔԱՀԱՆԱ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Ծնվել է 1960 թ. հոկտեմբերի 8-ին, Էջմիածին քաղաքում:

1968—78 թթ. սովորել և ավարտել է տեղի № 2 միջնակարգ դպրոցը:


1979—81 թթ. ծառայել է խորհրդային բանակում:

Զորացրվելուց հետո ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1986 թ. փետրվարի 14-ին ձեռնադրվել է սարկավագ:

1987 թ. պաշտպանել է ավարտաճառ՝ «Մկրտության խորհուրդը» թեմայով:

Այժմ աշխատանքի է նշանակված Եղվարդ ավանի Ս. Աստվածածին եկեղեցում:



Տ. ԹԱԴԵՈՍ ԱԲԵՂԱ ՋԻՐԵԿՅԱՆ

Ծնվել է 1961 թ. սեպտեմբերի 16-ին, Երևան քաղաքում:

1968—78 թթ. սովորել և ավարտել է Երևանի Չարենցի անվան միջնակարգ դպրոցը:


1982 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:


1986 թ. դեկտեմբերի 25-ին, ձեռամբ Մայր տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթրոքյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1987 թ. ավարտել է հոգևոր ճեմարանի իրիվ դասընթացը:

1987—89 թթ. սովորել և աստվածաբանության թեկնածուի գիտական աստիճանով ավարտել է Մոսկվայի հոգևոր ակադեմիան՝ պաշտպանելով «Հալ-կաթոլիկ հարաբերությունները Կիլիկյան թագավորության շրջանում (1080—1375 թթ.)» թեմա:

Այժմ հոգևոր ծառայության է զբաղակա՞ն Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմում:





ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍԵ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սույն թվականի փետրվարի 18-ին, Երեւանի առաջնորդանիստ Ս. Սարգիս Եկեղեցում, Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ և ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին եպս. Ներսիսյանի, տեղի ունեցավ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի երկու շրջանավարտ սաների քահանայական ձեռնադրությունը՝ խարտավիականությամբ Տ. Կարապետ աւվագ քնն. Գլխանի:

Նախօրոք ձեռնադրյալները՝ բարեշնորհ Սերժիկ արկ. Մանուդյանը և բարեշնորհ Սիմոն արկ. Սողոմունյանը, դիմել էին Վեհափառ Հայրապետին՝ փափագ հայտնելով իրենց կյանքը նվիրել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու սպասավորությանը, իբրև քահանա:

Քահանայակոչման կարգի ժամանակ նրանք խոստացան զամեն ինչ առնուլ և կատարել զամենայն հրամանս արքեպատրիարքի և հայրապետացն և կալ ըստ կանոնաց նոցա:

Փետրվարի 18-ին, կիրակի օրը, Ս. Սարգիս եկեղեցու Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Գա-

րեգին եպս. Ներսիսյանը: Պատարագի ընթացքում գերաշնորհ արքագան հայրը կատարեց բարեշնորհ սարկավագների քահանայական ձեռնադրության արքագան արարողությունը: Նորընծաները, բարձրացնելով ձեռքները, հրաժարվեցին աշխարհիկ կյանքից: Ապա, ըստ «Ձեռնադրության Մաշտոց»-ի, ստացան քահանայական փիլոն և պատարագի զգեստներ: Ձեռնադրող արքագանը արքայույս մեռոնով օծեց քահանայական լիվ զգեստավորության մեջ գտնվող նորընծաների ճակատները, վերանվանելով Սերժիկ սարկավագին՝ Տեր Զարեհ քահանա, իսկ Սիմոն սարկավագին՝ Տեր Տիրան քահանա:

Վերջում նորընծաներին ողողված շնորհավորանքի ու բարեմաղթությունների խոսք ստաց արքագան հայրը՝ տալով իր խորհուրդներն ու օրհնությունները:

* * *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ևս շնորհավորում է նորընծաներին՝ մաղթելով, որ լինեն նվիրյալ սպասավորները Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և հավատացյալ հայ ժողովրդի:

Տ. ԶԱՐԵԷ ՀԱՀԱՆԱ ՄԱՆՍՈՒՐՅԱՆ

Ծնվել է 1964 թ., Իրանի Թեհրան քաղաքում:

1970 թ. ընտանիքով տեղափոխվել են Հաստատաճ և բնակություն հաստատել Լեւոնեան քաղաքում:

1972—80 թթ. սովորել և ավարտել է տեղի № 35 միջնակարգ դպրոցի ութամյա դասընթացը:

1980 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1982—84 թթ. ծառայել է խորհրդային բանակում:


Զորացրվելուց հետո շարունակել է ուսումնո հոգևոր ճեմարանում:


1988 թ. ձեռնադրվել է սարկավագ, ձեռամբ Մալո տաճարի լուսարարապետ գերաշրնոբի Տ. Հուսիկ արքեպս. Սանթրոբյանի:

1988—90 թթ., հոգևոր ճեմարանում ուսումն ավարտելուց հետո, աշխատել է Մալո տաճարի թանգարանում:

1989 թ. մայիսի 12-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Ժողովրդ» և «Իմաստութիւն Սողոմոնի» գրքերի մեկնությունները ըստ Գրիգոր Տաթևացու» թեմայով:

Ներկայումս ծառայության է նշանակված Էջմիածնի Ս. Հովսիսիմե վանքում որպէս ծիսակատար քահանա:





Տ. ՏԻՐԱՆ ՔԱՀԱՆԱ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ



Ծնվել է 1964 թ. հունիսի 26-ին, Չա-
րենցավան քաղաքում:

1971—74 թթ. սովորել է տեղի № 2

միջնակարգ դպրոցում:

1974 թ. ընտանիքով տեղափոխվել են
Էջմիածին: Կրթությունը շարունակել է Էջ-
միածնի Խ. Աբովյանի անվան միջնակարգ
դպրոցում և ավարտել 1981 թվականին:

1981 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հո-
գևոր ճեմարան:

1983—85 թթ. ծառայել է խորհրդային
բանակում:

Զորացրվելուց հետո վերադարձել է
Մայր Աթոռ և շարունակել կրթությունը
հոգևոր ճեմարանում:

1988 թ. մայիսի 12-ին, ձեռամբ Մայր
տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ.
Հուսիկ արքեպս. Սանթրոքյանի, ձեռնա-
դրվել է սարկավագ: Նույն տարին, ավար-
տելով հոգևոր ճեմարանի դասընթացը,
աշխատանքի է նշանակվել Մայր տաճա-
րի թանգարանում:

1989 թ. մարտի 15-ին պաշտպանել է
ավարտաճառ՝ «Գրիգոր Տաթևացու «Առա-
կաց մեկնություն»-ը» թեմայով:

1989 թ. հուլիսի 1-ից ծառայության է
նշանակվել Երևանի Ս. Սարգիս եկեղեցում
որպես սարկավագ:

Ներկայումս ծառայության է նշանակ-
ված Ս. Սարգիս եկեղեցում որպես ծիսա-
կատար քահանա:



երեսուն և վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, և պատարագ մատուցեց հոգևոր ճեմարանի տեսուչ գերաշնորհ Տ. Անանիա եպս. Արարաջյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակվող քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* *

Փետրվարի 25-ին, կիրակի.—Բուն Բաբելենդան:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Մակար քհն. Տերտերյանը:

«Հայր մեր»-ից առաջ Մայր տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթրոքյանը ընթերցեց Վեհափառ Հայրապետի դամբանական խոսքը՝ Տ. Եղիշե Պատրիարք Տերտերյանի մահվան առթիվ:

* *

Մարտի 4-ին, կիրակի.—Արուսեաման կիրակի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Խաչատուր քհն. Ֆրանկյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Տ. Ստեփանոս վրդ. Չաքալյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* *

Մարտի 7-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* *

Մարտի 11-ին, կիրակի.—Անառակի կիրակի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, պատարագ մատուցեց Տ. Նաթան վրդ. Հովհաննիսյանը:

«Հայր մեր»-ից առաջ Կ. Պոլսի Հայոց Պատրիարք նորոգ հանգուցյալ Տ. Շնորհք արքեպս. Գալուստյանի մահվան առթիվ արտահույզ խոսք ասաց Վեհափառ Հայրապետը:

Հավարտ պատարագի կատարվեց հոգեհանգուցյան արարողություն:

* *

Մարտի 14-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* *

Մարտի 18-ին, կիրակի.—Տնտեսի կիրակի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Կանադայի հայոց թեմից ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Գարեգին քհն. Կարապետյանը:

«Հայր մեր»-ից առաջ բովանդակվող քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը:


* *

Մարտի 25-ին կիրակի.—Դատաւորի կիրակի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Կոմիտաս քհն. Հարությունյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Տ. Նաթան վրդ. Հովհաննիսյանը:





ՀԱՎՈՐԱԾ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐՈՂԱՊԵՏ ԳԸԼՆԾՅԱՆ

ՄԱՐԹԻՆ ԼՈՒԹԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐԵՎԱՐԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1520 թվականի կեսերին Լութերի հակա-մարտությունը պապականության հետ այն աստիճան էր սրվել, որ համաձայնության գալու կամ կացությունը մեղմելու որևէ հնարավորություն այլևս չկար: Նման եզրակացության էին հանգել ոչ միայն պապականները, այլև հենց ինքը՝ Լութերը:

Ի դեպ, Լութերը լինելով անխույզ մի աշխատող՝ ապշեցուցիչ կարողությամբ և հետևողականությամբ պատասխանում էր իր հակառակորդների բոլոր գրություններին: 1519 թվականին նրա բեղուն գրչից դուրս ելան գերմաներեն լեզվով գրված այնպիսի կրոնական ճառեր, որոնք հետագայում առանցք կազմեցին 1520 թ. նրա բարեկրթողական գլխավոր գրություններին: Հիշյալ ճառերը նվիրված էին «Հայր մեր»-ի մեկնությանը, Քրիստոսի չարչարանքներին, Ավագ շաբաթին, ապաշխարությանը, խոստովանանքին, ամուսնությանը, մկրտության և ս. Հաղորդության խորհուրդներին, Քրիստոսի ծննդյանը, Տասնաբանյա պատվիրաններին, վաշխառությանը, ինչպես նաև մահվան նախապատրաստվելու անհրաժեշտությանը:

Այս բարեպաշտական ճառերում Լութերը ընդհանրապես չի շեղվում Եկեղեցու որդեկրան ավանդական տեսակետներից: «Մահվան նախապատրաստվելու անհրաժեշտության» մասին գրելիս՝ եա հույճիսկ հանձնարարում է դիմել սրբերի, հրեշտակների և Աստվածամոր բարեխոսությանը:

Միայն մի քանի դեպքերում արտահայտում է նոր տեսակետներ, երբ, օրինակ, խոսում է բոլոր հավատացյալների ընդհանրական քախանայության կամ ս. Հաղորդության առթիվ Տիրոջ մարմնի և արյան բաշխման մասին:

Բարեպաշտական այս գրությունների վրա պետք է ավելացնել նաև հետևյալը. «Չորեքշաբասն պատճառք միսիթարության վաան վատակեալ և ծանրաբեռնեալ անձանց (Iessaradecas consolatorio pro Laborantibus et Oneratis), որը խմբագրվել էր լատիներեն և գերմաներեն լեզուներով ու նվիրվել կայսրընտիր Ֆրիդրիխ Իմաստունին, իբրև միսիթարանք նրան, որովհետև կայսերական ընտրության մասնակցելուց հետո նա հիվանդացել էր: Սույն աշխատության մեջ նկատի են առնված մարդկանց պատահող չարիքները, որոնք չեզոքանում են Քրիստոսով, նրա հանդեպ հավատով, նրա կողմից մարդկանց արդարանալով: Դրա համար էլ Քրիստոսով արդարանալը Լութերի կողմից նկատվում է միսիթարությունների մեծագույն պատճառը:

1520 թվականին Լութերը հրատարակում է Եկեղեցու բարեկարգության վերաբերյալ իր գլխավոր գրությունները.

ա. «Ճառ վաան բարի գործոց»:

բ. «Յաղագս՝ պապականությանն և ի Հռոմ. ընդդեմ մեծանշակ հոռվմանական և Լապպիգո»:

գ. «Առ քրիստոնեայ ազնուականն գերմանացոց»:

դ. «Յաղագս Եկեղեցւոյ բարեղոնեան գերութեան»:

ե. «Յաղագս ազատութեանն քրիստոնէի»:

1. «Ծառ վասն բարի գործոց»-ը, որ ձեռնված է Սաքսոնիայի Յոհաննես դքսին՝ կայսրընտիր Ֆրիդրիխ Իմաստունի եղբորը, համարվում է մախերգանքը յուրաքանչյուր քարեկարգության: Մինչ այդ Լույթերը հաճախ արտահայտվել էր միայն հավատով արդարանալու հնարավորության մասին, որի համար էլ շատերը մեղադրում էին նրան՝ ասելով. «Միայն հավատով արդարանալու վարդապետությունը, որ դու քարոզում ես, և որը դատաւարտում է յուրաքանչյուր քարեկական կամ ճգնաժամական նկրտում, շնչում և արհամարհում է բարի գործերը»:

Սակայն երբ Լույթերը շեշտը դնում է հավատով արդարանալու վրա, բնավ չի ուզում ստորագնահատել գործերը: Ըստ նրա, հավատը այն ծառն է, որ Սուրբ Հոգու միջոցով բուսնում է մարդու հոգում, և բարի ծառը ճանաչելի է դառնում միայն իր տված պտուղներից, իսկ այդ պտուղները, այս դեպքում, հավատի արգասիքը հանդիսացող բարի գործերն են: Նա գրում է.

«Առաջին հերթին պետք է իմանալ, որ լավ գործերը միայն այն գործերն են, որոնք Աստուծո կողմից են պատվիրված, ինչպես որ մեղքերը միայն այն մեղքերն են, որոնք Աստուծո կողմից են արգելված: Դրա համար էլ ով կամենում է բարի գործերը ճանաչել կամ կատարել դրանք, բավական է, որ ճանաչի Աստուծո պատվիրանները: Քրիստոս այսպես է պատգամում. «Եթե կամենում ես հավիտենական կյանք մտնել, պահի՛ր պատվիրանները» (Մտթ. ԺԺ 17): Իսկ երբ երիտասարդը հարցնում է Քրիստոսին, թե ի՞նչ պետք է անի դրա համար (Մտթ. 18), նա Տասնաբանցյա պատվիրաններից բացի՝ այլ բան չի դնում նրա առաջ: Հետևաբար, մենք պետք է տվորենք գնահատել բարի գործերը՝ համաձայն աստվածային պատվիրանների և ոչ թե ելնելով դրանց արտաքին երևույթից, մեծությունից կամ քանակից, ոչ էլ համաձայն մարդկային բարեհաճության, օրենքների կամ տեսակետների, մի բան, որ նախկինում կատարվել է և այժմ էլ տեսնում ենք, թե կատարվում

է՝ որպես մեծագույն արհամարհանք աստվածային պատվիրանների:

«Առաջին անհավսելի և ազնվագույն բարի գործը հավատն է հանդեպ Քրիստոսի, ինչպես որ նա ասում է, երբ հրեաները հարց են տալիս նրան. «Ի՞նչ անենք, որ Աստուծո ուզած գործերը գործենք» (Հովհ. 2 28). «Աստուծո ուզած գործը այն է՝ որ հավատաք նրան, ում նա ուսուցում է և պատասխանը: ...Այն դարկեց, լինում է պատասխանը: ...Այն գործի մեջ պետք է պարփակվեն մնացյալները և արանի՛ց պետք է ստանան իրենց բարության դրոշմը. այս մեկը ուժեղ կերպով պետք է ընդգծենք, որպեսզի հավսանալի դառնա բոլորին:

«Ծանալում ենք շատերին, որոնք աղոթում են, ծով պահում, հաստատություններ հիմնում, այս կամ այն բանն են իրագործում, մարդկանց առաջ բարի կյանք վարում: Սակայն եթե դու նրանց հարց տաս, թե արդյոք վստահ եմ, որ այն, ինչ կատարում են, հաճելի է Աստծուն, պատասխանը կլինի՝ ո՛չ: Նրանք այդ չգիտեն կամ էլ կասկածում են իրենց արածի վրա: Բացի այդ, կան իմաստուններ, որոնք նրանց մոլորեցնում են՝ ասելով, որ անհրաժեշտ չէ վստահ լինել իրենց կատարած գործի մասին, թե այն աստվածահաճո՞ւ է կամ ոչ. դրա համար էլ ուրիշ բան չեն անում, բացի նրանց բարի գործեր տվորեցնելուց: Ի վերջո հիշյալ բոլոր գործերն էլ հավատից դուրս են, հետևաբար դրանք ոչնչություն են: Այս իսկ պատճառով երբ ես շեշտում եմ հավատի կարևորությունը և դատաւարտում անհավատ գործերը, մեղադրվում եմ նրանով, որ իբրեւ արգելում եմ բարի գործերը, միևնույն ես ցանկանում եմ նրանց տվորեցնել հավատի իմական բարի գործերը:

«Եթե դու շարունակես նրանց հարց տալ, թե նրանք բարի գործ համարում են արդյոք աշխատանքը արհեստանոցում, ինչպես նաև քայլերը, ոտքի կանգնելը, ուտելը, խմելը, պատկելը ու մյուս աշխատանքները, որ մկրված են մարմնի սնուցման կամ հարգության օգտին և որոնցով նրանք պիտի կարողանան հաճույանալ Աստուծո, պատասխանը դարձյալ լինում է՝ ո՛չ, որովհետև նրանք այնքան սահմանափակում են բարի գործերը, որ իբրև աքյախիք նկատի ունեն միայն եկեղեցում աղոթելը, ծոմապահությունը ու ողորմություն տալը. մնացյալները նրանց համար համարվում են անօգուտ և Աստուծո առաջ էլ՝ անարժեք»:

¹ Ricardo Garcia—Villoslada, Martín Lutero, I, Madrid 1976, էջ 444.

² M. Luther, Ausgewählte Schriften, Frankfurt—M, 1983, I, էջ 41—43.

Այս կապակցությանը կաթոլիկ մի հեղինակ մեղադրում է Լույթերին՝ ասելով. «Լույթերը չի՝ կարդացել սուրբ հայրերի, միջին դարի աստվածաբանների և Պողոս առաքյալի թղթերը մեկնողների երկերում, թե աշխատելը, ուսելը, խմելը կամ որևէ այլ գործ կարելի է և պետք է կատարել **«Աստուծո լիազոր»** (Ա. Կորնթ. Ժ 31)³»:

Վերոհիշյալ մեղադրանքն անշուշտ անտեղի է: Լույթերի նպատակը ոչ թե մի նոր վարդապետություն առաջ քաշելն է, այլ գոյություն ունեցող ճշմարտությունը վերականգնելը, ինչ որ բարի գործերի դեպքում խախտվել էր շատերի մեջ կամ մոռացության տրվել. իսկ հավատը բոլոր բարի գործերի նախապայմանը համարելով՝ նա հանդես է գալիս իբրև ճշմարիտ քրիստոնյա, որի յուրաքանչյուր խոսքը, մտածումը կամ շարժումը մղված պետք է լինի հավատից: «Ամենայն ինչ, որ հավատից չէ, մեղք է» (Հռոմ. ԺԿ 23): Հավատի և գործերի հարաբերակցության մեջ Լույթերի բերած նոր տեսակետը միայն այն է, որ նա հավատին է տալիս նախապատվությունը, հավատ, որ միայն գործերի մեջ է դրսևորվում և գործերի միջոցով տալիս իր արգասիքը, այլապես առաքյալի ասածի նման կլինի. «Հաստ առանց գործոց մեռելավ» (Հակոբոս Բ 17):

2. «Յաղագս պապականությանի հըռոլմ. ընդդեմ մեծահոշակ հոռվմեականին ի Լալպցիզ»: Այստեղ «մեծահոշակ հոռվմեական» ասելով Լույթերը նկատի ունի Առգուստին Ալֆելդին (1480—1535), որն անդամ էր Լալպցիզի ֆրանցիսկյան միաբանության և որը 1520 թվականի ապրիլին լատիներեն մի գրություն էր խմբագրել Լույթերի դեմ՝ ապացուցելով, որ պապականությունը հաստատված է Ս. Գրքի խոսքերի վրա և դրա համար էլ աստվածահաստատ մի իշխանություն է: Լույթերը անձամբ չէր պատասխանել այդ գրությանը, սակայն շուտով Ալֆելդը միևնույն հարցի շուրջ հրատարակում է մի գրքույկ գերմաներեն լեզվով:

Այս պարագան ստիժ է տալիս Լույթերին մի անգամ ևս հրապարակ իջնելու, որովհետև վերոհիշյալ գերմաներեն գրքույկը կարող էր մոլորեցնել պարզ ժողովրդին և շատերին իր դեմ լարել: Այս մտահոգությանը էլ նա գրում է իր պատմականը՝ «Յաղագս՝ պապականությանի հըռոլմ. ընդդեմ մեծահոշակ հոռվմեական»:

Այն ի Լալպցիզ: «Մեծահոշակ» բառը այստեղ ծաղրական իմաստով է գործածված:

Լույթերը դեմ է եղել կղերապետության: Նրա համար իսկական քրիստոնեությունը Քրիստոսի բոլոր հավատացյալների միաբանությունն է երկրի վրա, որի միակ գլուխը Հիսուսն է: Նա ասում է.

«...Եթե պապականությունը աստվածային կարգավորությանը անվիճելի իշխանություն ունի ամբողջ քրիստոնեության վրա, ապա ուրեմն կարելի՝ է ասել, իբրև քրիստոնյա, թե աշխարհի բոլոր այն քրիստոնյաները, որոնք չեն ենթարկվում Հռոմի, հերետիկոս են և հերձվածող, եթե նույնիսկ մեզ նման նրանք միևնույն մղկերտությունը, միևնույն խորհուրդը, միևնույն Ավետարանն ու հավատո հանգանակներն ունեն, լոկ այն տարբերությամբ, որ նրանց իրենց եպիսկոպոսներին և քահանաներին Հռոմի կողմից հաստատել չեն տալիս կամ այդ իշխանությունը փողով չեն գնում, ինչպես որ այժմ անում են այստեղ. նրանք թույլ չեն տալիս, որ մեկը ծաղր ու ծանակի առարկա դարձնի իրենց, մի բան, որ գերմանացիները թույլ են տալիս: Այդպիսի քրիստոնյաներից են մոսկվացիները, սպիտակ ռուսները, հույները, բուհենացիները և այլ բազմաթիվ մեծ ժողովուրդներ աշխարհի մեջ:

«Ադո, ինչպես ես հաստատել եմ, այժմ էլ հաստատում եմ, որ վերոհիշյալ քրիստոնյաները ո՛չ հերետիկոսներ են և ո՛չ էլ հերձվածող: Նրանք միգուցե նույնիսկ մեզանից էլ լավ քրիստոնյաներ են, անշուշտ որոշ բացառություններով, ինչպես որ մեզանից ոչ բոլորը լավ քրիստոնյաներ են...»

«Ոչ ոք պետք է այնքան հիմար լինի կարծելու համար, թե պապի և նրա բոլոր հետևորդների ու շողորդորների լուրջ համոզմունքն է այն, որ պապական մեծածավալ իշխանությունը աստվածային տնօրինման արդյունքն է: Այս բանը երևում է նրանից, որ աստվածային կարգավորությունների նույնիսկ ամենաչնչին տառն էլ չի հարգվում Հռոմում, այլ, ինչպես երևում է, դրանք իբրև հիմարություն ծաղրի են ենթարկվում, երբ մեկը ակնարկություն է անում դրանց մասին: Նրանք նույնիսկ կարող են հանդուրժել, որ ամբողջ աշխարհում Ավետարանն ու քրիստոնեական հավատը գետինը մտնեն, միայն թե մի մազ անգամ չպակասի իրենց գլխից: Բացի դրանից, հոգևոր և աշխարհիկ առահակությունների բոլոր վատ օրինակները հորդում են Հռոմից, ինչպես մի ծովից ամեն տեսակ ապականություն՝ համայն աշ-

³ Ricardo Garcia-Villoslada, Martín Lutero. I, էջ 445.

խարհում: Հոտմը ապ բոլորի վրա ծիծաղում է, իսկ նա, ով ուրբում է դրանց վրա, նա միամիտ քրիստոնյա է նկատվում, այսինքն՝ հիմար: Իսկ եթե նրանց համար աստվածային տնօրինությունն իսկապես լուրջ նշանակություն ունենալ, նրանք պետք է զբաղվեին հազարավոր հրատապ խնդիրներով և հատկապես այնպիսի խնդիրներով, որոնց վրա այժմ ծիծաղում են: Հակոբոս առաքյալն ասում է. «Նա, ով մեկ բանով միայն ապացուցում է օրենքի հանդեպ՝ պարտական կլինի ամբողջ օրենքին» (Հակոբոս A 10): Հետևաբար ո՛վ պիտի ուզենար այնքան տխմար լինել հավատալու համար, թե նրանք աստվածային կարգավորությունը լոկ մի մասի մեջ են փնտրում, երբ նրանք մնացյալ մասերը ծաղրի են ենթարկում:

Իսկ Պետրոս առաքյալի գլխավորության մասին, որից ելնելով պապը, իբրև հաջորդ՝ Պետրոսի, իրեն իրավունք է վերապահում ամբողջ քրիստոնեության գլխավորը լինելու, Լուսեթը հետևյալն է գրում.

«Եր խոսքով և պատգամով Քրիստոս իր բոլոր աշակերտներին համահավասար իշխանություն տալով՝ նրանց ողորակեց աշխարհով մեկ: Ինչպես որ Պողոս առաքյալն է ասում՝ «Մենք պատգամավորներ ենք Քրիստոսի համար» (A Կորնթ. Բ 20) և կամ՝ «Ո՛վ է Պետրոսը՝ կամ ո՛վ է Պողոսը, պաշտոնյաներ, որոնցով հավատացիք» (Ա Կորնթ. Գ 5): Պատգամավորի պաշտոն ունենալ՝ նշանակում է արածել, կատարել, եպիսկոպոս լինել և նմանօրինակ այլ գործեր կատարել: Բայց երբ ասալը Աստուծո բոլոր պատգամավորներին իրեն է ենթարկում, անում է այն միևնույն բանը, ինչ որ պիտի աներ մի իշխանի պատգամավորը, երբ փորձեր կանգնեցնել իր մյուս պաշտոնակիցներին և նրանց իր կամքի համաձայն ողորակել, իսկ ինքն իր տեղից չշարժվեր: Դա հաճելի կլիներ իշխանին. անշուշտ թե նա նկատի կառներ այն:

«Իսկ եթե դու այսուհանդերձ ասես՝ «Այո՛, ստույգ է, որ մի պատգամավոր կարող է վերադառ լինել մի ուրիշից», ես էլ քեզ կասեմ, թե՛ «Մի պատգամավոր կարող է մյուսից ավելի լավ և ճարտար լինել, ինչպես որ Ս. Պողոսն էր՝ Պետրոսի համեմատությամբ: Բայց քանի որ նրանք եռուսն էլ միևնույն պատգամն են բերում, ուրեմն նրանցից ոչ մեկը իր մատուցելիք պաշտոնի տեսակետից առավելություն չունի մյուսի նկատմամբ:

¹ Լուսեթը «Ապոկոսի» փոխարեն «Պետրոս» է գրել:

«Եվ քանի որ Աստուծո կարգադրությամբ բոլոր եպիսկոպոսները իրար հավասար են և առաքյալների տեղն են բռնում, ուրեմն ես իրավամբ կարող եմ հաստատել, թե երևելի Եկեղեցու մեջ մարդկային տնօրինությամբ միայն մեկը մյուսից վերադառ է:

«...Նրանք (հոռմեականները) ասում են, թե պապի անձնական իշխանությունը հաստատված է Քրիստոսի հետևյալ խոսքերով. «Այդ վեմի վրա պիտի շինեմ իմ Եկեղեցին» (Մարք. ԺԶ 18): Առ այդ, նրանք «վեմ» բառով նկատի ունեն Ս. Պետրոսին ու նրա իշխանությունը: Ես բազմիցս հերքել եմ այս տեսակետը: Սակայն ամփոփ կերպով այստեղ էլ կասեմ հետևյալը.

Առաջին. նրանք պետք է անպայման ապացուցեին, թե «վեմ» նշանակում է «իշխանություն»: Այս մեկը նրանք չեն անում և ոչ էլ կկարողանան անել. այսուհանդերձ ապ մասին բարբառաբաններ են դուրս տալիս իրենց գլխից, և այն, ինչ իրենք փոխում են՝ ուզում են, որ նկատի առնվի իրեն աստվածային կարգավորություն:

Երկրորդ. «Վեմ»-ով չի կարելի նկատի առնել ո՛չ Ս. Պետրոսին և ո՛չ էլ նրա իշխանությունը: Այս բանը ապացուցվում է հենց Քրիստոսի խոսքերով, երբ նա, շարունակելով իր միտքը, հաշտարարում է. «Ո՞վ դժոխքի դռները ի վիճակի պիտի չլինեն այն հաղթահարելու»: Արդ, արևի լույսի նման պարզ է, որ ոչ ոք պապի քաղաքական իշխանության ներքո չի կարող հզորանալ Եկեղեցու մեջ և կամ դիմադրել դժոխքի դռներին: Արդարև, հավատացյալների մեծագույն մասը, որ կառնում է պապի իշխանությունից և իր հույսը դնում է նրա վրա, կաշկանդվում է դժոխքի ուժերից, լի է մեղքերով և չարությամբ: Բացի դրանից, պապերից ոմանք, հենց իրենք հերետիկոս են եղել, բաց թողել հերետիկոսական օրենքներ, այսուհանդերձ հաստատ են մնացել իրենց իշխանության վրա: Այս իսկ պատճառով «Վեմ»-ով չի կարելի նկատի ունենալ այն իշխանությունը, որ չի կարող դիմանալ դժոխքի դռներին, այլ՝ դրանով նկատի են առնվում միայն Քրիստոսն ու հավատը, որոնց դեմ ոչ մի ուժ ոչինչ անել չի կարող:

«Իսկ եթե իշխանությունը հաստատում է, հակառակ նրան, որ շատերը պայքարում են դրա դեմ, այդ չի նշանակում սակայն, թե այն դիմադրել է նաև դժոխքի դռներին. եթե արդյես է, ապա պետք է ասել, որ հունական Եկեղեցին էլ է կանգուն, ինչպես նաև աշխարհի մյուս բոլոր քրիստոնյա Եկեղեցիները:

«Դու, ողորմելի և կույր հոռմեական⁶, նախքան գրեթե պետք է սովորեիր, թե ինչ է նշանակում «դժոխքի դռները հաղթահարելը»: Եթե ամեն տոկունությունն նույնացում է դժոխքի դռների դեմ տարած հաղթանակի հետ, ուրեմն սատուհայի արքայությունը, իր տոկունությամբ, բանական կան տեսակետից ավելի է, քան Աստծուն: Սակայն դժոխքին դռներին դիմադրել՝ նշանակում է ոչ թե մարմնական գոյություն ունենալ մի համայնքի, ուժի, իշխանության կամ մի ժողովի մեջ,—ինչպես որ դու հոռմեականների համայնքի և միության մասին խոսելիս նշում ես,—այլ՝ գոյություն ունենալ հաստատուն, ճշմարիտ հավատի մեջ՝ հիմնվելով Քրիստոսի, այսինքն՝ վե-մի վրա, աջնալու որ սատուհայի որևէ ուժ կարող չլիմի այդ հավատը սասանել, թեև բազմաթիվ են նրա ուժերը և անհաշիվ՝ նրա հարուցած վեճերն ու խարդալանները, որ նա ի գործ պիտի դնի իր պայքարի համար:

«Նմանապես բավարար չէ, երբ դու փորձում ես բառախաղ անել և ասել. «Թեև պապականությունը երբեմն սատուհայի իշխանության տակ է ընկել, սակայն նրա իշխանության ներքո միշտ ապրել են ող-դամիտ քրիստոնյաներ»: Ես էլ կասեմ, որ թուրքերի մեջ էլ գոյություն ունեն քրիստոնյաներ, ինչպես ամբողջ աշխարհի մեջ ու նաև նախկին ժամանակներում Ներոնի և այլ բռնակալների իշխանության տակ:

Ինչ իմաստ ունի այդ խոսքը: Եթե իրապես Քրիստոսի խոսքը վերաբերում է հենց պապին և պապականությանը, թե՛ նրանք են ներկայացնում այն վեճը, որ հաղթում է դժոխքի դռներին, ուրեմն նրանք երբեք իրավունք չունեն ընկնելու սատուհայի ազդեցության տակ...:

«Հոռմեականները մեջբերում են ևս մի ասացվածք ի նպաստ իրենց, Տիրոջ այն խոսքը, երբ նա ասում է Պետրոսին. «Արածեցո՛ւ իմ ոչխարներին» (Հովհ. ԻԱ. 15—17): Այստեղ նրանք այլևս ստացնակար ու գերազանց վարպետներ են, երբ պնդում են. «Քանի որ Քրիստոս հատկապես Պետրոսին ասաց՝ «Արածեցո՛ւ իմ ոչխարներին», ուրեմն հենց նրան էլ բոլորից ավելի իշխանություն տվեց»:

«Բայց մենք ամենից առաջ պետք է իմանանք, որ «արածեցնել» հոռմեականների լեզվով նշանակում է՝ բեռնախորել ու ճնշել քրիստոնյաներին բազմաթիվ վնասակար օրենքներով. եպիսկոպոսական եմիփորոնները (pallium) բարձր գնեթով վաճառել, բոլոր կապվածքներից տուրքերը

(anat) բռնությամբ զանձել, սեփականացնել բոլոր հիմնարկությունները, ներման թղթեր վաճառել, ամեն ինչի վրա հարկեր դնել նամակների, կոնդակների, արձիհի և մոմի միջոցով⁷, արգելել Ավետարանի քարոզությունը, աշխարհի բոլոր արհեստանոցները գրավել Հռոմի ստահակներով, բոլոր դատերը ի նպաստ իրենց լուծել, բազմացնել վեճն ու երկպառակությունը... մեկ խոսքով՝ ոչ մեկին չթողնել ազատորեն հասնել ճշմարտության կամ խաղաղության ունենալ...»⁷:

Վերոհիշյալ աշխատությունից երևում է. Լույսերի խոր ատելությունը պապականության հանդեպ, միաժամանակ նրա մասնակի շեղումը գոյություն ունեցող այն ավանդական տեսակետներից, որոնք վերաբերում էին Եկեղեցուն և նրա նվիրապետությանը: Արդարև, նա շեշտը դնում էր Եկեղեցու աներևույթ կերպարանի վրայ, որը խորհրդանշում է հոգևոր միասնականությունը Քրիստոսի բոլոր հավատացյալների և որի գլուխն է հենց ինքը՝ Քրիստոսը: Ոգեկան քրիստոնեությունն է կազմում միակ և ճշմարիտ Եկեղեցին, որի հոգին հավատն է, իսկ հոգին կարիք չունի նյութեղեն գլխի: Քրիստոս, իբրև գլուխ Եկեղեցու, չի կարող ունենալ իր փոխանորդը. ո՛չ պապը և ո՛չ էլ որևէ մի եպիսկոպոս չի կարող լինել փոխանորդը կամ ներկայացուցիչը Քրիստոսի:

Անշուշտ կարելի է պատկերացնել, թե ինչ մեծ իրարացում էին ստեղծում Լույսերի նախորդ և այս գոյությունները ժողովրդի մեջ: Բաժանել արդեն հորդել էր: Հռոմի մեջ նույն օրերին, երբ Լույսերը գրի էր առնում իր «Յաղագս պապականության» աշխատությունը, խմբագրվում էր պապական մի կոնդակ՝ բանադրելու համար նրան:

Լույսերն իր կողքին ունեց հոռմեականներից շատերին, որոնցից էին Ուրիխ ֆոն Հուտենը և հոշակավոր նկարիչ Ալբրեխտ Դյուրերը: Ստաշինը փախել էր Ֆուրա քաղաքի վանքից՝ չուզեմալով ապրել կղերականների ճնշող և անարդար շրջապատում: Նա էլ էր խիստ քննադատություններ անում Հռոմին, սակայն նրա հոռմաստացությունը կրում էր ազգային բնույթ, որովհետև, իբրև գերմանացի, նա ուզում էր ազատագրել իր ազգակիցներին Հռոմի և նրա եպիսկոպոսների դաժան ու կեղեքիչ բռնությունից, մինչդեռ Լույսերի հոռմաստ-

⁶ Պապական կոնդակների տեսակներ, որոնք կրում էին արձիհի կամ մեղրամոմ կնիքներ:

⁷ Martin Luther, Werke, II, Wien 1963, 12

⁸ Լույսերը նկատի ունի Առաքառսին Ալֆելդին:

կապես եկեղեցական պաշտամունքի արգելք (interdikt): Միայն կիրակի օրերը պետք է կատարվեն եկեղեցական տոները, շաբաթվա մնացած օրերը բոլորի համար աշխատանքի օրեր պետք է լինեն: Ամենօրյա պատարագներ կարելի է կատարել միայն առավոտ կանոխ: Քրիստոնյաներից ոչ ոք չպետք է գրավի մուրացկնությունը, մուրացկնությունը ամբողջությամբ պետք է վերացվի: Ամուսնության արգելքի աստիճանը պետք է նվազեցնել և հասցնել չորս կամ երեք պորտի: Պետք է քարեկարգվեն նաև համալսարանները:

Քրիստոնյա ազնվականներին ուղղված այս գրությունը մեծ ընդունելություն է գրտնում ոչ միայն քարեկարգության կողմնակիցների, այլև հենց Լութերի հակաառակորդների շրջանակում, որոնցից Մաքս-հիայի Գևորգ դուքսը հայտարարում է, թե շատ բան ճիշտ է Լութերի գրության մեջ և թե, ի վերջո, որևէ մեկը պետք է մատնանշեր եկեղեցում կատարվող անկարգությունները, իսկ եթե շատերը ստիպված են լինել այն ժամանակ քարերը պիտի աղաղակեն: Արդարև, Լութերի սույն գրության մեջ խոսքով է բազմաթիվ սերունդների բաղձանքը եկեղեցական քարեկարգության վերաբերյալ, ինչպես նաև նրա արդար թողոքը պապականության թույլ տված ապօրինությունների դեմ:

4. **Ցաղագս եկեղեցույ հաբեյոնեան գերութեան:** Լութերը 1520 թ. հոկտեմբերի առաջին օրերին հրապարակ է իջնում ևս մի նոր գրքով, այս անգամ լատիներեն լեզվով՝ *De captivitate Babylonica ecclesiae* («Ցաղագս եկեղեցույ հաբեյոնեան գերութեան»): Ժողովրդի հիշողության մեջ դեռ թարմ էր քրիստոնյա ազնվականներին ուղղված նրա գրքի ցնցող տպավորությունը: Այս նոր գրքով նա ձեռնարկում է աստվածաբանների ուշադրությունը հրապիրել նաև եկեղեցու սրբազան խորհուրդների կիրառման և վավերականության վրա: Դրա համար էլ նա այս աշխատությունը գրում է լատիներեն լեզվով:

Քրիստոնյա ազնվականներին ուղղված նրա գրքում դեռևս նկատվում էր պապականության հետ Լութերի հաշտության հնարավորությունը, որովհետև այնտեղ քննարկված հարցերի ու արված առաջարկությունների առանցքը կազմում էր հետևյալ կերպ. ձեռքազատել եկեղեցին ու եկեղեցականությունը իրենց սկզբունքից և առաքելությանը անհարկի վիճակներից ու երևույթներից: Մինչդեռ «Ցաղագս եկեղեցույ հաբեյոնեան գերութեան» աշխա-

տությունը ուղղակի հարվածում էր հռոմեական եկեղեցու աստվածաբանությանը, որով և մեկընդմիշտ բացառվում էր պապականության հետ հաշտության ամեն հնարավորություն: Հռոմեական եկեղեցին կանգնած էր մի ակսիոմապետի հերձվածի առաջ:

Ըստ Լութերի, ինչպես հաբեյոնե մի ժամանակ գերել էր հրեաներին, այնպես էլ այժմ Հռոմը գերում է եկեղեցին ու նրա սրբազան խորհուրդները, որոնց թիվը նա ավելացրել ու հասցրել է յոթի. մինչդեռ եկեղեցում գոյություն ունեցել են միայն երեք խորհուրդներ, որոնք հաստատված են եղել Քրիստոսի խոսքերով: Ցուրաբանչյուր խորհուրդ մատակարարելու համար անհրաժեշտ է ունենալ հավատ Քրիստոսի նկատմամբ, այսպես ապարդյուն է նրա կիրառումը: Լութերը պապականությունը համեմատում է հաբեյոնի թագավորության հետ, որտեղ գերված են քրիստոնյաները, հետևաբար պետք է ազատագրել նրանց:

Եկեղեցու այդ երեք խորհուրդներն են՝ Մկրտություն, Ապաշխարություն և Ս. Աշորհություն:

Լութերն իր այս աշխատության սկզբում նախ ախտաւանք է հայտնում, որ ինքը հրատարակել է ներման թղթերի մասին մի գրություն այնպիսի մի ժամանակ, երբ ժողովուրդը դեռևս չէր ձեռքբաղված սեկուլարիզմից և մեծ հարգանք էր տալիս հռոմեական եկեղեցու հանդեպ, որի պատմություն էլ մասամբ նա արդարացի էր գտնում այդ թղթերի կիրառումը: Սակայն պապականների տարած աշխույժ աշխատանքը ի պաշտպանություն ներման թղթերի՝ Լութերին բերում է այն համոզմանը, որ այդ ներումները ուրիշ բան չեն, եթե ոչ հռոմեական եկեղեցու շողոքոթոթ հոգևորականների կողմից հաստատված խաբեբայություններ: Իսկ պապի առաջնության կամ գերագահության ջատագովությունը նրան մղում է համոզելու այն եզրակացության, որ «պապականությունը հաբեյոնի թագավորությունն է, իսկ նրա իշխանությունը՝ հզոր որսորդ Նեբրոլի» (Ծանոթ. Ծ 8):

Ինչ վերաբերում է եկեղեցու սրբազան խորհուրդներին, Լութերը հետևյալ տեսակետներն է արտահայտում.

ա. Ս. Հաղորդության բաժակը պետք է տրվի նաև ժողովրդին: Այսինքն՝ ա. Հա-

՝ M. Luther, Die reformatorischen Grundschriften, Band 3, München 1983, 62 10.

դոդրությունը պետք է մատակարարվի երկու ձևով՝ Տիրոջ մարմնով և արքայք։ Իրավունք չկա միայն հացով, այսինքն՝ Տիրոջ մարմնով Հաղորդություն տալու, իսկ գինին էլ, ըստ կաթոլիկ եկեղեցու սովորության, վերապահելու միայն քամանակներին։ Այս մասին հասակորեն գրված է և՛ ավետարաններում, և՛ Պողոս առաքյալի՝ կորնթացիներին ուղղված Ա. թղթում (գլուխ ԺԱ, համար 17—34)։ Նման մի զանգստում նույնիսկ հրեշտակները իրավունք չունեն կատարելու, էլ ուր մնաց պարզ կամ մի ժողով հրահանգի այն...։ Այսպիսով, ս. Հաղորդության քաժակը գլանալով հավատացյալներին՝ մի տեսակ կապանքի տակ է առնվում ամբողջ խորհուրդը։ Իսկ ինչ վերաբերում է գոյացավորությանը (Transsubstantiation), Լութերը չի ընդունում այն՝ առարկելով, որ հացն ու գինին նվիրագործվելուց հետո՝ ճշմարտապես լինում են Մարմին և Արյուն Քրիստոսի, բայց պահում են իրենց նյութական հատկանիշները։ Դրանք նյութապես շարունակում են մնալ հաց և գինի, սակայն ստանում են հատուկ մի գորություն և ոչ թե, համաձայն հռոմեական եկեղեցու վարդապետության, դրանք այլևս հաց և գինի չեն ըստ էության (substantz), այլ՝ ըստ արտաքին հատկանիշների (Akzident)։

Ս. Հաղորդությունը պետք է խորհրդանշի Տիրոջ Վերջին ընթրիքը, հետևաբար, ինչքան պարզ կերպով ներկայացվի այն, այնքան հարազատ կմնա Վերջին ընթրիքի ղուլուն։ Այս առնչությամբ արտաքին բոլոր ձևերը, շքեղ հանդերձները, երգերը կամ այլևայլ արարողությունները ոչ մի նշանակություն չունեն։ Միակ բանը, որ հաճելի է Աստծուն, հավատացյալների աղոթքն է, իսկ ընթրիքի հիշատակությանը պատգամվում է մեղքերի թողություն, որն իրականություն դարձավ Քրիստոսի իսկ մահով։ Այս մասին Լութերը հետևյալն է գրում. «Հիսուս ասում է. «Իմ խաբերը հոգի են և կյանք» (Հովհ. Ժ 64)։ Մրանով մա ցույց է տալիս, որ խառնում է հոգևոր ճաշակման (manuicatio Spiritualis) մասին։ Նա, ով հոգեպես է ճաշակում, ընդունում է կյանքը, մինչդեռ հրեաները նկատի ունեն «մարմնավոր ճաշակումը» և դրա համար էլ վիճում են Հիսուսի հետ։ Միայն հավատով եղած ճաշակումը կյանք է պարգևում, ինչ որ Ս. Օգոստինոսն էլ ասում է. «Ինչի՞ համար ես պատրաստում ստամոքսդ ու ատամներդ։ Հավատա՛ միայն և դու արդեն ճաշակած եղար խորհուրդը»։ որովհետև, ինքնին, խորհրդի

առկայությունը չէ, որ կյանք է պարգևում, այլ՝ հավատը։ Արդարև, շատ-շատերը անարժանաբար ճաշակում են դրանից, և այդ չի նշանակում, որ նրանք էլ կյանք ունենան»¹⁰։

Բ. Մկրտության վերաբերյալ Լութերի տեսակետները չեն շեղվում եկեղեցու դավանանքից։ Ավելի ուշ, 1528 թվականին գրած իր մի գրության մեջ նա հարցական տակ է դնում երեխաների մկրտության արժիվ և կնքահոր տված հավատի վկայության հարցը։ Իսկ այստեղ նա պաշտպանում է նաև մանկավարդությունը։

Գ. Ապաշխարությունը, իբրև խորհուրդ, Լութերի համար նշանակում է վերադարձ դեպի մկրտության շնորհը։ Նա խստորեն դատաւարարում է այն եկեղեցականներին, դատաւարարում է այն առթիվ չարաշահում և աղափաղում են Քրիստոսի հետևյալ խոսքերի իմաստը. «Ինչ որ կապեք երկրի վրա, թող խաղված լինի երկրի վրա, թող արձակված լինի երկրի վրա, թող արձակված լինի երկրի վրա, թող արձակված լինի երկրի վրա» (Մտք. ԺԸ 18)։ Կամ՝ «Եթե մեկի մեղքերը ներքե, նրանք ներված կլինին» (Հովհ. Ի 23)։ Այս խոսքերը եկեղեցականներին իրավունք են տվել ամեն տեսակ բռնություններ գործելու և մեղքերի թողություններ վաճառելու, մինչդեռ Քրիստոս, —ասում է Լութերը,—իր եկեղեցուն ոչ թե տիրակալություն հաստատեց, այլ միայն՝ ծառայության պաշոն, ինչ որ առաքյալն էլ է հաստատում ասելով. «Մարդիկ թող համարեն մեզ իբրև պաշտոնյաներ Քրիստոսի և տնտեսներ Աստծո խորհուրդների» (Ա. Կորնթ. Գ 1)։ Հետևաբար «կապելու և արձակելու» պատգամը ծառայության մի հրավեր է, որպեսզի ծառայության կոչված եկեղեցականը օգնի ապաշխարողին՝ ձեռք բերելու մեղքերի թողություն։ Երբ ապաշխարողը լսում է այդ պատգամը, զգաստանում է և գիտակցում, որ ինքը միայն հավատով և իր մեղքերից արձակվելով կարող է երկնքում էլ արձակվում ստանալ։ Լութերն ընդունում է նաև խոստովանանքի դրությունը, քանի որ դրա մասին Ս. Գրքում ակնարկություն կա (Մտք. Գ 6, Ս. Հովհ. Ա. 9, Հակոբոս Ե 16)։

Դ. Դոժշմի մասին նա համարյա ոչինչ չի գրում, որովհետև ավելորդ է համարում նկատի ունենալ այն իբրև խորհուրդ։ Ըստ նրա, եթե ձեռք դնելը երեխաների, հիվանդի կամ տարեցների վրա (Մտ. Ժ 18, Գործք Ը 17, ԺԺՂ 6, 2 6, Մկկ. Ժ 2 16, Ս. Տիմ. Ե 22) կարելի է նկատել իբրև խորհուրդ, այդ դեպքում ինչո՞ւ հաց ու-

¹⁰ Ամդ, էջ 17։

տեղն էլ, քարոզ խոսեղն էլ խորհուրդ չենք համարում:

Ե. Ամուսնության մասին էլ Լութերը համաձայն չէ Եկեղեցու վարդապետությանը, որովհետև նրա համար այս մեկն էլ չի կարելի խորհուրդ համարել: Նա մեջբերում է Պողոս առաքյալի այն խոսքը, թե՛ «Երկուսը պիտի լինեն մեկ մարմին: Այս խորհուրդը մեծ է» (Եփս. Ե 32): Նա ասում է, որ շատերը պիսկամբ այս նախադասությունից ելնելով՝ խորհուրդ են համարել ամուսնությունը, մինչդեռ «խորհուրդ» բառի փոխարեն հունարեն բնագրում գրված է «mysterion», որը լատիներենով փոխանակ «mysterium» թարգմանվելու, թարգմանվել է «sacramentum»: Mysterion բառով առաքյալը նկատի ունի՝ Քրիստոսին (Ա. Տիմ. Գ 16) և եփեսացիներին ուղղած իր թղթում էլ նա mysterion-ը առնչում է Քրիստոսի հետ և ոչ թե ամուսնության: «Այս խորհուրդը մեծ է, քայց ես ասում եմ Քրիստոսի և Եկեղեցու վերաբերյալ (Եփս. Ե 22):

Լութերը դեմ է ամուսնալուծման, ապալման այս մասին նա արտառոց գաղափարներ է արտահայտում. օրինակ՝ նա ամուսնական կյանքում անկարողության հարցը քննարկելիս գրում է. «Եթե մի կին ամուսնացած է անկարող մի տղամարդու հետ, քայց չի կարող կամ էլ, հավանաբար, չի ուզում դատարանի առաջ, ըստ օրենքի, վկայություններով և աղմուկ հարուցելով փաստել իր ամուսնու անկարողությունը, սակայն ուզում է զավակներ ունենալ կամ էլ կարող չէ ծուկկալ մնալ. ի՞նչ պետք է անի. ես նրան խորհուրդ կտայի ամուսնալուծում քահանայել իր ամուսնուց՝ ուրիշի հետ ամուսնանալու համար, իսկ եթե ամուսինը չհամաձայնի, այն ժամանակ ես նորից խորհուրդ կտայի նրան, որ իր մարդու (ոչ թե ամուսնու, որովհետև այս դեպքում ամուսինը իր հետ միևնույն տան մեջ բնակվող անձն է միայն) համաձայնությամբ հարաբերություն անի մի ուրիշի հետ, օրինակ՝ հենց իր ամուսնու եղբոր հետ գաղտնորեն ամուսնանա, որպեսզի իր ունեցած զավակների հայրը նկատվի այն անձը, որին ժողովուրդը ճանաչում է իբրև այդ կնոջ ամուսինը»¹¹:

Գ. Զննադրությունն էլ Լութերի համար խորհուրդ չէ, քանի որ նա պնդում է բոլոր քրիստոնյաների ընդհանուր քահանայության վրա: Քրիստոսի Եկեղեցին, ըստ Լութերի, չի ճանաչում այս խորհուրդը, այլ,

ըստ նրա, այն հնարված է պապական Եկեղեցու կողմից: Քահանայական ձեռնադրությունը մի տեսակ եկեղեցական ծես է ի շարս այլ ծեսերի, որոնք սահմանված են Եկեղեցու հայրերի կողմից, ինչպես օրինակ՝ անդթների, հանդերձների, ջրի, աղի, մոմի, բույսերի, տների, գինու և սրբանց անան բաների օրհնությունը:

Ե. Վերջին օծումը, իբրև խորհուրդ, նույնպես ընդունելի չէ Լութերի կողմից: Եկեղեցին այս խորհուրդը հիմնավորում է Հակոբոս առաքյալի հետևյալ խոսքերի վրա. «Հիվանդ է ձեզցինք մեկը, թող կանչի եկեղեցու երեցներին, և նրա վրա թող աղոթք անեն, թող լուրով օծեն նրան Տիրոջ անունով: Եվ հավատով արված աղոթքը կիրկի հիվանդին, ու Տերը նրան ուրբի կկանգնեցնի» (Հակոբոս Ե 14—15): Այստեղ Լութերը նույնիսկ հարցականի տակ է դնում առաքելական այս թղթի վավերականությունը՝ նշելով, որ իրենց առաջ էլ շատերը կասկածել են դրա վրա: Արդարև, Երազմ Ռուտերդամցին նույնպես չի ընդունել դրա վավերականությունը, և Եկեղեցու սկզբնական ժամանակաշրջանում վեճեր են եղել դրա մասին, մինչև որ ի մեջոց այն ընդունվել է Նոր Կտակառանի կանոնի մեջ: Եթե զանգ է ահեղը վավերականության պարագան,— ասում է Լութերը,—մի առաքյալ իրավունք չունի մի խորհուրդ հաստատելու: Այս կապալցությունը նա գրում է.

«Եթե նրանք (Եկեղեցականները) առաքյալի ասածը ճշմարիտ և բուրրի համար պարտավորիչ են համարում, ուրեմն ի՞նչ հեղինակությանը ձեռնադրում են այն ու նրա դեմ գործում: Ինչո՞ւ նախարար են միայն մեկ վերջին օծում. երբ առաքյալի ցանկությունն է ընդհանուրապես կատարել օծում, ուրովհետև նա չի ուզում, որ այն վերջինը լինի և միայն մահամերձների վրա կատարվի, այլ նա հոտակեր են ասում է՝ «Երբ մեկը հիվանդ է»: Նա չի ասում՝ «Երբ մեկը մահամերձ է»: Ես այն կառծիքին եմ, որ այս օծումը այն միևնույն օծումն է, որը վերագրվում է առաքյալներին. «Նրանք բազում հիվանդների օծում էին արել ու նրանց թփշլում» (Մատթոս Զ 13): Դա հատուկ մի սովորությունն էր Խիտոնեական մախնական համայնքում. ուրով առաքյալները հոռաքներ էին օրոծում հիվանդների վրա: Այդ սովորությունը, սակայն, վաղուց առողեն վերացել է: Նաև ինքը՝ Հիսուս, իր հավատացյալներին իշխանություն տվեց «օծել հասածներու, հիվանդների վրա ձեռք դնելու» և այլն: Եվ գաղտնական է, որ նրանք այս խոսքերի հի-

¹¹ Անդ, էջ 107—108;

մատնացույց արեցի ազատության և ծառայության մասին խոսելիս:

«Արդ, սկսեմք ներքին և հոգևոր մարդուց՝ տեսնելու համար, թե ինչ է հարկավոր, որպեսզի նա դառնա բարեպաշտ և ազատ քրիստոնյա և աղայես էլ կոչվի: Աղարակ, բացահայտ է, որ արտաքին ոչ մի բան չի կարող նրան քրիստոնյա դարձնել, որովհետև նրա բարեպաշտությունն ու ազատությունը, ինչպես նաև բարկությունն ու գերվածությունը ոչ մարմնական են և ոչ էլ արտաքին:

«...Այսպիսով, հոգու համար ոչ մի օգուտ չի ունենա, երբ մարդ իր մարմնի վրա օրհնված հանդերձներ դնի (ինչպես քահանաներն ու եկեղեցականներն են անում) կամ երբ նա մարմնապես եկեղեցիներում և սուրբ վայրերում գտնվի, շրջներով աղոթք մատուցի, պահեցողություն անի, ուխտագնացություն կամ բարի գործեր կատարի, որոնք լոկ մարմնի միջոցով և մարմնի մեջ կարող են իրագործվել: Սակայն այն, ինչ հոգուն բարեպաշտություն է շնորհում և նրան ազատություն բերում, ուրիշովին տարբեր բան պետք է լինի, ուրիշովին վերոհիշյալ բոլոր սովորություններն ու արարողությունները որևէ չար, կեղծավոր ու շողոքոթ մարդ էլ կարող է կատարել:

«Հոգին, սակայն, միայն սուրբ Ավետարանում, աշխիճք՝ Քրիստոսի քարոզած աստվածային խոսքի մեջ է ապրում, անմեղ է, ազատ է և քրիստոնյա: Բացի Սուրբ Գրքից, նա ուրիշ ոչ մի տեղ չունի՝ ո՛չ երկրեցյալում և ո՛չ էլ երկրի վրա՝ պահելու համար հիշյալ հատկանիշները, ինչպես որ Հիսուս ինքն իսկ ասաց. «Ես իսկ եմ հալածությունն ու կյանքը, ով հավատում է ինձ՝ նա հավիտյան պիտի ապրի» (Հովհ. ԺԱ 25): Կամ՝ «Ես եմ ճանապարհը, ճամարությունը և կյանքը» (Հովհ. ԺԲ 6): Նմանապես՝ «Մարդ միայն հացով չի ապրի, այլ՝ ամենայն խոսքով, որ դուրս է գալիս Աստուծո քերակից» (Մտք. Դ 4): Աղայես էլ մեզ համար այժմ պետք է պարզ լինի, որ հոգին ոչ մի բանի պետք չունի, բացի Աստուծո խոսքից: Միայն Աստուծո խոսքն է, որ օգուտ կրելի նրան և ուրիշ ոչինչ: Իսկ երբ հոգին արդեն լցված է Աստուծո խոսքով, այն ժամանակ այնև ոչնչի կարիք չի ունենա, որովհետև նա այդ խոսքի մեջ առատորեն գտնում է բավականություն, կերակրություն, ուրախություն, խաղաղություն, լույս, արվեստ, արդարություն, ճշմարտություն, իմաստություն, ազատություն և ամենայն բարիք: Սաղմոսագրքում, հատկապես ԾԺԸ աղմոսում, հիշատակ

ենք, որ մարգարեն, բացի Աստուծո խոսքից, ուրիշ ոչ մի բանի չի ձգտում: Իսկ Սուրբ Գրքում ծանրագույն պատուհաս և Աստուծո քարկությունն արտահայտություն է համարվում այն, երբ Աստված իր խոսքը վերացնում է մարդկանց միջից, սակայն երբ նա իր խոսքն է ուղարկում, դա համարվում է չգերազանցված մի մեծ շնորհ, ինչպես որ հաստատվում է ԾԶ սաղմոսի 20-րդ համարում. «Նա իր խոսքն ուղարկեց, որպեսզի բծշկի նրանց»: Քրիստոսի պաշտոնն էլ ուրիշ բան չէր, եթե ոչ Աստուծո խոսքը քարոզելը: Նույնպես և բոլոր առաքյալները, եպիսկոպոսները, քահանաներն ու հոգևոր դասը կոչված են Աստուծո խոսքի սպասավորությանը, թեև այժմ, դժբախտաբար, այլ է դրությունը:

Ըստ Լութերի, մարդու ներաշխարհին, այսինքն՝ ներքին, հոգևոր մարդուն, դրսից ոչ ոք չի կարող ազատություն տալ, ո՛չ արտաքին այն պայմանները, որոնց մեջ նա ապրում է և ո՛չ էլ ծեսերն ու քարեպաշտական սովորությունները, այլ միայն՝ Հիսուսի Ավետարանը՝ մարդացած, չարչարված, հարություն առած և փառավորված Աստուծո Որդու պատգամը: Այդ պատգամը միայն հավատով կարելի է րմբռնել: Այստեղ նորից շեշտվում է հավատով արդարանալու յուրօրինակ տեսակետը: Հիսուս փեսան է, մարդու հոգին՝ հարսը, իսկ հավատը՝ փեսան ու հարսը իրար միացնող ամուսնական մատանին: Հավատով արդարանալու մասին Լութերը մեջբերում է նաև Պողոս առաքյալի հետևյալ խոսքը. «Արդարացման համատարտով պետք է հավատալ» (Հռոմ. Ժ 10):

Մարմինը, սակայն, նույն առատությունը չունի, ինչ որ հոգին: Քրիստոնեան ազատ է ըստ հոգու, սակայն ըստ մարմնի՝ նա ծառա է իր հոգուն: Դուա համար էլ նա պետք է ասա պահի, հսկում նախառի, աշխատի, կոթի իր մարմինը, որպեսօր այն արգելք չհանդիսանա հոգու ազատությանը:

Մարմնի ճնշումը կամ գերմանությունը հակադրելով հոգեկան ազատությանը՝ Լութերը հետազայում քննադատել է գաղղացիների ապստամբությունը, իբրև մի ձրգտում դեպի «մարմնական» ազատագրում: Ծանոթացման կարգով ներառաօրինք եկեղեցու բարեկարգության վերաբերյալ Մարտին Լութերի գլխավոր գրությունները: Դրանց մեջ, թնականաբար, շատ բան քննադատելի կամ փնճելի է, ինչ որ սույն

¹⁵ M. Luther, Werke I, Insel Verlag 1983, էջ

հողիւծում որոշ չափով մատնանշվեց։ Սակայն մեկ քան պետք է մեզ համար հստակ լինի. այն, որ Լուսերը իր ժամանակաշրջանի ամենահանդուգն և հեղափոխական մտածողն է եղել, որի հետապնդած ազնիվ նպատակն էր բարեկարգել Եկեղեցին և պայքարել գոյություն ունեցող քարացած ու հետադիմական սրտքերի և միջնադարյան կույր հավատի դեմ։

Այսօր էլ Լուսերը մեզ առիթ է տալիս մտածելու և խորհրդածելու կրոնական մի շարք հարցերի մասին, որոնց վրա մենք հաճախ բավարար ուշադրություն չենք դարձնում։ Հետևաբար նրա գործերի թարգմանությունը մեծ նպաստ կլինի մեզ համար՝ ճշգրտորեն ճանաչելու և գնահատելու գերմանացի այս մեծ մտածողին։



ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ԾԱՌԵՐԻ ԾԱՌՔԸ ԳՈՐԾԻ
ԱՌԱՔԵԼՈՑՈՒՄ

Գործք Առաքելոցի առաջին տալ գլուխների մեջ կարևոր տեղ ունեն Պետրոս առաքյալին պատկանող ճառերը, որոնք ընդգրկում են հետ-Հոգեգալստյան շրջանի իրադարձությունների պատմությունը: Վերոհիշյալ ճառերի քննարկման համար կարելի է ընտրել մոտեցման երկու եղանակ: Առաջին եղանակը պահանջում է ճառերը առանձնացնել ու քննել անկախ և անջատ բոլոր գրական-գեղարվեստական հնարանքներից: Այս եղանակի դեպքում առավել կարևորություն է տրվում ճառերին՝ Պետրոս առաքյալի կյանքի և աստվածաբանության հետազոտության տեսակետից, անտեսում է այն նշանակությունը, որ ճառերը ունեն Գործք Առաքելոցի կազմավորման գործում: Մենք հիմք չունենք արժանահավատ չհամարելու ճառերի տվյալները որպես վստահելի վիկարություններ Պետրոս առաքյալի կյանքի և գործի մասին: Սակայն մենք ուզում ենք նախ որոշել ճառերի արժեքը հենց Գործք Առաքելոցի միջավայրում. սա երկրորդ՝ առավել հիմնավոր եղանակն է:

Պետրոս առաքյալի ճառերը և նման սեռի այլ հոդվածներ Գործք Առաքելոցի կարևոր տարրերից են: Գործք Առաքելոցի հեղինակի նպատակն է եղել ճառերի միջոցով տալ առաքյալների քարոզչական գործունեության և հավատի պատկերը: Ասվածը փաստերով հաստատելու համար կանգ առնենք հետևյալ վկայության վրա: Բազմաթիվ գիտնականներ այս նյութը քննելիս դիտել են, որ ԳԱ Ա:8 համարում

Ղուկասը թվարկում է այն դեպքերը, որ ծրագրում է նկարագրել գրքի հետագա գլուխներում: Այս համարում հարուցյալ Տերը ասում է աշակերտներին. «Այլ առջիք զօրութիւն ի հասանել Հոգոյն Սրբոյ ի վերայ ձեր, և եղիջիք ինձ վկայք լերուսաղէմ և յամենայն Հրեաստանի և ի Սամարիա և մինչև ի ծագս երկրի»: Ավելի ուշ երբ հեղինակը սկսում է նկարագրել քարոզչության դեպքեր Հրեաստանի սահմաններից դուրս, արդեն տարակուսելու որևէ պատճառ չունեն և ավելի վստահորեն ու մանրամասնությամբ թվարկվում է նկարագրվելիք դեպքերը: Գրքի այս երկրորդ մասի եղելությունների գլխավոր գործող անձինք դառնում են Պողոս և Պետրոս առաքյալները: Պողոս առաքյալի կերպարը և նրա անդրդվելի հավատը ցայտում արտահայտություն է գտել հետևյալ տողերում՝ «զի անօթ ընտրութեան է ինձ նա, կրել զանուն իմ առաջի հեթանոսաց և թագաւորաց և որդոցն Իսրայէլի»: ԳԱ-ը հենց այս երկու գաղափարներն է հետապնդում: Նախ հեղինակը նկարագրում է Ավետարանի գաղափարների հաստատումը և երկրորդ տարածումը, որոնք սկսվում են Երուսաղէմում (Բ: 2-7), շարունակվում «Ի գէղս Հրեաստան և Սամարիայ» (Ը-ԺԱ) և այսպէս հասնում մինչև «ընդ ամենայն գաւառն» (ԺԳ: 50): Երկրորդ մասում հեղինակը նախ տալիս է Պողոսի գործունեության ընդհանուր պատկերը հեթանոսների մեջ ԺԳ-ԺԸ գլուխներում և հետո՝ Պողոսի գեկուցումը Ագրիպա արքային ԻԳ-ԻԶ գլուխներում և

վերջապես իր վկայությունը՝ «եղբարք և հարք Հեթրայեցոց» իհ և իԸ գրովաներում:

Ծուռով կտեսնենք, որ ճառերի մնալն կառուցվածքը, դիրքն ու ըմթացքը նպաստում են հեղինակի ծրագիրը իրագործելու նպատակին: Պատահականություն չէ, որ ուշադրությունը կենտրոնացնում է այն հատվածների վրա, որտեղ պատմվում են Քրիստոսի վկայության դեպքերը՝ ԳԱ Ա:8 և Թ:16 համարների միջև: Առաջին երեք ճառերը Երուսաղեմում են ասվում, որտեղից սկսվում է ավետարանի քարոզությունը. երկուսը արտասանված Պետրոսի կողմից (Բ:4—40, Գ:12—26) և երրորդը՝ Ստեփանոս Նախավկայի (Ը:2—53), ապա Պետրոսը խոսում է Կեսարիայում (Ժ:34—43), որը համարվում է ավետարանի պատգամների տարածման օրինակ «Ի Հրեաստան և Սամարիա»: Պողոս առաքյալին պատկանող ճառերից երեքը խոսվել են հեթանոսների համար (ԺԳ:16—41, ԺԵ:22—31, Ի:18—35), երկուսը թագավորների (ԻԿ:10—21, ԻԶ:2—23), երկուսը՝ հարք Հեթրայեցոց» (ԻԲ:1—21 ԻԸ:25—28): Պարզ երևում է, որ ԳԱ-ի ճառերը ունեն որոշակի դեր ավետարանի քարոզչության տարածման գործում: Ժառերի այս ցանկը ցույց է տալիս, թե ինչ առիթով և երբ են արտասանվել ճառերը քրիստոնեության տարածման առաջին շրջանում:

ԳԱ Բ:14—40՝ Պետրոսի հոգեգալստյան օրվա ճառը.

Գ:12—26՝ Երուսաղեմում ապրող հրեաներին ուղղված Պետրոսի ճառը.

Է:2—53՝ Ստեփանոսի ճառը գլխավոր աղյուսին.

Ժ:34—43՝ Պետրոսի ճառը՝ ուղղված Կոռնելիոսին և իր համակիրներին Կեսարիայում.

ԺԳ:16—41՝ Պողոսի ճառը՝ ուղղված Իսրայելացիներին.

ԺԷ:22—31՝ Պողոսի ճառը՝ ուղղված Արիսագոսին և հեթանոսներին.

Ի:18—35՝ Պողոսի ճառը՝ ուղղված քրիստոնյաներին, որ ապրում էին հեթանոսների մեջ.

ԻԲ:1—21՝ Պողոսի ճառը՝ ուղղված Երուսաղեմում ապրող հրեաներին.

ԻԿ:10—21՝ Պողոսի ճառը՝ ուղղված Ֆելիքսին.

ԻԶ:2—23՝ Պողոսը ճառը՝ ուղղված Ագրիպա արքային.

ԻԸ:25—28՝ Պողոսի ճառը՝ ուղղված Հռովմի անհավատ հրեաներին:

Ժառերի վերլուծությունը մեզ հնարավորություն է տալիս հաստատելու, որ Դու-

կաս ավետարանի երկրորդ գիրքը միայն կենսագրական բնույթի տվյալներ չի ընդգրկում իր հերոսների՝ Պողոսի, Պետրոսի և Ստեփանոսի մասին: Նա կարողացել է նրանց ճառերից ընտրել առանձին հատվածներ, որոնք լավագույն կերպով առընչվում են գրքի բուն նպատակին՝ ներկայացնել Քրիստոսի առաքելության շարունակության պատմությունը՝ աշակերտների գործունեության միջոցով: Ասվածից պարզ է, որ Դուկաս ավետարանիչը, ինչպես առաջին գրքում, այնպես էլ ԳԱ-ում մնում է ավետարանիչի դերում՝ նկարագրելով կազմակերպվող եկեղեցու առաջին քաղերքը: Պատմիչի նպատակն է կերտել Պողոսի և Պետրոսի կերպարները, այլ փաստերով արժեքավորել նրանց գործունեության դերը եկեղեցու կազմավորման մեջ: Հետևաբար, ԳԱ-ում տեղ գտած ճառերը չի կարելի համարել լոկ գեղարվեստական հնարանք:

Համենայն դեպս, սրանից ելնելով չպետք է ճառերը գրկել աստվածաբանական արժեքից, ինչպես անում են որոշ մեկնիչներ՝ դրանք համարելով միայն գրական պատկերավորման միջոց՝ գուրկ պատմական սկզբնաղբյուրի արժեքից: Քանի որ այլ ուսումնասիրողների մոտ այս կարծիքին հաճախ ենք հանդիպում, ստորև կուզենք մի քիչ հանգամանորեն ներկայացնել մնալ ուղղության հետևորդների՝ իրենց տեսություններով հանդերձ:

ԳԱ-ի բանասիրական-տեքստաբանական հետազոտություններում հաճախ է կրկնվում այն կարծիքը, որ ԳԱ-ի ճառերը Պողոսին, Պետրոսին, Ստեփանոսին չեն պատկանում, այլ գրական հնարքներ են՝ Դուկաս ավետարանիչի կողմից հյուսված: Գերմանացի հայտնի գիտնական Մարտին Դիբելիուսը, որն այս խնդրին նվիրել է բազմաթիվ ուշագրավ ուսումնասիրություններ, պաշտպանում է այդ տեսակետը: Այն հիմնավորելու համար Մարտին Դիբելիուսը դիմում է դասական պատմագրության օրինակին,՝ մասնավորապես Թուկիդիդեսին, որը իր պատմությունը հավաստության օժտելու միտումով՝ շարադրանքն ընդլայնել է ճառերով՝ խոսված պատմական անձնավորությունների կողմից: Ժառերի այս կերպ օգտագործումը արվում էր ոչ թե կեղծելու կամ շփոթեցնելու ընթերցողին: Խնդիրը հաստի դարձնելու համար կարևոր է առաջ քաշել այն տեսակետը, որ պատմիչները օգտագործել են ճառերը որպես գրական հնարքներ՝ ավելի կենդանի կերպով ներկայացնելու պատմական եղելություններն ու տվյալները, և իրենք էլ

ենթադրում էին, որ իրենց ընթերցողները այդպես էլ գնահատելու էին ճառերի դերը: Մինչև այսօր էլ շարունակվող այս վեճում շատ մասնագետներ այն կարծիքին են, որ ԳԱ-ի ճառերն էլ հարկ է համարել Ղուկաս ավետարանչի հնարանը, որի նպատակն էր առաքյալների կյանքի որոշ դրվագները դյուրընկալ և ազդու դարձնել հենց իրենց բառերով:

Այս կարծիքը հիմնավորելու և ապացուցելու համար գիտնականները թվարկում են հետևյալ փաստերը: Առաջին, որ ԳԱ-ի ճառերը ստեղծվել են շատ որոշակի կանխատեսված ծրագրի համաձայն, որը հենց Ղուկասի մտահղացումն է: Երկրորդ, ճառերի լեզվական ոճը շատ մոտ է Ղուկասի ավետարանի ոճին: Երրորդ, ճառերը չեն պարունակում մտքեր, որոնք կարելի է ձևով և պարունակությամբ վերագրել Պետրոսին կամ Պողոսին: Նշված պատճառները բավատար հիմք են տալիս ենթադրելու, որ թեև ԳԱ-ի ճառերը չեն բացառում որոշ սկզբնաղբյուրների պահպանումը և փոխանցումը, այնուամենայնիվ, ինքը՝ Ղուկասն է ստեղծում այս ճառերը, ընթերցանակելով անտիկ շրջանի պատմագրության ավանդները:

Նման կարծիքի դեմ են արտահայտվել բազմաթիվ հեղինակներ: Մեզ հետաքրքրողը հարցի առումով անհրաժեշտ է ընդգծել, որ Ղուկաս ավետարանչի հեղինակած ԳԱ երկը գոտ կենսագրական բնույթի գործ չէ: Հեղինակները նաև նշմարել են, որ եթե Ղուկասը վերադարձնում էր Պողոսի կամ Պետրոսի ճառերից հատվածներ՝ խուսափում է հեղինակային ընդմիջարկումներ կատարելուց՝ պատմա-աստվածաբանական դրդապատճառներից մղված: Ինչ խոսք, որ Ղուկասը հետագա մեջբերումներով պատշաճ տեղեր է հատկացրել ճառերին՝ ողջ ԳԱ կառույցին հարմար: Կարելի է նույնը ասել նաև Հիսուսի ասացվածքների մասին Մատթեոսի ավետարանում: Հետևաբար, ճառերի հեղինակ համարել Ղուկասին, նշանակում է յհասկանալ Ղուկասի գրության նպատակը և արժեքը: Իր նպատակադրությամբ, թեմատիկ բովանդակությամբ ու կառուցվածքով Ղուկասի ԳԱ-ը թեև չի կարելի համարել Պողոսի կամ Պետրոսի կյանքի ու գործունեության կենսագրականները միայն, սակայն, ինչպես ստորև կտեսնենք, ճառերի մեջ տեղ գտած տեղեկությունները հետաքրքիր ու շահեկան պատմական տվյալներ են երկու առաքյալների գործունեության ուսումնասիրության համար: Ղուկասը հաղորդում է որոշակի տեղեկություն-

ներ, որոնց միջոցով պատմվում է Ավետարանի պատգամի տարածումը գործով և քարոզչությամբ: Ղուկասի կարծիքն է, որ իր ընթերցողների համար նույնքան կարևոր է ծանոթանալ քարոզչության բովանդակությանը, որքան և տարածման եղանակին:

Հետևաբար, ոչ մի հիմք չունենք չվրտահելու Ղուկասին: Նա հույն պատմիչների մեծ կարիք չունեի ճառեր հնարել հիշատակվող դեպքերին ու կերպարներին ճշմարտացիություն հաղորդելու միտումով: Ղուկասը անձամբ ճանաչում էր Պետրոսին ու Պողոսին. անհավանական չէ, որ գործակցել էր նաև Հովհաննեսի, Մարկոսի և Փիլիպպոսի հետ Երուսաղեմում: Թեև չի պահվել յուրաքանչյուր առաքյալի ամեն մի ճառն ու քարոզը, սակայն դժվար չէր Ղուկասի համար հիշել և վերարտադրել առաքյալական քարոզչության բովանդակությունը հիշողությամբ, գուցե ոչ բառացի: Այն ճառերը, որ տեղ են գտել ԳԱ-ում, բոլորն էլ ունեն միանման գրական կառուցվածք: Հայանքիկ ուսումնասիրությունն էլ բավական է նկատելու գրական կառուցվածքի ըրկմվող հատկանիշները: Հատկապես դրանք նկատելի են Պետրոսին վերագրվող ճառերից երեքի մեջ՝ Բ:24—36, Գ:12—26, Ժ:34—43: Այստեղ, նախատառքից հետո, Պետրոսը որոշակիորեն տեղեկացնում է ճառերի արտասանության առիթն ու տեղի հետ առնչվող մանրամասնությունները, ապա բերում վկայություններ Հիսուսի վերաբերյալ հետևյալ հերթականությամբ՝ ա, Հիսուսի աստվածային բնությունը՝ «գալի ցուցեալ յնստոծոյ», բ, կատարած հրաշքները. գ, մահը և հարությունը. դ, դեպքեր, եղելություններ՝ համաձայն մարգարեների գուշակության. ե, Հիսուսի փառաբանումը. զ, առաքյալների վկայումների ճշմարտացիությունը: Ապա հաջորդում են երեք կարևոր, մեկը մյուսին սերտորեն առնչվող, թեմաներ՝ ա, կոչ բողոքին՝ դարձի գալու. բ, խոստում մեղքերի թողության. գ, դարձի կոչ՝ ուղղված հեթանոսներին և հրեաներին: Ծանոթի սույն կառուցվածքը, աննշան տարբերությամբ, կրկնվում է նաև մյուս ճառերում: Այս ընդհանուր դիտարկումները բավարար ենք համարում հաստատելու ճառերի արժանիքները ընդհանրապես և Պետրոսին վերագրվածները մասնավորապես:

Պետրոս առաքյալի ճառերը

Հիմնարկենք Պետրոս առաքյալի ճառերից երեքը՝ արտասանված Հոգեգալստյան

երկար ժամանակ տիրապետող էր արդեն իրականացած փրկության կամ ապագայում կատարվելից փրկչագործության խորհուրդը: Պետրոսի ճառերի մեջ այս երկու տեսակետների միջև հակասություն չի նկատվում: Պետրոսը մի անգամ էլ այս հարցին անդրադարձնում, երբ քրիստոնեության դեռ չդարձած հրեաներին ասում է.

«Արդ ապաշտեցեք և դարձարուք ի ջրն՝ ջել գմեղս ձեր որպես զի եկեացեն ժամանակք հանգստեան յերեսաց տառն, և առաքեցե՛ զյառաջագոյն նկատեալն մեր, զՅիսուս զոր պարտ է երկնից ընդունել մինչև ի ժամանակս ամենեցուն հաստատելոյ. զորոց խօսեցաւ Աստուած ի բերանոյ սրբոց իւրոց մարգարեից» (Գ:19—21):

Աստվածաբանական պրպտումները շատ հետազոտողների հանգեցրել է այն եզրակացության, որ առաջին սերնդի քրիստոնյաները ապրում էին այն համոզվածությամբ, որ Տիրոջ երկրորդ գալուստը տեղի է ունենալու մոտ ապագայում: Երբ հաշվի ենք առնում այն փաստը, որ Գ:1-ում ոչ մի վկայություն չենք գտնում նման վարկած հիմնավորելու համար, Դուկասի ստեղծագործությունները որոշ բանասերների երկերում դիտվում են որպես առաջին փորձ՝ բացատրելու Հիսուսի երկրորդ գալուստյան ուշացման պատճառները:

Բ. Առաքելականության հիմունքները

Պետրոս առաքյալին հուզող հաջորդ հարցը առաքյալների հեղինակությունն է վերաբերում: Պետրոսը ճառերում հաճախ հիշեցնում է, որ իրենց փոխանցած տրվյալները ակամաստի վկայություններ են, հատկապես, Հիսուսի հարության առնչվող: Այս տեսակետից ուշադրության արժանի է հենց առաջին ճառը պահպանված Գ:1 առաջին գլխում, որտեղ տրվում է պատմությունը Մատթեայի ընտրության: Երկու ուշագրավ կետեր կան. առաջին, բացի 12 աշակերտներից, որոնք իրավասություն ունեին իրենց ակամաստներ կոչելու, կային նաև այլ անձեր, որոնք արժանի էին նույն պատվին: Երկրորդ, հակառակ այս իրողության, Հիսուս իր առաքելությունը շարունակելու պարտականությունը միայն վստահեց իր կողմից ընտրված ու նշանակված 12 աշակերտներին: Մատթեայի ընտրվում է աշակերտների կողմից Հոդալի տեղ որպես «վկայ յարութեան ճորս ընդ մեզ» (Մ:22—26): Եվ պատճառն է պարտականությունը «վիճակ պաշտամանս աշտորիկ և զառաքելութեան» (Մ:25), որով հենց սկզբից առաքյալ կոչման որոշիչ առանձնահատկությունը համարվում էր ա-

կանատես վկայի առանձնաշնորհը, որը և նույնացվում էր առաքելականության հեղինակության հետ:

Այս բնութագրումը էական էր նկարագրվող դեպքերի ստուգությունը և հեղինակային լինելը հաստատելու տեսակետից: Սրանով միայն կարելի է բացատրել ճառերի մեջ հաճախ շեշտվող դեպքերին վկա և ակամատես լինելու հանգամանքը: Երբ Պետրոսը հոգեգալստյան ճառի մեջ խոսում է Քրիստոսի հարության մասին՝ իր խոսքը հիմնավորում է հետևյալ հայտարարությամբ՝ «որում ամենեքին մեկ վկայ մեք» (Բ:32, Գ:15): Նույն ձգտումը առկա է նաև Պետրոսի այն ճառերի մեջ, որ արտասանել է քաղաքական առյուծների առաջ և որոնք այժմ զետեղված են Գ:1-ի չորրորդ և հինգերորդ գլուխներում: Այստեղ Պետրոսը իր առաքյալի հանգամանքը սերտորեն կապում է այն կենսագրական տվյալի հետ, թե՛ «մեք ոչ կարենք զոր տեսաքննել յուսեք յիսուսեք» (Դ:20) և՛ «մեք ենք ճորս վկայք բանիցս ասացիկս» (Ե:32): Պետրոսի՝ Կոռնեղիոսին ուղղված ճառի մեջ, իր վկա լինելու հանգամանքը հիմնավորում է այսպես՝ «Եւ մեք վկայ ենք ամենայնի գոր արար յերկրին Հրեատառնի և յերուսաղեմ» (Ժ:39): Իսկ երբ պատմում է Քրիստոսի հայտնվելու մասին առաքյալներին հարությունից հետո, արտահայտվում է ուժով ու համոզվածությամբ՝ «ոչ ամենայն ժողովրդեանն, այլ մեզ վկայիցս յառաջագոյն ընտրեղոցս յԱստուծոյ, որք և կերպք և արքաք ընդ մնա յետ յարութեան ճորս ի մեռելոց: Եւ պատուիրեաց մեզ քարոզել ժողովրդեանն և վկայութիւն դնել, թէ ճա է սահմանեալն յԱստուծոյ դատարար կենդանեաց և մեռելոց» (Ժ:41—42): Այս միջոցով Պետրոսը առաքյալների վկայությունը համարում է փրկության պատմության անբաժան մասնիկը: Առաքյալները ընտրվել են Աստուծո կողմից վկայություն տալու (Մ:2):

Քրիստոնեության տարածման ու ամրապնդման ժամանակաշրջանում անհրաժեշտ պահանջ էր առաքյալների հեղինակության հարցը: Հնագույն վկայաբանությունները ցայտուն արտահայտություններն են Նոր Կտակարանի եղելությունների: Այս դեպքերի հիմքում ընկած է՝ հարության իրականությունը: Առաջին Կորնթացի թղթի ԺԵ գլխում Պողոս առաքյալը շեշտում է նկարագրված դեպքերի անադարտ և հարազատ պահպանումը: Նույնքան կարևոր է շեշտել, որ վկա և ակամատես լինելու հանգամանքը առաքելականության հեղինակության վերջնական դրոշմն է: Այն ա-

մեծ տոկոսը վերաբերվում է Հիսուսի երկրային կյանքին, մինչև հարության դեպքը, բայց սա բավարար հիմք չի տալիս եզրակացնելու, որ Պետրոսի համար Հիսուսի աստվածային կերպարը կազմավորվեց միայն նրա հարությունից հետո: Իրականությունը ճիշտ հակառակն է: Երբ քննում ենք այն ազդեցությունը, որ Հիսուսի երկրային կյանքի դրվագները թողել են Պետրոսի վրա, տեսնում ենք, որ հակադրություններին տեղիք չի մնում: Անշուշտ, ճիշտ է, որ Պետրոսը ԳԱ-ի երկրորդ գլխի 2-րդ համարում խոսում է Հիսուսի մասին, որպես մարդ, բայց նա իր այդ հասկացությունը անմիջապես որակում է մի շարք պատշաճ մակդիրներով՝ «այդ ցուցեալ Աստուծոյ» և՛ «Նշանօք և արուեստիք»: Այս մակդիրները հատուկ իմաստ են տալիս Հիսուսի երկրային կյանքի դրվագներին, լիովին բացահայտում նրա աստվածային ծագումը՝ «Ի սկզբանէ»: Թեպետ Մեսիա կամ Քրիստոս անվանումները այստեղ չեն գործածվում, բայց ուրիշ դեպքերում Մեսիա անվանումը կիրառվում է: ԳԱ-ի Գ:18 համարում Պետրոսը բավական հստակ հայտարարում է՝ «զայրչարեալ Քրիստոսի», իսկ Դ:10 համարում խոսում է Հիսուս Քրիստոս Նազովիեցու մասին, ում «զոր դուք խաչեցեք»: Անհատականացման առումով հետաքրքիր է, որ Դ:27 համարում եկեղեցում արտասանված աղոթքի մեջ ասվում է՝ Աստված է, որ օծել է իր ծառա Հիսուսին, իսկ Գ:38 համարի տեղեկության համաձայն Հիսուս Նազովիեցին՝ «զոր օծն Աստուած հոգւով արքով», ձեռնամուխ եղավ՝ «քօշկել զամենայն ըմբռնեալսն ի աստուածայն»: Եթե որևէ մեկը համառի պաշտպանել ԳԱ-ի Ա-ԺԳ գլուխներից բխող Որդեգրական քրիստոսաբանությունը՝ այդ դեպքում բավարար չէ հետազայի աղավաղումներ համարել հիշյալ վկայությունները: Մինչդեռ շատ ավելի իրավացի կլիներ ԳԱ-ի Բ:36 և Գ:20 համարները իրենց բովանդակությամբ կապել Հիսուսի փառավորումին և երկրորդ զայալյան հետ: Այս դեպքերից հետո է, որ Աստված ներկայացնում է Հիսուսին որպես Տեր ու Քրիստոս, ինչպես Պողոս առաքյալն է բնութագրում, որպես՝ «սահմանելոյ Որդւոյն Աստուծոյ զօրոքեամբ» (Հռովմ. Ա:4): Նման վկայությունները առանձին վերցրած փաստ չեն, որ Հիսուս նախքան փառավորումը գտրվ էր Մեսիա և Որդի Աստուծոյ անվանումների հատկանիշներից: Համախառն արտահայտության ոճը իշխում է բովանդակության վրա: Այսպես, ԳԱ-ի Գ:31 համարում խոսվում է, թե ինչպես Աստված բարձրացրեց Հիսուսին «աջովն իւրով», որ-

պես Առաջնորդ և Փրկիչ, մինչդեռ Գ:15 համարում ասվում է, որ նույն հրեաները սպանեցին զԱռաջնորդ կենաց: Որով փոխանակ հակադրություն տեսնելու այս վկայությունների միջև, պետք է նկատել, որ նշված անվանումները միայն նպատակում են ուշադրություն դարձնել նույն երկվորյակ մեկ այլ կողմից և ոչ թե էական փոփոխության տալուն: Որևէ հակասություն տեսնել Պետրոսի քրիստոսաբանության մեջ, պայմանական է, այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ նրանց միավորող հատկանիշները, բնականաբար, ավելի սերտ են, քան տարբերակիչ առանձնահատկությունները:

Նշված տարբերությունները չպետք է հասկանալ իբրև բացարձակ հակադրություն, այլ որ յուրաքանչյուր նոր հատկանիշի ու անվանումի կիրառումը Հիսուսի վերաբերյալ պետք է հիմնավորվի ըստ գրոց: Պատահական չէ, որ նոր ժամանակներում հայտնի Սուրբ Գրքի մեկնիչ անգլիացի Ս. Հ. Դոդդը մի ամբողջ մենագրություն է նվիրել այս նյութին «Ըստ Գրոց» վերնագրով (Լոնդոն, 1952)²: Պետրոսի ճաները ԳԱ-ի սկզբնական գլուխներում վկայում են, թե ինչքան կարևոր տեղ ունեի Հին Կտակարանը Նոր Կտակարանի քրիստոսաբանության ձևավորման ընթացքի վրա: Այս ճաներում ամեն ինչ հիշատակում ակնարկ ուղղակի կամ անուղղակիորեն պայմանավորված է Հին Կտակարանից վերցված մի հիշատակությամբ:

Երկրորդ, թեև Պողոսի և Պետրոսի քրիստոսաբանությունը ունի Հին Կտակարանից վերցրած պատկերներ և մարգարեների արտահայտչամիջոցներից բանաձևումներ, դրանով հանդերձ չի կարելի Հին Կտակարանը համարել իսկական սկզբնաղբյուրը նրանց աստվածաբանության: Հին Կտակարանի կերպարները և վկայությունները ճիշտ է, «վկայեն վասն իս» (Հովմ. Ե:39), սակայն Քրիստոս է, որ լրացնում է այդ կերպարի պատկերը և ոչ թե արդյունքն է այդ գուշակությունների: Նշենք, որ վկայաբանությունների մեջ հատկապես Պետրոս առաքյալին վերագրված ճաների մեջ մեկից ավելի հիմնականաբանային բնութագրումներ են կիրառվում, ինչպիսիք են՝ ծառա, թագավոր, որդի, որդի մարդոջ՝ բոլորն էլ օգտակար են ամբողջացնելու Հիսուսի կերպարի ստեղծումը: Բայց սրանից ոչ մեկը առանձին վերցրած չունեն տարրությունը Քրիստոսի կերպարը ներկայացնելու: Այն կերպարը, որ ի հայտ է գալիս Պետրոսի ճաներում, նախընթաց ժամանակաշրջանների գաղափարների ու հայացքների կուտակումների արդյունքն է:

Ե. Փրկչագործության աստվածաբանությունը

Վերը արդեն նշեցինք, որ վախճանաբանական աստվածաբանությունը նորաբանության և անտարրարությունից մասն է սոցիալիզմի: Մատերի կառուցման սկզբունքն է կարծես օգնել առաջին քրիստոնյաներին անցնել կյանքի քուրաչից՝ պահել իրենց հավատը, ներքնապես մաքրվել-ազատագրվել մեղքի կապանքներից՝ «ապաշտեցեք և մկրտեցեք իրաքանչիւր ոք ի ձեռք յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի ի թողութիւն մեղաց և ընկալցիք զաւետիս Հոգւոյն Սբոյոյ» (Բ:38—39): Նույն գաղափարին համոզմունք ենք նաև ԳԱ-ի Գ:19 համարում՝ «արդ, ապաշտեցեք և դարձարուք ի ջնջել զմեղս ձեր»: Այս միտքը, որ կրկնվում է բազմաթիվ անգամներ, կարևոր է մի քանի պատճառներով:

ԳԱ-ի ճառերը օգտագործվել են ուղղակի խոսքով և ոչ թե վաղ հեղանակն շրջանի պատմագրության մեջ կիրառված անողոքականի, պատմողական ձևով: Որով ճառերի հեղինակային հատկանիշները ավելի ցայտուն են դրսևորվում, և ժամերային առումով ճառերը կարծես հասցեագրված են ոչ միայն ունկնդիրներին, այլև ապագայի ընթերցողներին: Անքակտելի կապ կա քաղաքական կանչող կոչի ձևի ու բովանդակության միջև: Այս կոչի պարունակությունը կարելի է ամփոփել հիշյալ դարձվածքով՝ «Ապրեցարուք յազգէ աստի խոտորելոյ յայմանէ» (Բ:40): Նրանք, որոնք այս հրահանգին դրական վերաբերմունք են ցուցաբերում, դասվում են՝ «ի փրկեալսն» (Բ:47): Այս գաղափարը մեծ տեղ է զբաղեցնում ԳԱ-ի մեջ և հենց այդ պատճառով էլ գերմանացի Սուրբ Գրքի մեկնաբան Վան Ունկելը՝ իր ԳԱ-ին նվիրված մեկնագրության մեջ «Փրկչագործության» աստվածաբանությունը համարում է ԳԱ-ի և Պետրոսի ճառերի առանցքը: Սակայն պետք է նկատել, որ այս փրկության գաղափարախոսության ճիշտ հասկացողության առանցքը կազմում է Պետրոսի քրիստոսաբանությունը և վախճանաբանությունը: Ապաշխարության ու հաճապագորյա աղոթքների շնորհիվ քրիստոնյան փրկվելու է՝ «օր տեսան մեծ և երեւելի» (Բ:20—21), փրկությունը՝ «յազգէ աստի խոտորելոյ յայմանէ» (Բ:40), և մեղքերից թողություն կարելի է ստանալ շնորհիվ Տիրոջ սահմանած՝ «Ժամանակք հանգստանան» (Գ:19), երբ նա պիտի գա դատելու «կենդանեաց և մեռելոց» (Ժ:42—43):

Պետրոսի մտածելակերպի մեջ փրկության հասկացողությունը ոչ միայն ապագային է վերաբերում, այլև ներկային: Կաղ հիվանդի բուժումը ԳԱ-ի երրորդ գլխում համարվում է նշան «փրկութեան» (Գ:12): Այս տերմինի ընտրությունը համար՝ ստանում է լիարժեք իմաստ հաջորդ համարում «Եւ չիք այլով ի իշք փրկութիւն, զի և ոչ անում այլ գոյ ի ներքոյ երկնից տուեալ ի մարդիկ, որով արժանի իցէ կեալ մեզ»: Այսպիսով, ԳԱ-ի մեջ փրկության գաղափարը սերտորեն առնչվում է Հիսուսի անձին և գործին հետ:

Այս բոլորը մեզ հանգեցնում է այն եզրակացության, որ Նոր Կտակարանի տարբեր գրքերում, մասնավորաբար Պետրոս առաքյալի թղթերում, առկա է աստվածաբանական մի մտածելակերպ, որի հիմքը հետևյալ պարզ, բայց դիպուկ բանաձևում է՝ «Ձի եւ ձեզ զայն նախ առանդեցի գոր և եւն ընկալայ, եթէ Քրիստոս մեռաւ վասն մեղաց մերոց ըստ գրոց... թեև յարեալ յաւոր երրորդի ըստ գրոց» (Ա Կորնթ. ԺԵ:3—6):

ԳԱ-ի Բ:16 համարում Պետրոսը նախ հաստատում է նկարագրվող դեպքերի ճշմարտացիությունը, հայտարարելով՝ «այս է որ ասացա ի ձեռն մարգարէին»: Երրորդ գլխում Ղուկասը հաղորդում է, որ՝ «Աստուած որպէս յառաջագոյն պատմեաց ի բերանդ ամենայն մարգարէից... ճոնկալէ և կատարեաց»: ԳԱ-ում Պողոս առաքյալը իր քարոզչությանը տալիս է վավերականություն հետևյալ լուսաբանումով՝ «Եւ մեք ձեզ անտարանեմք զիստումն որ աս հարսն եղեալ էր» (ԺԳ:32—33): Այս առնչականությունը կամայական չնկատելու վախից դուրսված Ղուկասը շտապում է բացատրել միտքը ավելացնելով՝ «քալոսահեցին խորհրդով և կանխագիտութեամբն Աստուծոյ» (Բ:23):

Որով նախնական քրիստոնեական եկեղեցին հենց իր սկզբնավորման օրից պարտադրանքի տակ էր՝ ժառանգած ուսմունքի պատճառով ուսումնասիրել՝ Աստվածաբանությունը: ԳԱ-ի հորինման ժամանակ մեկնաբանման այս պահանջը եկեղեցու հոգևոր և մտավոր հետաքրքրություններից մեկն էր:

ԳԱ-ի Ը:26—38 համարներում Ղուկասը իրեն հատուկ երևելի շարադրանքով պատմում է մի հանդիպումի մասին, որ տեղի է ունեցել Փիլիպոս ավետարանչի և եթովպացի մի ներքինու միջև: Սա առաջին հանդիպման հիշատակությունն է քրիստոնյա մի քարոզչի և ոչ հրեայի միջև:

Ըստ պատմության, եթովպացիներ ուխտի էր գնում Երուսաղեմ, ճանապարհին ձեռք էր բերել Եսայա մարգարեի գիրքը և «նըստեակ ի կատա իրում ընթեռնողը»։ Հեղինակը այս պատկերավոր դրվագով պատրաստել է մուտքը մի մեջբերումի Եսայի մարգարեի գրքի 53-րդ գլխից, որը հեղինակի կարծիքով և, ինչու չէ՞ նաև, նախնական եկեղեցու համակացողությամբ, փաստում է, որ ամեն ինչ կատարվում է ըստ «խորհրդով և կանխագիտությամբ» Աստուծոյ։ Դուկաս ավետարանիչը արժանապատիվ է այս հատվածը խորիմաստ մի հայտարարությամբ՝ «ի գրոցս յայցանէ անտարանեաց մմա» (Ը:35-36)։

Կարելի է մշել նաև ԳԱ-ի ԺԸ:24-28 հատվածը, որտեղ պարզ պատմողական ոճով տրվում է Ապոկալիպտիկ խորհուրդների մեկնությունը։ Այս անձնավորությունը, որի մասին քիչ բան գիտենք, ներկայացվում է որպես «այր ճարտարաբան» և «գօրաւոր իր գրովք»։ Նա գալիս է Եփեսոս և որպես Հովհաննես Մկրտչի աշակերտ, սկսում է քարոզել՝ «Շմարտութեամբ վասն Յիսուսի»։ ԳԱ-ի հեղինակի համար դա բավարար չէր։ Երկու ուրիշ աշակերտներ Անկյուղա և Պրիսկիլա՝ «ստին զմա առ իւրեանս և ճշարտագոյնս պատմեցին զմա զճանապարհն Աստուծոյ»։ Եփեսոսից նա մեկնում է Կորնթոս, որտեղ տեղի փոքրիկ համայնքի հետ կապ ստեղծելով, սկսում է օգտակար աշխատանք կատարել՝ «ընդ պնդագոյն զՀրեայնս», բացահայտելով նրանց Հիսուսի Մեսիա լինելու հանգամանքը գրովք։ Այս առումով հետաքրքիր է այն բացատրությունը, թե ինչու Ապոկալիպտի քարոզչությունը սկզբում համարվեց թույլ։ Համաձայն ԳԱ-ի հեղինակից Ավետարանի քարոզչությունը թերի կնկատվեր, անհամոզիչ, եթե Հիսուսին վերաբերող տվյալները չբացատրվեին Հին Կտակարանի վկայություններով, որոնք եղելություններին պատմականություն են հաղորդում։ Նման վերաբերմունքի մեկ ուրիշ օրինակ է Պողոսի հետ պատահած մի դեպք։ Երբ նա Թեսաղոնիկե է գնում Ավետարանը քարոզելու ի գրոց, Պողոսը «բանալոր» իմաստը որոշ մուք հատվածների՝ քաղելով օրինակներ Հին Կտակարանից և «ղեմը առաջի նորա», որպես փաստ։ Երեք որոշակի մտքեր է հատուտվում ա, Մեսիան չարչարվող մեսիա է, բ, Մեսիան հարություն է առնելու մեղեդիներից, գ, Մեսիան հենց ինքը՝ Քրիստոսն է։


Մեկնության այս եղանակին նաև հան-

դիպում ենք ԳԱ-ի ԻԶ գլխում, որը պարունակում է Պողոսի ճառը Ագրիպա արքային ուղղված։ Այս ճառում Պողոսը հակիրճ ներկայացնում և պաշտպանում է իր գաղափարախոսությունը։ Նրա բացատրությանն ոչ մի հրեա պատճառ չունի հակառակելու իր քարոզչության, որովհետև այնտեղ չկա ոչ մի միտք կամ ուսուցում, որ հաստատված չեն «մարգարեքն և Մովսէս»։ Այն գաղափարները, որին հրեաները մշտապես ընդդիմանում են, բոլորն էլ, ըստ Պողոսի, արծարծվել են Հին Կտակարանում՝ ա, Եթե չարչարելու է Քրիստոս, բ, Եթե առաջին ի յարութենէ մեղեդոց, գ, Լոյս պատմելոց է ժողովրդեանն և հեթանոսաց։ Պողոսը այս մեջբերումներում Հիսուսին չի նույնացնում Մեսիայի հետ, բայց հավելյալ այն միտքն է հայտնում, որ Ավետարանի քարոզչությունը ոչ միայն հեթանոսների, այլև հրեաների համար է։

Դուկասի համար Պողոս առաքյալի արծարծած մտքերը կարևոր և էական էին։ Ավետարանի ավարտին նրա միտումը նկատելի է «Իմանալ գգիրս»։ ա, Պարտ էր չարչարեալ Քրիստոսի, բ, Յառնէլ ի մեղեդոց յաւուր երրորդի, գ, Եւ քարոզել յաւուն նորա ապաշխարութիւն ի թողութիւն մեղաց յամենայն ազգս. հիշտ այն երեք կետերը, որոնք կազմում են Պողոսի աստվածաբանության մրցութիւնը։

Նոր Կտակարանի աստվածաբանության ուսումնասիրությունը, ի տարբերություն դոգմատիկ և սխոլաստիկ աստվածաբանության, ուսումնասիրության պայման է՝ ամենից առաջ մշտել Նոր Կտակարանի գրական հուշարձանների գրություն մոտավոր թվականները։ Այս նկատառումով ամենաարդյունավետ ուղղությունն է, որ փորձում է առանձնացնել Նոր Կտակարանի հարուստ մրցութից այն տարրերը, որոնք մատչելի են բոլորին և համարվում են առավել հնագույնը որպես սկզբնաղբյուր։

1. J. A. T. Robinson, The most primitive christology of all, Journal of Theological studies (1956), 177-189.
2. C. H. Dodd. According to the Scriptures, London, 1952. p. 94.
3. O. Cullmann, Tradition. London. 1951. p. 102.
4. W. C. Van Unnik, "The Book of Acts" the confirmation of the Gospel" in Novum Testamentum (1960), p. p. 26-29.



ԷԶՄԻԱԾՆԻ ԱՎԵՏԱՐԱՆ 1000 ՏԱՐԻ

ԱՐՏԱԾԵՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԷԶՄԻԱԾՆԻ ԱՎԵՏԱՐԱՆԸ*

• • •
Ձեռագրի առաջին կազմը փոխարինված է ևնոր՝ փողոսկրյա կազմով, ինչպես նաև հարստացված միմյանց կից երկու մկարագարող թղթերով, որոնք, ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, ձեռագրին միացել են հետագայում: Որ նրանք ավելի հին են, քան ձեռագրի ստեղծման ժամանակաշրջանը, վաղուց հայտնի է: Բայց որ այդ կազմն ու մանրանկարները Ստեփանոս կրոնավորը չի տեսել իր ստացած ավետարանի վրա, և որ դրանք հետագայում են մուծվել ու կրցվել ձեռագրին, կհամոզվենք քիչ հետո:

Ձեռագրի կազմի երկու փեղկերից յուրաքանչյուրն ունի փողոսկրյա քանդակագարող հինգ սալիկ, մեկական՝ կենտրոններում, երկուական (մեծերը) զբաղեցնում են կազմի վերին և ստորին մասերը ամբողջությամբ, իսկ մյուսները՝ կենտրոնական սալիկի բարձրությամբ՝ մյուս աջ և ահյակ կողմերը: Այս ութ քանդակագարող սալիկները տերուական թեմաներ ունեն: Երկու փեղկերի վերին սալիկների կենտրոնում Քրիստոսի չաղչարանքները խորհրդավոր խաչն է, դափնեպսակի մեջ,

որը երկու կողմերից բռնել են հրեշտակները: Վերին երկու անկյուններում մեկական մարդկային դեմքեր են, որոնցից մեկն ունի ճառագայթաձև, մյուսը՝ կիսալուսնաձև թագ: Սրանք մարմնավորում են Արևն ու Լուսինը:

Առաջին փեղկի կենտրոնում Աստվածամայրն է՝ գահին բազմած, մանուկ Հիսուսը գրկին: Տիրամոր կողքերին երկու հրեշտակներ են կանգնած՝ ձախ ձեռքում գավազան, աջը կրծքին՝ ափով դեպի դուրս: Նրանից աջ, փեղկի վերին մասում Ավետումն է, ստորինում՝ Զաքարիան և Եղիսաբեթը: Ձախ փեղկում՝ Ծնունդը, ապա՝ Աստվածամոր ճամփորդությունը: Ներևի սալիկի վրա՝ Մոգերի երկրպագությունը:

Երկրորդ փեղկի կենտրոնում Քրիստոսն է՝ բազմած գահին, ձախ ձեռքում ավետարան, աջ ձեռքը՝ քարոզի պահ: Թիկունքում երկու առաքյալներ (Պողոս, Պետրոս) են՝ Աստվածամոր կողքերին կանգնած հրեշտակների դիրքով: Քրիստոսից աջ՝ ջրգողի, նրանից ներքև՝ լուսնոտի բուժումն է, ձախում՝ դիվահարների, ապա՝ անդամալույծի բուժումը, ներքևի սալիկի վրա՝ Քրիստոսի հանդիսավոր մուտքը Երուսաղեմ:

Փեղկերից յուրաքանչյուրն ունի 30,8×37 սմ մեծություն: Սալիկները՝ 0,9 սմ

* Ծարուհակված «Էջմիածին» ամսագրի 1890 թ. № Ա-ից:

հաստոյություն: Սալիկները եզրափորված և ագուցված են միմյանց, ապա ամրացված մետաղյա գամներով, որից հետո սուպրնձով փակցված են հաստ մագաղաթի վրա՝ վերջինիս ներսի երեսի կողմից: Մագաղաթը երեսապատված է գոլավոր կտավով: Երկրորդ փեղկի վերին սալիկի աջ անկյունը կտրված է (4,4 սմ երկայնությամբ և 2,2 սմ լայնքով): Մյուսներն ամբողջական են:

Կազմի փեղկերը թիկնամասում, որտեղից դրանք պետք է միմյանց միանան ձեռագրի թիկունքի միջոցով, ունեն չորսական անցք: Սկսվելով երկու ծայրերից 4,5 սմ խորքից, 9,2 սմ միջնատարածությամբ ծակված են չորս անցք: Այսպես՝

○ — 4,5 ○ — 9,2 ○ — 9,2 ○ — 9,2 ○ — 4,5

Դրանցից բացի, փեղկերը մեկական անցք ունեն թիկունքին հարող ճակատամասից, որտեղից նույնպես պետք է ամրանան ձեռագրին, որպեսզի կազմերն ավելի ամուր լինեն և չպոկվեն ձեռագրից:

Թիկնամասից բացի, փեղկերն առաջամասում ունեն երեքական անցք՝ կազմերի փականների համար⁸⁹:

⁸⁹ Մի փոքր տեղեկություն միջնադարյան կազմավորման վերաբերյալ: Ընդօրինակությունը պրակ սու պրակ ավարտվելուց, լուսանցարությունները, նկարազարդումը՝ վերջանալուց և հիշատակարանը գրվելուց հետո միայն ձեռագիրը լամենափրվում էր կազմելու:

Կազմելու առաջին գործը պրակների կամ փեղկերի իրար հետ կարելն էր, որը արվում էր դազգաճի վրա:

Ամուր թելից արքածած պաշանի այն մասը, որի վրա հավաքվում ու ամրացվում է պրակը, կոչվում է սնթեկ (պուն թեկ), որոն մնացած ծայրերը, որոնք ամրանալու են կազմտախտակին, կոչվում են պատրույց:

Դազգաճի վրա որպես տններ ամրացվելուց հետո, ամեն մի պրակից չլան դիմաց անցք էր բացվում, որից թելը դուրս գալով՝ փաթաթվում էր սնթեկի վրա և կրկին պրակ դառնալով՝ նույն գործողությունը կատարում էր հաջորդ սնթեկի հետ...

Բացի այս սնթեկերից, պրակները իրար միանում են նաև ծայրերում: Դպրարմեճ սնթեկի անցքից թելով միանում են ծայրում հյուսած սնթեկին, որը կոչվում է՝ բարձիկ: Սա իր հերթին միանում է թիկնամասի կաշվին ամրացված հյուսած սնթեկի հետ, որը կոչվում է կապտա, և միասին ամրացվում կազմտախտակին՝ վերջինիս վրա արված անցքի և փորվածքի օգնությամբ: Մինչ այդ, նույն եղանակով կազմտախտակին միացվում էին սնթեկը պատրույցներով և կաշեպատվում:

Էջմիածնի ավետարանի կազմի վերջին փեղկի պատրույզները 1920 թ. կտրել են ձեռագրի նախահանությունը հրատարակելու համար լուսանկարելիս, որի հետևանքով ձեռագրի թիկնամասը բաց է: Փեղկերի վրա եղած անցքերին համապատասխան չորս սնթեկերի վրա հավաքվել են մագաղաթյա պրակներ, ընդ որում սնթեկերի դիմաց անցքերը բավականին լայն են, քանզի սնթեկերը հաստ են:

Դրանցից բացի, պրակները ամուր թելով կրկին իրար են կարվել եզրերին սնթեկի և ծայրերի միջտեղից: Բոլոր սնթեկերի պատրույզները անցկացվել են փղոսկրի անցքերից և ամրացվել, իսկ ամուր թելի ծայրերը՝ ճակատամասի անցքին (կապտաի փոխարեն): Ձեռագրի թիկնամասի քննությունից պարզվեց, որ ավետարանի թիկնամասում, փղոսկրե կազմին հարմարեցված մասում, հիշյալ սնթեկերից ու նշանակ անցքերից բացի, բոլոր պրակների վրա կան նրանցից փոքր սնթեկային անցքեր պարզապես հաջորդականությամբ. երկու ծայրերից 5,5 սմ հեռավորությամբ տեղավորված են մեկական անցք, իսկ արանցից ամեն մեկից 12 սմ հեռավորության վրա՝ մի անցք: $(5,5+5,5) + (11,7+11,7) = 35$ սմ:

Այս նշանակում է, որ փղոսկրե կաշվից առաջ ձեռագիրը կազմված է եղել: Որեւէն փղոսկրյա կազմը Էջմիածնի ավետարանի երկրորդ կազմն է: Այսպիսով ավետարանն իր կազմին է կորցրել, փղոսկրյա կազմը՝ իր ավետարանը: Ձեռագրի առաջին կազմի անցքերը չեն համապատասխանել փղոսկրյա կազմի վրա արդեն գոյություն ունեցող անցքերին, ուստի նրա վրա նոր սնթեկային անցքեր են պատրաստել նոր կազմին համապատասխան, իսկ նախորդ կազմի անցքերը մնացել են որպես առաջին կազմի գոյության իրենդեն ապացույց:

Առաջին կազմի սնթեկային անցքերի գոյությունը մի անգամ ևս հաստատում է շատ կարևոր մի իրողություն: Ստործիզովսկին ժխտում էր Էջմիածնի ավետարանի առաջին ութ թերթերի նկարների 10-րդ դարին պատկանելը, ինչպես նաև դրանց հաշվական ծագումը:

Ս. Տեր-Ներսեսյանը, հենվելով բազմաթիվ հուշարձանների և գրական սկզբնաղբյուրների վրա, հիմնավորապես հերքում է սույն անհիմն տեսակետը և ապացուցում, որ դրանք հաշվական են և ձեռագրին ժամանակակից: Ձեռագրի կազմի քննությունը ցույց տվեց, որ առաջին կազմի սնթեկային անցքերը պահպանվել են նաև Էջմիածնի ավետարանի առաջին ութ

թերթերի վրա: Դա անհերքելի ապացույց է, որ դրանք եղել են մինչև ձեռագրի առաջին կազմը, այսինքն՝ Ախարապարդիվ եմ ձեռագրի գրության ժամանակ, 989 թ.:

• •

Երբ կարող էր Ստեփանոսի ձեռագրի կազմը փոխված լինել: Ընչպես տեսանք, Ստեփանոս կրճատվորը ստույգ և հին օրինակներից ուսումնական և բազմացման նպատակով ավետարանն ընթերցանել էր, սովորական կազմով կազմել և նկիրել էր Նորավանքի դպրոցին, ինչպես սովորաբար արվում էր: Նորոգման կամ կազմափոխության մասին որևէ հիշատակություն չիմենք ձեռագրում: ԺԲ դարի սկզբներում այն դեռևս հղենո Նորավանքի՝ Ս. Ստեփանոս Նախավկայի վանքի սեփականությունն էր, ինչպես վկայում և այդ ժամանակաշրջանին հատուկ գրությամբ գրված հիշատակագրությունը: «Յանուն Աստուծոյ եւ Տիրաւորիս, աղայիս Բրիտանի միաբանեցայ սուրբ Նախավկիս:

Այլ զի եւ եւ Տիկնաց, աղայիս Բրիտանի, միաբանեցայ Նախավկայիս: Յայսքն արեւ ի հետ, զինչ մեր կարողութիւն լինի, ծառայութիւն առնենք սրբոյս»⁴¹:

Գրությունը հին բոլորգիր է՝ ԺԱ դարավերջում կամ ԺԲ դարասկզբում գրված: Հիշատակված Ս. Նախավկայի վանքը հղենո Նորավանքն է:

Այս հիշատակագրությունից անմիջապես հետո, 1173 թ. մագաղաթյա ձեռագիրը Ս. Ստեփանոս Նախավկայի վանքին նվիրելու մասին եղած հիշատակագրությունն է: Նշանակում է, նախորդը գրված է մինչև 1173 թվականը, ուստի ձեռագիրը այդ ժամանակ կամ դրանից առաջ է հանվել հղենո Նորավանքից: Իսկ այդ ժամանակ, իսկայես, Սյունիքում կարևոր իրադարձություններ են տեղի ունեցել, որոնք չէին կարող Ստեփանոսի ավետարանը թողնել հղենո Նորավանքում:

Բաղաց թագավորության վերացման և Սիսական տոհմի վերջանալուն նվիրված գիրքն Ստ. Օրբելյանը գրում է, որ Մեղիքահի Չորթման գորավարը 553(+551)=1104 թ. գրավում է Որոտամը, իսկ 1105 թ. հղենը: «Վանքերի բոլոր միաբանությունները լուցին պաշտամունքային արարողություններից... Ասատիկ սգի մեջ ընկան Հայաստանի բոլոր եկեղեցիներն ու քրիստոնյաները: Բայց Բաղաբերդը... Շիրու-

տը և հինգ այլ բերդեր մնացին աննվաճ: Այսպէս էր լրացավ վեց հարյուր թվականը և սկսվեց առաջին տարին, — (601+551=1152), — շարունակում է Ստ. Օրբելյանը, — Շիրուտ բերդը կողոպտեց թուրքերի ճարպիկ ցեղը... Վեց հարյուր տասնհինգ (619+551=1170) թվականին Աստված կրկին բարկացավ մեր Բաղաց աշխարհի ու Սյունիաց նահանգի վրա և բոլորի ապական ու ապաստան անառիկ Բաղաբերդ ամրոցը մատնեց խմայելի՝ անհիշյալ ու գիշակեր մարդու ձեռքը, որը բազմաբանակ զորքերով եկավ, բայց չկարողացավ հաղթել: Այնուհետև խաբեական խուռքերով խաբեց, աշաղկաջ պարսպախորտոնյա մարդկանց ունեցած միջոցով նախ գրավեց Կկոց քաղը, ապա գիշերը նույն մարդկանց միջոցով հափշտակեց և Բաղաբերդը, որը գրավելով սաստիկ կոտորած կատարեց: Եվ քանի որ այն անհաղթահարելի ամրություն ուներ, բոլոր վանքերից այնտեղ էին կուտակել սրբությունները, գրքերը, եկեղեցական սպասքները, առավելապես Տաթևի փարթամ ու հարուստ աթոռի անհամար և անմեամ սրբություններն ու եկեղեցական սպասքները, ոսկե և արծաթե խաղերը, հիշատակային իրերը՝ զարդարված անգին ակնեղեններով, անհամար մարգարիտներով:

Այնտեղ ամբարված էին շատ կտակաբաններ՝ թվով ավելի քան տասը հազար: Դրանք բոլորն էլ գերի տարվեցին և ցրվեցին ցամաքում երկրի երեսին»⁴²:

«Տաթևի փարթամ ու հարուստ աթոռի» մեջ էր մտնում նաև հղենո Նորավանքը, և նրա ավետարանը չէր վարդաբանություն ամբարված «թվով ավելի քան տասը հազար» կտակարանների մեջ չըգտնվել, որոնք բոլորն էլ գերի տարվեցին և ցրվեցին ցամաքում երկրի երեսին:

Տասը հազար ձեռագիր... տասը հազար ճակատագիր... Եթե գերված է եղել, փորկազմվել է, իսկ եթե ոչ, փրկվել էր շահեկան ճակատագրով՝ երկրի երեսին ցրվեցին ու ցամաքում հազարից մեկը Ստեփանոսի ավետարանը:

Այդ ժամանակի դեպքերից հետո միայն ավետարանը փրկվել և ամենայն հավանականությամբ վերականգնվել է փոսկորյա կազմով և (1173 թ.) վաճառվել: «Ի թուականութեանս Հայոց ՈՒԲ (1173) եւ ի տէրութեանս աթաբակ Ալիսկին, եւ ի հայրութեանս Գրիգոր(ոյ), եւ Գործի՝ որդի Վահրամայ, գնեցի իմ հալալ մէջից

⁴⁰ Մատենադարան, ձեռ. № 2874, էջ 8բ:

⁴¹ Ստեփանոս՝ Օրբելյան, Սյունիքի պատմություն, Երևան, 1886, էջ 279—280:

գտորք Անետարան, եւ տի մեծահոգակ վաճառ Մաղարդիս, ի Սուրբ Նախավկայս, ի իշխատակ իմն եւ ծնողաց իմոց, որոց իմոց եւ ամուսնոյն իմոք»⁴²։ Վահրամի որդի Գուրծին մեծահարուստ է եղել։ Այդ երևում է հաջորդ հիշատակագրությունից. «Եւ՛ Գուրծի՛ որդի Վահրամայ, հրաման առի (ի) հոչակատը եւ ի մեծ վանացն Մաղարդին Սուրբ Ստեփանոս Նախավկայսն՝ վանաց շինելոյ, ու շինեցի զԹիզայստակսիս վանա»⁴³։ Գուրծին, որ կարող էր մի ամբողջ վանք կառուցել, ուրեմն կարող էր նաև փողոկոյա կազմով եւ գեղեցիկ զարդարված ավետարան գնել եւ նվիրել Մաղարդա մեծ վանացն»։

8-րդ թերթում, որի վրա գրված է Վահրամի որդի Գուրծու հիշատակարանը, գրությունից առաջ եւ հետո որոշ փոփոխություններ են տեղի ունեցել։ Ինչպես եղել ենք, այդ թերթի առաջին էջում նկարված է Աբրահամի զոհաբերության տեսարանը, իսկ երկրորդ երեսը, որ անգրել էր, վերին մասում ունի Տիրատիկոնց եւ Տիկնացի՝ Նախավկայի վանքին միաբանելու փոքրիկ հիշատակագրությունները։ Աբրահամի զոհաբերության նկարում ռաբանիկ նկարը վտանգվել է, ուստի նկարի հակառակ էջում 11 սմ երկարությամբ եւ 4 սմ լայնությամբ մագաղաթով նորոգվել է, այսինքն՝ մաքուր մագաղաթով ծածկվել է երեսը, իսկ ա երեսում հարդարվել է խաթարված նկարը։

1173 թ. Գուրջու որդու հիշատակարանը գրվել է նաև՝ այդ կարկառու մի վրա։ Ուրեմն թերթը կարկատվել է գրելուց առաջ։

Գուրջու հիշատակարանը գրելուց հետո Աբրահամի դեմքը նկարի վրայից կտրել հանել են. տեղը դատարկ է։ Մյուս էջում, դեմքի հակառակ կողմում դրոշմված «Գրիգոր(ոս)» անվան «րո» տառերը նույնպես կտրվել են։ Ուրեմն Աբրահամի դեմքը կտրվել է Գուրջու 1173 թ. հիշատակարանը գրելուց հետո։

Ինչո՞ւ է դիմագրվել Աբրահամը։

Աբրահամը իր կին Սառայից որդի չէր ունենում։ Կնոջ համաձայնությամբ նա իր աղային՝ եգիպտացի Ագարից ունենում է մի զավակ, որին անվանում են Իսմայիլ։ «Եւ նա եղիցի այդ վայրագ», գուշակում է տիրոջ հրեշտակը։

Իսմայիլը համարվում է արաբ ցեղերի նախահայրը, և նրա անունով միջնադարյան հայ հեղինակները արաբներին հաճախ անվանում են «իսմայելացիներ» կամ «ա-

ղախանածին հազարացիներ»։ Իսմայիլը Մոհամմեդին նախորդած մարգարեներից մեկն է համարվում, ուրեմն իսմայելացիներ են նաև ողջ մահմեդականները։

Տասներկուերորդ դարի սկզբից նրանք հաճախակի հարձակումներ են կատարում Բաղաս թագավորության վրա, կոտորում են ժողովրդին, ավերում քաղաքներն ու գյուղերը, ամայացնում վանքերն ու մեծատունները, իսկ 1170 թ. Բաղասերդը գրավելով՝ գերում եւ ցանուցի են անում տալը հազար կտակարան։ Դարավերջին Մյունիքի եւ Բաղքի իշխանությունը վերացնում են Աբրահամի վայրագ աղախանածին ժառանգները։

Ամա՛ այդ ցիրուցան եղած կտակարաններից մեկում մի նվետարանում, հանդիպակաց էջերից ձախում Մարիամ Աստվածածինն է իր Սրածնի հետ, որը զոհաբերվում է մարդկության փրկության համար, իսկ մյուսում՝ Հայր Աբրահամը՝ զոհաբերության նախապատրաստվելիս։ Սարտեցուցիչ է նրա ձեռքի դանակը, որն ավելի շուտ սուր է հիշեցնում։ Նկարում Աբրահամի հասակը 17 սմ է, Իսմահակինը՝ 10 սմ, սուրը 6 սմ երկարություն ունի։ Այդ սուրը նրա աղախանածին ժառանգների ձեռքին է, որով հազարավոր անմեղ քրիստոնյաների արյունն է հեղվել՝ մահ ու տարտու սփռելով շուրջբոլորը։ Ուստի կտրել են նրա դեմքը, դիմագրվել, որպեսզի միայն Աստվածամայրն իշխի էջաբացքում, իսկ սուրը քելեն են ամբողջությամբ, չեն կտրել, որովհետև այդպիսով կկտրվեր նկարը՝ լայնքով, իսկ մյուս էջից՝ մի քանի բառ։ Այս գործողությունը կատարվել է 1173 թ. հետո, Մաղարդա Ս. Ստեփանոս վանքում։

Տաթևյան տալը հազարանոց պահոցներից ցիրուցան արված մագաղաթյա մատյանների միջից բացառիկ երջանիկ ճակատագիր ունեցավ Հայկազյա Ստեփանոս կրոնավորի ավետարանը։ Ոչինչ չկորցնելով՝ նա շահեց 6-րդ դարի մի հոշոտեղած ավետարանից երկու նկարազարդ թանկագին մատուցներ և դրանք ամրացնելով՝ մղխընվեց դարերի խորքը, զգեստավորվեց նախորդի բախտիկ փնակված մի ավետարանի փողոկոյա կազմով, որը նույնպես 6-րդ դարից է։ Ծորե ութ դար՝ 774 տարի, այսպատանց Մայր Արաքսի ափին ծխաբած Ծամրի ձորի Մաղարդա Ս. Ստեփանոս Նախավկայի վանքում։ 1847 թ. Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի կոնգրակով տեղափոխվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մատենադարան։ Չնազիրն այսօր գտնվում է մալրաքաղաք Երևա-

⁴² Մատենադարան, ձեռ. № 2874, էջ 8բ։

⁴³ Նույն տեղում, էջ 9ա։

նում, մեծն Մեսրոպ Մաշտոցի անունը կրող Մատենադարանում:

Ահա այստեղ Էջմիածնի ավետարանը բոլորում է իր հազարամյակը: Այսօր էլ այնքան ամուր է նրա ազնիվ մագաղաթը, այնքան հստակ ու հաստատ են նստած նրա վրա հայկական՝ երկաթագիրն ու հայրենի գույները, որ այն փողոսկրյա հաստաքետ կազմով նորանոր հազարամյակներ կթափի իր փառավոր ժողովրդի հետ:

Էջմիածնի ավետարանը մեզ համար նախ և առաջ բացահայտում է մշակութային առաջնակարգ մի կենտրոն, որ ստեղծվել է Սյունիքում տասներորդ դարում և գործակցել ու շարունակությունն է դարձել Սևանա կղզու և Տաթևի վանքի մշակութային գործնդել կենտրոնների, որոնք տեղեկվել ու հզորացել էին հայ իշխանական տների բարձրաստիճան հոգևորականների ջանքերով, որոնցում ուսմամբ, գիտությամբ ու գրչությամբ արվեստով էին զբաղվում. բազմաթիվ և բազմաթերուն ապաստվորներ:

Մաշտոց Եղվարդեցի վարդապետը Սեվանա կղզին վերածում է ճգնարանի, հիմնում է ուսումնարան, մատենադարան՝ «ստանալով զբազմություն գրոց սրբոց, զի լուսաւոր եղիցի աչք ոգոց»⁴⁴: Սևանի մատենադարանը, որի գոյության մասին տեղեկություն ունենք հիմնադրող դարից, հարստանում է առավելապես սուրբ գրքերի ընդօրինակությամբ՝ Մաշտոց Եղվարդեցու դարոցի սաների ջանքերով: Այդ ժամանակներից Սևանից մեզ ձեռագիր չի հասել, նույնիսկ Մաշտոցի խմբագրած «Մաշտոց» ժողովածուն մեզ է հասել նրա սան և կենսագիր Ստեփանոսի

ընդօրինակությամբ կատարված արտագրությամբ⁴⁵:

Տաթևում նույնպես շատ ձեռագրեր են ընդօրինակվել տեղի նշանավոր գրիչների և լաղկողների ջանքերով, բայց ադոնեղից այդ ժամանակներից էլ մեզ ձեռագիր չի հասել: Նորավանքից մեզ է հասել մի փառահեղ ձեռագիր, որը ոչ միայն տեղի, այլ նաև իրեն հավորող և ժամանակակից գրչության կենտրոնների բարձր մակարդակի վկայությունն է: Անկասկած Նորավանքն էլ ունեցել է Սևանի և Տաթևի վանքերի նման իր մատենադարանը, քանի որ, ինչպես միջնադարյան առածն է ասում, «Դպրոցը կամ վանքը մարդկային մտածումի մարտկոցն է, իսկ մատենադարանը՝ նրա զինարանը»: Որ հղենո Նորավանքն ունեցել է մատենադարան, մեզ հուշում է Էջմիածնի ավետարանի գրիչ Հովհաննեսը՝ գրելով, որ ինքը ձեռագիրն ընդօրինակել է ստույգ և հին օրինակներից: Իսկ այս վկայությունը ենթադրում է ձեռագրական հավաքածու, այսինքն՝ մատենադարան, որտեղից կարելի էր ընտրել ստույգ և հին օրինակներ:

Մտենայն հավանականությամբ այս մատենադարաններում են պահվել նաև փղոսկրյա կազմով առաջին անգամ կազմված ավետարանը, որից փրկվել է միայն կազմը, ինչպես նաև այն ավետարանը, որից փրկվել են նկարազարդ երկու թերթերը: Այս մատուցների փրկության մեծագույն ծառայությունը պատկանում է Էջմիածնի ավետարանին, որով այն դառնում է «եռամեծ», մատուցներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձնակի տեղը հայ ձեռագրական մշակույթի արքայան սահարում:

Էջմիածինն ու իր ավետարանը ամրապնդում են մեր հպարտությունն ու հավատը հայրենից, ժառանգությունն ստացած «մեր ազգային ամենամեծ հարատույթան» նկատմամբ՝ հավիտյան հավիտենից:

⁴⁵ Մատենադարան, ձեռ. № 970:

⁴⁴ Ստ. Ասողիկ, Պատմություն Տիգրեական, Ս. Գեորգիոս, 1895, էջ 146:



«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(ФЕВРАЛЬ—МАРТ 1990 г.)

1. Поздравительная телеграмма Католикоса всех армян Вазгена I Михаилу Горбачёву по случаю избрания президентом СССР, 19 марта 1990 г. (стр. 3).
2. Поздравительная телеграмма Католикоса всех армян Вазгена I Анатолию Лукьянову по случаю избрания председателем Верховного Совета СССР, 19 марта 1990 г. (стр. 4).
3. Сообщение Канцелярии Эчмиадзинского Католикосата. О переоткрытии армянских монастырей и церквей в Армении и Арцахе в период 1988—1989 гг., 28 февраля 1990 г. (стр. 5—6).
4. Кончина Патриарха Армянской Церкви в Иерусалиме архиепископа Егише Тертерьяна (стр. 7—11).
5. Кончина Патриарха Армянской Церкви в Турции архиепископа Шнорка Галустяна (стр. 12—20).
6. Торжество св. Врданидов и годовщина тезоименитства Католикоса всех армян Вазгена I в Первопрестольном Эчмиадзине, 22 февраля 1990 г. (стр. 21—28).
7. Залог исторического поворота (Описание церемонии закладки церкви Св. Григория Просветителя, будучи построенная в г. Ереване), 31 марта 1990 г. (стр. 29—35).
8. Новая сфера деятельности Армянской Апостольской Церкви (О преподавании религиозных дисциплин в высших и общеобразовательных учебных заведениях Армении)—(стр. 36—43).
9. Священническое рукоположение в церкви Св. Саркиса в Ереване, 10 сентября 1989 г. Также помещены биографии священника Ованна Матевосяна и иеромонаха Тадеоса Зирекяна (стр. 44—47).
10. Священническое рукоположение в церкви Св. Саркиса в Ереване, 18 февраля 1990 г. Также помещены биография священников Зарэ Мансуряна и Тирана Арушаняна (стр. 48—50).
11. Церковная хроника Первопрестольного Эчмиадзина за февраль—март месяцы (стр. 51—52).
12. Верховный архимандрит Акоп Ганджян—Основные записи Мартина Лютера о благоустройстве Церкви (исследование)—(стр. 53—64).
13. Священник Нерсес Нерсисян, доктор—Ряд речей апостола Св. Петра в «Деяниях Апостолов» (исследование)—(стр. 65—73).
14. Арташес Матевосян—Эчмиадзинское евангелие (продолжение исследования, начало в первом номере журнала «Эчмиадзин» за 1990 г.)—(стр. 74—78).



"ETCHMIADZIN"
OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
(FEBRUARY—MARCH 1990)

1. The congratulatory cable of His Holiness Vasken I, the Catholicos of All Armenians, to Mikhail Gorbachev, on the occasion of his election as president of U. S. S. R., 19-th March 1990 (p. 3).

2. The congratulatory cable of His Holiness to Anatoly Lookianov, on the occasion of his election as president of U. S. S. R.'s Soviet Supreme Council, 19-th March 1990 (p. 4).

3. Communiqué of Holy See's Chancellory about the reopened monasteries and churches in Armenia and Artzakh during the years 1988—1989, 28-th February 1990 (pp. 5—6).

4. The death of Archbishop Yeghisheh Terterian, the Patriarch of the Armenians of Jerusalem (pp. 7—11).

5. The death of Archbishop Shenorhk Galoos-tian, the Patriarch of the Armenians of Turkey (pp. 12—20).

6. The commemoration of the feast of St. Vardan in the Holy See, 22-nd February 1990 (pp. 21—28).

7. The testimony of history's conversion (description of the ceremony devoted to the foundation in Yerevan of Saint Gregory Illuminator's cathedral), 21-st March 1990 (pp. 29—35).

8. New sphere of activity for the Armenian

Apostolic Church (about the teaching of religious lessons in the public schools and high grade establishments of Armenia)—(pp. 36—43).

9. Sacerdotal ordination in the Saint Sarkis church of Yerevan, 10-th September 1989. There are also the biographies of Father Hovnan Mathevossian and Reverend Thadevos Zirekian (pp. 44—47).


10. Sacerdotal ordination in the Saint Sarkis church of Yerevan, 18-th February 1990. There are also the biographies of Father Zareh Mansoorian and Father Tiran Arooshanian (pp. 48—50).

11. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and descriptions of the church festivities in the Holy See during the months of February—March (pp. 51—52).

12. Reverend Hagop Gelendjian—The principal writings of Martin Luther about the reforms of the church (study)—(pp. 53—64).

13. Father Nerses Nersessian (Doctor of Theology)—The series of St. Peter Apostle's discourses in the «Acts of Apostles» (study)—(pp. 65—73).

14. Artashes Mathevossian—The Gospel of Etchmiadzin (study)—(continuation of the article published in the monthly «Etchmiadzin», No. A, 1990)—(pp. 74—78).



„ETCHMIADZINE“
ORGANE OFFICIEL DU SAINT-SIÈGE D'ETCHMIADZINE
(FÉVRIER—MARS 1990)

1. Télégramme de félicitation de Sa Sainteté Vasken Ier adressé le 19 mars 1990 à Monsieur Mikhaïl Gorbatchev à l'occasion de son élection au poste de président de l'U. R. S. S. (p. 3).

2. Télégramme de félicitation de Sa Sainteté adressé le 19 mars 1990 à Monsieur Anatoly Loukianov à l'occasion de son élection au poste de président du Présidium du Soviet Suprême de l'U. R. S. S. (p. 4).

3. Communiqué de la Chancellerie du Saint-Siège d'Etchmiadzine concernant la réouverture aux cultes des églises et des monastères d'Arménie et d'Artsakh au cours des années 1988—1989 (pp. 5—6).

4. Décès de l'archevêque Yéghiché Tertérian, patriarche des Arméniens de Jérusalem (pp. 7—11).

5. Décès de l'archevêque Chenorkh Galoustian, patriarche des Arméniens de Turquie (pp. 12—20).

6. Commémoration de la fête de St. Vartan au Saint-Siège d'Etchmiadzine (22 février 1990)—(pp. 21—28).

7. «Témoignage du revirement de l'histoire» (description de la cérémonie consacrée à Erévan à la fondation de la cathédrale St. Grégoire l'Illuminateur)—(pp. 29—35).

8. Une nouvelle sphère d'activité pour l'Eglise

apostolique arménienne (l'enseignement des matières religieuses en Arménie dans les écoles secondaires et les établissements supérieurs)—(pp. 36—43).

9. Ordination sacerdotale dans l'église St. Sarkis à Erévan (10 septembre 1989). Biographies des Pères Hovnan Mathévossian et Thadévos Zirékian (pp. 44—47).

10. Ordination sacerdotale dans l'église St. Sarkis à Erévan (18 février 1990). Biographies des Pères Zareh Mansourian et Tiran Arouchanian (pp. 48—50).

11. Brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours des mois février-mars 1990 (pp. 51—52).

12. Père Hakob Guelendjian—«Les principaux ouvrages de Martin Luther sur la réforme de l'Eglise» (étude)—(pp. 53—64).

13. Père Nersès Nersessian (docteur en théologie)—«La série des discours de l'apôtre St. Pierre dans les Actes des Apôtres» (étude)—(pp. 65—73).

14. Artachès Mathévossian—«L'évangile d'Etchmiadzine (suite de l'article publié dans la revue «Etchmiadzine», No. A, 1990)—(pp. 74—78).